

ԱՄ Փարթնրոգ Զոնսալթինգ Բամփնի  
Ապրիլ 2011

# Կենսաթոշակային բարեփոխումների վերաբերյալ հանրային տեղեկացվածության ելակետային հետազոտություն, 2010թ.



ԱՄ Միջազգային Չարգացման  
Գործակալություն



Կենսաթոշակային եւ  
Աշխատանքի Շուկայի  
Բարեփոխումների Ծրագիր



ԱՄ Փարթնրոգ  
Զոնսալթինգ Բամփնի

**Բովանդակություն**

<b>1</b>	<b>ՆԱԽԱԲԱՆ</b> .....	<b>5</b>
1.1	ՅԵՏԱՉՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ .....	5
1.2	ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ .....	7
1.2.1	Յետազոտության իրականացման մեթոդը .....	7
1.2.2	Յետազոտության ընտրանքը .....	7
1.2.2.1	Ընտրանքի մեծությունը .....	7
1.2.2.2	Յետազոտության ընտրանքի աշխարհագրական բաշխվածքը .....	8
1.2.2.3	Հարցման մասնակիցների ընտրության եղանակը եւ նրանց բնութագիրը .....	10
1.2.3	Յետազոտության իրականացումը .....	12
<b>2</b>	<b>ԳՈՐԾՈՂ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ. ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ, ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐ</b> .....	<b>14</b>
2.1	ՀԱՆՐԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾՈՂ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ .....	14
2.1.1	Հանրության կողմից կենսաթոշակային համակարգի բնորոշումը .....	14
2.1.2	Հանրության տեղեկացվածությունը կենսաթոշակների ֆինանսավորման աղբյուրների եւ չափերի մասին .....	15
2.1.3	Հանրության տեղեկացվածությունը կենսաթոշակի կառուցվածքի եւ չափերի մասին .....	18
2.1.4	Հանրության տեղեկացվածությունը կենսաթոշակային տարիքի մասին .....	21
2.2	ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԳՈՐԾՈՂ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ .....	22
2.2.1	Հանրության պատկերացումները գործող կենսաթոշակային համակարգի խնդիրների վերաբերյալ .....	22
2.2.2	Հանրության կողմից կենսաթոշակի կարելիության ընկալումը .....	26
2.2.3	Հանրության պատկերացումները կենսաթոշակային տարիքում իրենց նյութական ապահովվածության պատասխանատուի վերաբերյալ .....	28
2.2.4	Հանրության պատկերացումները կենսաթոշակային տարիքում իրենց եկամուտների աղբյուրների վերաբերյալ .....	30
<b>3</b>	<b>ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԲԱՐԵՓՈՒՄՆԵՐ. ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ, ՎԵՐԱԲԵՐՄՈՒՄԸ, ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐ ԵՎ ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b> .....	<b>32</b>
3.1	ՀԱՆՐԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԲԱՐԵՓՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ .....	32
3.1.1	Հանրության ընդհանուր տեղեկացվածությունը սպասվող բարեփոխումների մասին .....	32
3.1.2	Կենսաթոշակային բարեփոխումների մասին հանրության տեղեկացվածության աղբյուրները .....	34
3.1.3	Հանրության տեղեկացվածությունը կուտակային կենսաթոշակային համակարգի մասին .....	36
3.1.4	Հանրության տեղեկացվածությունը կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման սկզբունքների մասին .....	39
3.1.5	Հանրության տեղեկացվածությունը կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման ժամկետների մասին .....	40
3.1.6	Հանրության տեղեկացվածությունը պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակիցների մասին .....	42
3.1.7	Հանրության տեղեկացվածությունը պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգում կուտակային միջոցների աղբյուրների մասին .....	44
3.2	ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՄԸ, ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐԸ ԵՎ ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԲԱՐԵՓՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ .....	46
3.2.1	Հանրության վերաբերմունքը կենսաթոշակային բարեփոխումների նկատմամբ .....	46
3.2.2	Հանրության վերաբերմունքը անհատական կենսաթոշակային հաշվին կուտակվող վճարների չափի նկատմամբ .....	49
3.2.3	Հանրության սպասելիքները եւ մտահոգությունները կապված կենսաթոշակային բարեփոխումների հետ .....	50

3.2.3.1	Հանրության սպասելիքները կապված կենսաթոշակային բարեփոխումների հետ.....	50
3.2.3.2	Հանրության մտահոգությունները կապված կենսաթոշակային բարեփոխումների հետ .....	52
3.2.4	Կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգին միանալու հանրության պատրաստակամությունը.....	54
<b>4</b>	<b>ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՆԿԱՏԱՍԱՐ ...</b>	<b>58</b>
<b>5</b>	<b>ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ .....</b>	<b>62</b>
5.1	ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԿՈՐՄԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԵՏԵՎԵԼԸ.....	62
5.2	ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԿՈՐՄԻՑ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՄՊԱՌՈՒՄԸ.....	63
5.2.1	Հանրության կողմից տեղեկատվություն ստացման աղբյուրները .....	63
5.2.2	Հանրության նախընտրելի ՉԼՄ-ները. հաճախականություն եւ վստահություն.....	65
5.2.2.1	Հեռուստատալիքներ.....	65
5.2.2.2	Թերթեր.....	67
5.2.2.3	Ինտերնետային կայքեր.....	68
5.2.2.4	Ռադիոյի ալիքներ .....	70
5.2.3	Կենսաթոշակային բարեփոխումների վերաբերյալ տեղեկությունների ստացման նախընտրելի ձևաչափերը.....	70
<b>6</b>	<b>ԱՍՓՈՓՈՒՄ.....</b>	<b>73</b>
6.1	ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ.....	73
6.2	ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	77
<b>7</b>	<b>ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ .....</b>	<b>79</b>
7.1	ՀԱՎԵԼՎԱԾ 1.....	79
7.2	ՀԱՎԵԼՎԱԾ 2.....	82

### Աղյուսակների ցանկ

Աղյուսակ 1 - Հետազոտության ընտրանքի հաշվարկման բանաձևերը .....	8
Աղյուսակ 2 - Հետազոտության ընտրանքի բաշխվածքն ըստ բնակավայրերի տիպերի.....	8
Աղյուսակ 3 - Հետազոտության ընտրանքի բաշխվածքն ըստ Երեւանի վարչական տարածքների .....	8
Աղյուսակ 4 - Հետազոտության ընտրանքի բաշխվածքն ըստ բնակավայրերի .....	9
Աղյուսակ 5 - Գործատուների եւ վարձու աշխատողների սոցիալական վճարների չափերը .....	16
Աղյուսակ 6 - Հանրության տեղեկացվածությունը սոցիալական վճարների չափի մասին (ա).....	17
Աղյուսակ 7 - Հանրության տեղեկացվածությունը սոցիալական վճարների չափի մասին (բ).....	18
Աղյուսակ 8 - Հանրության տեղեկացվածությունը սոցիալական վճարների չափի մասին (գ) .....	18
Աղյուսակ 9 - Կենսաթոշակի հաշվարկման բանաձևերը.....	19
Աղյուսակ 10 - Հանրության տեղեկացվածությունը բազային կենսաթոշակի չափի մասին .....	20
Աղյուսակ 11 - Հանրության տեղեկացվածությունը աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքի մասին.....	20
Աղյուսակ 12 - Հանրության տեղեկացվածությունը կենսաթոշակային տարիքի մասին .....	21
Աղյուսակ 13 - Հանրության պատկերացումները գործող կենսաթոշակային համակարգի խնդիրների վերաբերյալ .....	22
Աղյուսակ 14 - Կենսաթոշակային համակարգի գլխավոր խնդիրներն ըստ հարցման մասնակիցների սեռատարիքային եւ կրթական խմբերի .....	23
Աղյուսակ 15 - Կենսաթոշակային համակարգի գլխավոր խնդիրներն ըստ հարցման մասնակիցների սեռատարիքային եւ կրթական խմբերի .....	24
Աղյուսակ 16 - Հանրության առաջարկները գործող կենսաթոշակային համակարգի խնդիրների լուծման վերաբերյալ .....	25
Աղյուսակ 17 - Հանրության տարբեր խմբերի մտահոգվածությունը կենսաթոշակի հետ կապված հարցերով.....	27
Աղյուսակ 18 - Հանրության տարբեր խմբերի պատկերացումները կենսաթոշակային տարիքում իրենց եկամուտների աղբյուրների վերաբերյալ .....	31
Աղյուսակ 19 - Կենսաթոշակային բարեփոխումների մասին հանրության տարբեր խմբերի տեղեկացվածության աղբյուրները ..	35
Աղյուսակ 20 - Կուտակային կենսաթոշակային համակարգի վերաբերյալ հանրության տարբեր խմբերի ընկալումները .....	37
Աղյուսակ 21 - Հանրության տարբեր խմբերի տեղեկացվածությունը նոր կենսաթոշակային համակարգի ներդրման սկզբունքների մասին .....	39

Աղյուսակ 22 - Հանրության տարբեր խմբերի տեղեկացվածությունը նոր կենսաթոշակային համակարգի ներդրման ժամկետների մասին .....	41
Աղյուսակ 23 - Հանրության տարբեր խմբերի տեղեկացվածությունը պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակիցների մասին .....	43
Աղյուսակ 24 - Հանրության տարբեր խմբերի տեղեկացվածությունը պարտադիր կուտակային կենսաթոշակային ֆոնդի ձեւավորման աղբյուրների մասին .....	45
Աղյուսակ 25 - Հանրության տարբեր խմբերի վերաբերմունքը կենսաթոշակային բարեփոխումների նկատմամբ .....	48
Աղյուսակ 26 - Հանրության տարբեր խմբերի սպասելիքները կապված կենսաթոշակային բարեփոխումների հետ .....	51
Աղյուսակ 27 - Հանրության տարբեր խմբերի մտահոգությունները կապված կենսաթոշակային բարեփոխումների հետ .....	53
Աղյուսակ 28 - Հանրության տարբեր խմբերի կողմից դրամական խնայողություններ կատարելը .....	56
Աղյուսակ 29 - Պետական եւ ֆինանսական կառույցների նկատմամբ հանրության տարբեր խմբերի վստահության համեմատական վարկանիշերը .....	61
Աղյուսակ 30 - Հանրության կողմից առավել շատ օգտագործվող հեռուստաալիքների օգտագործման ինտենսիվությունը համեմատած վստահության մակարդակի հետ .....	66
Աղյուսակ 31 - Հանրության կողմից առավել շատ օգտագործվող թերթերի օգտագործման ինտենսիվությունը համեմատած վստահության մակարդակի հետ .....	68
Աղյուսակ 32 - Հանրության կողմից առավել շատ օգտագործվող ինտերնետային կայքերի օգտագործման ինտենսիվությունը համեմատած վստահության մակարդակի հետ .....	69
Աղյուսակ 33 - Հանրության կողմից առավել շատ օգտագործվող ռադիոյի ալիքների օգտագործման ինտենսիվությունը համեմատած վստահության մակարդակի հետ .....	70
Աղյուսակ 34 - Հանրության տարբեր խմբերի կողմից կենսաթոշակային բարեփոխումների վերաբերյալ տեղեկությունների ստացման նախընտրելի ձեւաչափերը .....	72
Աղյուսակ 35 - Կենսաթոշակի հետ կապված հարցերով մտահոգված մարդկանց վերաբերմունքը կենսաթոշակային բարեփոխումների նկատմամբ .....	79
Աղյուսակ 36 - Կենսաթոշակային տարիքում իրենց նյութական ապահովվածության պատասխանատուի վերաբերյալ տարբեր կարծիք ունեցող մարդկանց վերաբերմունքը կենսաթոշակային բարեփոխումների նկատմամբ .....	80
Աղյուսակ 37 - Կուտակային կենսաթոշակային համակարգի մասին տեղյակ մարդկանց վերաբերմունքը կենսաթոշակային բարեփոխումների նկատմամբ .....	81
Աղյուսակ 38 - Կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգին միանալու պատրաստակամությունը տարբեր եկամուտների մակարդակ ունեցող տնտեսությունների ներկայացուցիչների շրջանում .....	82
Աղյուսակ 39 - Կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգին միանալու պատրաստակամությունը այն մարդկանց շրջանում, ովքեր արտահայտվել են կենսաթոշակի հետ կապված հարցերով իրենց մտահոգությունների մասին .....	83
Աղյուսակ 40 - Կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգին միանալու պատրաստակամությունը այն մարդկանց շրջանում, ովքեր մտահոգված են կենսաթոշակի հետ կապված հարցերով .....	84
Աղյուսակ 41 - Կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգին միանալու պատրաստակամությունը այն մարդկանց շրջանում, ովքեր արտահայտվել են կենսաթոշակային տարիքում իրենց նյութական ապահովվածության պատասխանատուի վերաբերյալ .....	85
Աղյուսակ 42 - Կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգին միանալու պատրաստակամությունը այն մարդկանց շրջանում, ովքեր կողմ են կամ դեմ են կենսաթոշակային համակարգի բարեփոխումներին .....	86

## Նկարների ցանկ

Նկար 1 - Հետազոտության աշխարհագրական ծածկույթը .....	10
Նկար 2 - Հարցման մասնակիցների հիմնական բնորոշիչները .....	10
Նկար 3 - Հանրության կողմից կենսաթոշակային համակարգի բնորոշումը .....	14
Նկար 4 - Հանրության տեղեկացվածությունը կենսաթոշակների ֆինանսավորման աղբյուրների մասին .....	15
Նկար 5 - Հանրության տեղեկացվածությունը կենսաթոշակների բաղադրիչների մասին .....	19
Նկար 6 - Հանրության տեղեկացվածությունը բազային կենսաթոշակի չափի եւ ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքի մասին .....	20
Նկար 7 - Հանրության տեղեկացվածությունը բազային կենսաթոշակը եւ ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքը սահմանող պետական մարմնի մասին .....	21
Նկար 8 - Հանրության մտահոգվածությունը կենսաթոշակի հետ կապված հարցերով .....	26
Նկար 9 - Հանրության պատկերացումները կենսաթոշակային տարիքում իրենց նյութական ապահովվածության պատասխանատուի վերաբերյալ .....	28
Նկար 10 - Հանրության տարբեր խմբերի պատկերացումները կենսաթոշակային տարիքում իրենց նյութական ապահովվածության պատասխանատուի վերաբերյալ .....	29
Նկար 11 - Հանրության պատկերացումները կենսաթոշակային տարիքում եկամուտների աղբյուրների վերաբերյալ .....	30
Նկար 12 - Հանրության տեղեկացվածությունը կենսաթոշակային բարեփոխումների մասին .....	32
Նկար 13 - Հանրության տարբեր խմբերի տեղեկացվածությունը կենսաթոշակային բարեփոխումների մասին .....	33
Նկար 14 - Կենսաթոշակային բարեփոխումների մասին հանրության տեղեկացվածության աղբյուրները .....	34
Նկար 15 - Հանրության տեղեկացվածությունը կուտակային կենսաթոշակային համակարգի մասին .....	36
Նկար 16 - Հանրության տարբեր խմբերի տեղեկացվածությունը կուտակային կենսաթոշակային համակարգի մասին .....	36
Նկար 17 - Կուտակային կենսաթոշակային համակարգի վերաբերյալ հանրության ընկալումները .....	37

Սկար 18 - Հանրության տեղեկացվածությունը նոր կենսաթոշակային համակարգի ներդրման սկզբունքների մասին .....	39
Սկար 19 - Հանրության տեղեկացվածությունը նոր կենսաթոշակային համակարգի ներդրման ժամկետների մասին .....	41
Սկար 20 - Հանրության տեղեկացվածությունը պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակիցների մասին .....	43
Սկար 21 - Հանրության տեղեկացվածությունը պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգում կուտակային միջոցների աղբյուրների մասին.....	45
Սկար 22 - Հանրության վերաբերմունքը կենսաթոշակային բարեփոխումների նկատմամբ .....	47
Սկար 23 - Հանրության վերաբերմունքը անհատական կենսաթոշակային հաշվին կուտակվող վճարների չափերի նկատմամբ .....	49
Սկար 24 - Հանրության սպասելիքները կապված կենսաթոշակային բարեփոխումների հետ .....	51
Սկար 25 - Հանրության մտահոգությունները կապված կենսաթոշակային բարեփոխումների հետ .....	52
Սկար 26 - Կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգին միանալու հանրության պատրաստակամությունը.....	54
Սկար 27 - Կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգին միանալու հանրության տարբեր խմբերի պատրաստակամությունը .....	55
Սկար 28 - Հանրության վստահությունը պետական եւ ֆինանսական կառույցների նկատմամբ .....	58
Սկար 29 - Պետական եւ ֆինանսական կառույցների նկատմամբ հանրային վստահության համեմատական վարկանիշերը .....	60
Սկար 30 - Հանրության կողմից ֆինանսական շուկայի նորություններին հետեւելը .....	62
Սկար 31 - Հանրության կողմից տեղեկատվության ստացման աղբյուրներն ըստ տեղեկությունների թեմատիկ ուղղությունների.....	64
Սկար 32 - Հանրության կողմից առավել շատ օգտագործվող հեռուստաալիքները եւ դրանց օգտագործման հաճախականությունը .....	65
Սկար 33 - Հանրության կողմից առավել շատ օգտագործվող հեռուստաալիքների նկատմամբ վստահության մակարդակը .....	66
Սկար 34 - Հանրության կողմից առավել շատ օգտագործվող թերթերը եւ դրանց օգտագործման հաճախականությունը.....	67
Սկար 35 - Հանրության կողմից առավել շատ օգտագործվող թերթերի նկատմամբ վստահության մակարդակը .....	68
Սկար 36 - Հանրության կողմից առավել շատ օգտագործվող ինտերնետային կայքերը եւ դրանց օգտագործման հաճախականությունը .....	69
Սկար 37 - Հանրության կողմից առավել շատ օգտագործվող ինտերնետային կայքերի նկատմամբ վստահության մակարդակը .....	69
Սկար 38 - Հանրության կողմից առավել շատ օգտագործվող ռադիոյի ալիքները եւ դրանց օգտագործման հաճախականությունը .....	70
Սկար 39 - Հանրության կողմից առավել շատ օգտագործվող ռադիոյի ալիքների նկատմամբ վստահության մակարդակը .....	70
Սկար 40 - Հանրության կողմից կենսաթոշակային բարեփոխումների վերաբերյալ տեղեկությունների ստացման նախընտրելի ձեւաչափերը.....	71

## 1 ՆԱԽԱԲԱՆ

«Կենսաթոշակային բարեփոխումների վերաբերյալ հանրային տեղեկացվածության ելակետային հետազոտություն» (այսուհետ՝ հետազոտություն) իրականացվել է ԱՄՆ Միջազգային Չարգացման Գործակալության (այսուհետ՝ ԱՄՆ ՄՉԳ) կողմից ֆինանսավորվող «Կենսաթոշակային եւ Աշխատանքի Շուկայի Բարեփոխումների» Ծրագրի<sup>1</sup> (այսուհետ՝ ԿԱԲ Ծրագիր) շրջանակներում: Պատվիրատուն է՝ **Deloitte Consulting LLP**, որը հանդիսանում է ԿԱԲ Ծրագրի իրականացողը: Հետազոտությունն իրականացվել է «ԱՄ Փարթնըրզ Զոնասայթինգ Զամփին» ՍՊԸ-նը<sup>2</sup> կողմից՝ 2010 հոկտեմբեր - 2011 մարտ ժամանակահատվածում:

### 1.1 ՀԵՏԱՉՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Ներկայումս Հայաստանում գործում է «սերունդների համերաշխության» սկզբունքի վրա հիմնված բաշխողական կենսաթոշակային համակարգ, որի պայմաններում ներկայիս աշխատողները (կենսաթոշակային համակարգին վճարումներ կատարողները) ֆինանսավորում են ներկայիս կենսաթոշակառուների կենսաթոշակները: Գործող կենսաթոշակային համակարգը ֆինանսավորվում է զբաղված քաղաքացիների (աշխատողների) եւ նրանց գործատուների ընթացիկ մուծումների (սոցիալական վճարների) հաշվին:

Չնայած այն հանգամանքին, որ պետության կողմից սոցիալական ոլորտին ուղղված ծախսերի առյուծի բաժինն<sup>3</sup> ուղղվում է կենսաթոշակների ֆինանսավորմանը, այդուհանդերձ գործող կենսաթոշակային համակարգը չի ապահովում համարժեք կենսաթոշակներ: Խաթարվել է սերունդների համերաշխության սկզբունքը: Համակարգին կատարած վճարումների եւ սպասվելիք կենսաթոշակի չափի միջեւ կապի բացակայությունը ավելի շուտ առաջացրել է սոցիալական վճարներ կատարելու հակախթաններ.

- Մի կողմից՝ աշխատողները խուսափում են սոցիալական վճարներ կատարել մի համակարգի, որն ի վիճակի չէ ապահովել աղքատության սահմանագծից բարձր կենսաթոշակ: Մյուս կողմից աշխատողները գիտակցում են, որ իրենց ապագա կենսաթոշակը ոչ մի կերպ կախված չէ իրենց կատարած սոցիալական վճարների չափից:
- Գործատուները եւս խուսափում են սոցիալական վճարներ կատարելուց՝ օգտվելով հարկային վարչարարության թերություններից եւ ձգտելով նվազեցնել իրենց ծախսերը: Դա նրանք անում են իրենց աշխատողների իրական քանակը թաքցնելու (ոչ ֆորմալ զբաղվածություն) կամ աշխատողներին վճարված աշխատավարձերը ցածր ցույց տալու միջոցով:

Սոցվճարներ կատարելու տեսանկյունից ոչ ֆորմալ են նաեւ գյուղացիական տնտեսություններում զբաղվածները, որոնք օրենքով ազատված են սոցիալական վճարներ կատարելու պարտականությունից:

Կենսաթոշակային համակարգի ֆինանսական կայունության խնդիրն արդիական է եւ պայմանավորված է այնպիսի գործոնների առկայությամբ ինչպիսիք են.

- սոցիալական վճարների թերհավաքագրումը,
- սոցիալական վճարումներ կատարողների թվաքանակի թերհաշվառումը,

<sup>1</sup> [www.plm.am](http://www.plm.am)

<sup>2</sup> [www.ampartners.am](http://www.ampartners.am)

<sup>3</sup> Սոցիալական ապահովության ոլորտին հատկացումները 2010թ.-ին կազմել են պետական բյուջեի ծախսերի 28.5%-ը եւ ՀՆԱ-ի 7.0%-ը: Սոցիալական ապահովության ծախսերի 73.4%-ը կազմել են կենսաթոշակների վճարմանն ուղղված միջոցները: Աղբյուրներ՝ ա) «ՀՀ Սոցիալ-տնտեսական վիճակը 2010թ. հունվար-դեկտեմբերին», ԱՎԾ, 2011թ. եւ բ) «2010թ.-ի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք (10.12.2009թ. թիվ ՀՕ-225-Ն)

- կենսաթոշակառուների թվաքանակի ավելացումը՝ պայմանավորված ժողովրդագրական մի շարք գործոններով.
- կենսաթոշակների չափի ավելացում՝ պայմանավորված կենսաթոշակների ինդեքսավորմամբ<sup>4</sup>:

Այսպիսով՝ կարելի է արձանագրել, որ գործող բաշխողական կենսաթոշակային համակարգը կանգնած է բնակչության ժողովրդագրական հիմնախնդիրներով, ոչ ֆորմալ տնտեսության առկայությամբ եւ բնակչության եկամուտների աճն ապահովելու անհրաժեշտությամբ պայմանավորված մարտահրավերների առջեւ:

Նշված մարտահրավերներին դիմագրավելու եւ կենսաթոշակային համակարգի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ՀՀ Կառավարությունը նախաձեռնել է կենսաթոշակային բարեփոխումներ՝ միտված համակարգի առաջ կանգնած խնդիրների լուծմանը, այն է՝ կենսաթոշակառուների համար համարժեք կենսաթոշակների եւ կենսաթոշակային համակարգի ֆինանսական կայունության ապահովում: ՀՀ Ազգային ժողովի կողմից 22.12.2010թ.-ին ընդունվել է կենսաթոշակային բարեփոխումների օրենքների փաթեթ: Բարեփոխումների արդյունքում անցում է կատարվելու *բազմաստիճան կենսաթոշակային համակարգի*: Վերջինս դեպքում կպահպանվի բաշխողական համակարգի կիրառությունը, սակայն կներդրվի նաեւ *կուտակային կենսաթոշակային համակարգ*: Կուտակային կենսաթոշակային համակարգը գործելու է կամավորության եւ պարտադիր սկզբունքով: 2011թ. հունվարից արդեն գործում է *կամավոր կենսաթոշակային համակարգը*, իսկ 2014թ.-ից իր մեկնարկը կսկսի *պարտադիր կենսաթոշակային համակարգը*:

Բարեփոխումների գործընթացն արդեն իսկ ընթացքի մեջ է: Սակայն այն մասնագետների, տարբեր քաղաքական ուժերի եւ ընդհանրապես հանրության շրջանում չունի միարժեք ընկալում: Կան բարեփոխումների իրականացմանը կողմ եւ դեմ կարծիքներ, որոնք ունեն որոշակի հիմնավորումներ: Հանրային ընդգրկում ունեցող գործընթացի արդյունքում հնարավոր սոցիալական լարվածությունը եւ դժգոհությունների ալիքը մեղմելու համար կենսաթոշակային բարեփոխումները պետք է ուղեկցվեն բացատրական եւ լուսաբանման աշխատանքներով, տեղեկատվական արշավներով: Այդ պատճառով բարեփոխումների իրականացման մեջ շահագրգիռ բոլոր կառույցները կարիք ունեն հստակ տեղեկատվության, թե *ինչպիսին՞ է հանրության տեղեկացվածությունը եւ վերաբերմունքը գործող կենսաթոշակային համակարգի եւ իրականացվող բարեփոխումների մասին/նկատմամբ*: Հարցի պատասխանը ստանալու, հանրային իրազեկման աշխատանքներն առավել արդյունավետ եւ նպատակային կազմակերպելու նպատակով ԱՄՆ ՄՉԳ ԿԱԲ Ծրագիրը նախաձեռնել սույն հետազոտության իրականացումը: Հետազոտության արդյունքների հիման վրա նախատեսվում է իրականացնել արդյունավետ տեղեկատվական արշավ՝ բարձրացնելու հասարակության իրազեկվածության աստիճանը նշված բարեփոխումների վերաբերյալ, ձեւավորելու դրական վերաբերմունք, ապահովել բարեփոխումների իրականացման սահուն ընթացքը:

Հետազոտության նպատակից բխող խնդիրներն են՝

- բացահայտել գործող կենսաթոշակային համակարգի վերաբերյալ հանրության տեղեկացվածության աստիճանը եւ վերաբերմունքը,
- պարզել հանրության տեղեկացվածությունը, դիրքորոշումները եւ սպասելիքները կենսաթոշակային բարեփոխումների վերաբերյալ,
- հավաքել կարծիքներ պետական եւ ֆինանսական կառույցների գործունեության վերաբերյալ հանրության վստահության մասին,
- բացահայտել հանրության կողմից տեղեկատվության սպառման հիմնական աղբյուրները եւ գնահատել դրանց նկատմամբ վստահությունը:

<sup>4</sup> Ինֆլյացիայի բարձր տեմպերը Կառավարությանը ստիպելու են ժամանակ առ ժամանակ իրականացնել կենսաթոշակների դրական ինդեքսավորում

## 1.2 ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

### 1.2.1 Հետազոտության իրականացման մեթոդը

Հետազոտության իրականացման համար ընտրվել է զանգվածային հարցման մեթոդը: Հետազոտության խնդիրների լուծման տեսանկյունից առավել արդյունավետ է համարվել միայն քանակական հետազոտության մեթոդաբանության կիրառումը, քանի որ խնդիր կար կարճ ժամանակահատվածում ստանալ գլխավոր համախմբության մասին լիարժեք պատկերացումներ ու ներկայացուցչական տվյալներ:

Հետազոտության իրականացման գործիք է ծառայել *ստանդարտացված հարցաթերթը*: Ելնելով հետազոտության խնդիրների յուրահատկություններից, հարցաթերթում տեղ են գտել թե՛ փակ եւ թե՛ բաց հարցեր: Վերջիններս թույլ են տվել լրացնելու որակական տեղեկությունների պակասը եւ հավաքելու բովանդակային հարուստ նյութ: Այս մոտեցման արդյունքում հնարավոր է եղել քանակական հետազոտության արդյունքները համալրել գործող կենսաթոշակային համակարգի եւ սպասվող բարեփոխումների վերաբերյալ հասարակության վերաբերմունքի, պատկերացումների եւ տեղեկացվածության մասին նկարագրական տվյալներով:

Հարցաթերթը բաղկացած է 47 հարցերից, որոնք բաժանվում են հետեւյալ 5 թեմատիկ բաժինների մեջ.

- հանրության տեղեկացվածությունը, պատկերացումները եւ դիրքորոշումները գործող կենսաթոշակային համակարգի մասին/վերաբերյալ,
- հանրության տեղեկացվածությունը, վերաբերմունքը, սպասելիքները եւ մտահոգությունները կենսաթոշակային բարեփոխումների վերաբերյալ,
- հանրության վստահությունը պետական եւ ֆինանսական կառույցների նկատմամբ,
- տեղեկատվության ստացման աղբյուրները, դրանց նկատմամբ հանրային վստահությունը եւ հետաքրքրությունը,
- հետազոտվող համախմբության ժողովրդագրական բնութագիրը:

Հարցաթերթը մշակվել է «ԱՄ Փարթնըրզ Քոնսալթինգ Քամփնի»-ի կողմից՝ ԿԱԲ Ծրագրի եւ այլ շահագրգիռ կառույցների ներկայացուցիչների ակտիվ եւ կառուցողական մասնակցությամբ: Պարբերաբար կրկնվող հանդիպումների եւ քննարկումների արդյունքում ձեւավորվել են հարցաթերթի բովանդակության հետ կապված առաջարկություններ, որոնք առավելագույնս արտացոլվել են հարցաթերթի վերջնական տարբերակում: 2010թ.-ի դեկտեմբերի սկզբին 16 մարդկանց շրջանում իրականացվել է փորձնական հարցում՝ պարզելու համար, թե արդյո՞ք հարցերի ձեւակերպումները հստակ են եւ մեկնաբանելի, տրամաբանորեն ճիշտ են կառուցված եւ հաջորդում միմյանց: Փորձնական հարցման արդյունքների հիման վրա էլ կատարվել են անհրաժեշտ շտկումներ եւ հարցաթերթը բերվել է վերջնական տեսքի:

### 1.2.2 Հետազոտության ընտրանքը

#### 1.2.2.1 Ընտրանքի մեծությունը

Ընտրանքի ձեւավորման համար որպես գլխավոր համախմբություն դիտարկվել է Հայաստանի բնակչության աշխատունակ տարիքային խումբը (16-62 տ) եւ աշխատունակ տարիքից բարձր տարիքային խումբը (կենսաթոշակառուներ, 63 տ եւ ավել): Համաձայն պաշտոնական տվյալների, 01.01.2009թ.-ի դրությամբ այդ խմբերի մեծությունը կազմում էր համապատասխանաբար 2,198,600 մարդ եւ 385,500 մարդ, ընդամենը՝ 2,584,100 մարդ<sup>5</sup>: Գլխավոր համախմբության այդ մեծության հիման վրա հաշվարկվել է հետազոտության ընտրանքը, որը կազմել է 992 մարդ: Հետազոտության ընտրանքի հաշվարկը կատարվել է հետեւյալ բանաձեւով.

<sup>5</sup> Աղբյուր՝ «Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2009թ.», ԱՎԾ, 2009




Աղյուսակ 1 - Հետազոտության ընտրանքի հաշվարկման բանաձևը

$n = \frac{N \cdot k_{\alpha}^2 \cdot \delta^2}{N \cdot \Delta^2 + k_{\alpha}^2 \cdot \delta^2}$	որտեղ՝		<b>Մեծություն</b>
	$N$ -	գլխավոր համախմբությունն է	2,584,100
	$\alpha$ -	ընդունելի սխալի տոկոսն է	0.035 (3.5%)
	$k_{\alpha}$ -	վստահության գործակիցն է	1.89
	$\delta$ -	հետազոտվող հատկանիշի դիսպերսիան է	1/4 ( $=\delta^2$ )
	$\Delta$ -	ընտրանքի սխալն է	0.03 (3%)
	$n$ -	ընտրանքն է	992

1.2.2.2 Հետազոտության ընտրանքի աշխարհագրական բաշխվածքը

Հետազոտության իրականացման համար կիրառվել է տարածքային բազմաստիճան ընտրանք: Առաջին քայլում, որպես ընտրանքային միավոր, սահմանվել են բնակավայրերի տիպերը: Որպես այդպիսին առանձնացվել են Հայաստանի մայրաքաղաք Երեւանը, մարզերի այլ քաղաքներ եւ գյուղական բնակավայրեր: Նշված բնակավայրերի միջեւ ընտրանքը բաշխվել է ըստ բնակչության համամասնության<sup>6</sup>, որի արդյունքում ստացվել է հետեւյալ բաշխվածքը.

Աղյուսակ 2 - Հետազոտության ընտրանքի բաշխվածքն ըստ բնակավայրերի տիպերի



Հաջորդ քայլում Երեւանում եւ մարզերում իրականացվել է ընտրանքային միավորների առանձնացում: Երեւանի ընտրանքը (342 մարդ) բաշխվել է քաղաքի վարչական տարածքների միջեւ՝ ըստ այդ տարածքների բնակչության համամասնության: Երեւանում ընտրանքի բաշխումն իրականացնելու համար հիմք է ընդունվել 2010թ. ապրիլի 1-ի դրությամբ Երեւանի մշտական բնակչության թվաքանակը<sup>7</sup>:

Աղյուսակ 3 - Հետազոտության ընտրանքի բաշխվածքն ըստ Երեւանի վարչական տարածքների

Վարչական տարածքներ	Մշտական բնակչությունը, մարդ	Մասնաբաժինն ընդհանուրի մեջ	Ընտրանքի բաշխվածքն ըստ վարչական տարածքների, մարդ
<b>ԵՐԵՎԱՆ, այդ թվում՝</b>	<b>1,117,800</b>	<b>100.0%</b>	<b>342</b>
Աջափնյակ	108,100	9.7%	33
Ավան	51,000	4.6%	16
Արաբկիր	130,900	11.7%	40
Դավթաշեն	41,000	3.7%	13
Էրեբունի	121,700	10.9%	37

<sup>6</sup> Աղբյուր՝ «Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2009թ.», ԱՎԾ, 2009

<sup>7</sup> Աղբյուր՝ «ՀՀ մշտական բնակչության թվաքանակը 2010թ.-ի ապրիլի 1-ի դրությամբ», ԱՎԾ, 2010


Կենտրոն	130,500	11.7%	40
Մալաթիա-Սեբաստիա	141,600	12.7%	43
Նոր-Նորք	146,700	13.1%	45
Նորք-Մարաշ	11,300	1.0%	3
Նուբարաշեն	9,600	0.9%	3
Շենգավիթ	146,200	13.1%	45
Քանաքեռ-Զեյթուն	79,200	7.1%	24

Հայաստանի այլ քաղաքներում եւ գյուղական բնակավայրերում հետազոտությունն իրականացնելու համար յուրաքանչյուր մարզից ընտրվել են 2-ական քաղաքային եւ գյուղական համայնքներ: Մարզերում ընտրվել են 10 հազարից ավելի բնակչություն ունեցող քաղաքները, իսկ գյուղական բնակավայրերի ընտրանքն իրականացվել է այնպես, որ մարզի տարածաշրջանները հնարավորինս ներկայացված լինեն: Հետազոտության մեջ ընդգրկվել են Հայաստանի հետեւյալ բնակավայրերը.

**Աղյուսակ 4 - Հետազոտության ընտրանքի բաշխվածքն ըստ բնակավայրերի**

Մարզեր			Քաղաքներ			Գյուղեր		
Երեւան	342	34%	Երեւան	342	34.5%	-	-	-
Արագածոտն	43	4%	Աշտարակ	10	1.0%	Օշական	17	1.7%
						Քուչակ	16	1.6%
Արարատ	85	9%	Արարատ	12	1.2%	Սայաթ-Նովա	30	3.0%
			Արտաշատ	15	1.5%	Քաղցրաշեն	28	2.8%
Արմավիր	88	9%	Արմավիր	8	0.8%	Բամբակաշատ	29	2.9%
			Էջմիածին	20	2.0%	Բաղրամյան	31	3.1%
Գեղարքունիք	71	7%	Գավառ	13	1.3%	Վարդենիկ	22	2.2%
			Սեւան	13	1.3%	Ներքին Գետաշեն	23	2.3%
Լոռի	87	9%	Վանաձոր	45	4.5%	Շիրակամուտ	17	1.7%
			Ալավերդի	7	0.7%	Գյուլագարակ	18	1.8%
Կոտայք	86	9%	Հրազդան	27	2.7%	Արզական	19	1.9%
			Աբովյան	21	2.1%	Նոր Գեղի	19	1.9%
Շիրակ	86	9%	Գյումրի	44	4.4%	Ազատան	17	1.7%
			Արթիկ	7	0.7%	Աշոցք	18	1.8%
Սյունիք	47	5%	Կապան	21	2.1%	Գորայք	8	0.8%
			Գորիս	11	1.1%	Խնձորեսկ	7	0.7%
Վայոց Ձոր	17	2%	Եղեգնաձոր	4	0.4%	Արենի	5	0.5%
						Մալիշկա	8	0.8%
Տավուշ	40	4%	Իջեւան	16	1.6%	Աչաջուր	13	1.3%
						Ոսկեպար	11	1.1%
<b>Հայաստան</b>	<b>992</b>	<b>100%</b>	<b>Քաղաքներ</b>	<b>636</b>	<b>64%</b>	<b>Գյուղեր</b>	<b>356</b>	<b>36%</b>





Նկար 2-ի տվյալներից ուշադրության է արժանի հարցման մասնակիցների բաշխվածքն ըստ սեռի: Հարցման մասնակիցների մեջ կանանց գերակշռությունը պայմանավորված է նրանով, որ կանայք ավելի պատրաստակամ են եղել հարցմանը մասնակցելու հարցում:

**1.2.3 Հետազոտության իրականացումը**

Հարցման մասնակիցների շրջանում հարցումներն իրականացվել են 2010թ. դեկտեմբերի 16-28 ընկած ժամանակահատվածում: Հատուկ ուշադրություն է դարձվել *հարցումների որակի վերահսկողության խնդիրներին*: Որակյալ եւ արժանահավատ տվյալների հավաքագրում ապահովելու նպատակով ձեռնարկվել են հետևյալ քայլերը.

- հարցումների որակի գնահատման համար ծրագրի պատասխանատուն մասնակցել է յուրաքանչյուր հարցազրուցավարի հետ 1-ական հարցազրույցի,
- կատարվել են ստուգողական զանգեր՝ համոզվելու համար, որ հարցազրույցներն իրականում անցկացվել են,
- ընտրանքային քայլի վերահսկման համար հարցազրուցավարներին բաժանվել են նաեւ երթուղային թերթիկներ, որտեղ նրանք նշել են բոլոր անցկացված հարցումների, մերժումների եւ փակ դռների հասցեները մուտքագրումից առաջ կատարվել է հարցաթերթերի տրամաբանական ստուգում եւ վերլուծության՝ հատուկ ուշադրություն դարձնելով «հարց-թակարդ»-ներին տրված պատասխաններին:

Հարցումների արդյունքում լրացված 992 հարցաթերթերի քանակական տվյալները թվայնացվել (կոդավորվել եւ մուտքագրվել) են SPSS<sup>8</sup> ծրագրային փաթեթի մեջ: SPSS-ի մեջ տվյալների մուտքագրումից առաջ իրականացվել է հարցաթերթերի որակի ստուգում, ինչի արդյունքում առանձնացվել են 43 հարցաթերթեր, որոնցում առկա էին բացթողումներ կապված որոշ հարցերի լրացման, դեմոգրաֆիական տվյալներ թերի գրանցման, բաց հարցերին անհասկանալի պատասխանների հետ: Տվյալների ճշտման նպատակով հարցման մասնակիցներից 28-ի հետ իրականացվել է կրկնակի հարցում հեռախոսազանգերի միջոցով, իսկ հարցման մասնակիցներից 15-ին հարցազրուցավարներն այցելել են երկրորդ անգամ: Հեռախոսազանգերի միջոցով ճշտումներն իրականացվել են միայն այն դեպքում, երբ հարցումներն իրականացված են եղել հեռավոր մարզերում, ինչպիսիք են Սյունիքը, Լոռին, Շիրակը, եւ կրկնակի այցելությունը հնարավոր չի եղել ժամանակի սղության պատճառով:

Տվյալների թվայնացումը եւ հետազոտության արդյունքների վերլուծությունն իրականացվել է 2011թ.-ի հունվար-փետրվար ամիսներին: 2011թ.-ի փետրվար-մարտ ամիսներին իրականացվել է վերլուծական հաշվետվության պատրաստումը:

Հետազոտության դաշտային աշխատանքների իրականացման՝ հարցումների ընթացքում ի հայտ եկած որոշակի բարդություններին եւ խնդիրներին տրվել են հետևյալ լուծումները.

Հիմնական խնդիրներ	Լուծումներ
Հարցազրուցավարների տրամադրած տեղեկությունների համաձայն՝ Երեւանում աշխատանքային օրերի ցերեկային ժամերին շատ դժվար է եղել հարցումների իրականացումը, քանի որ տնտեսությունների (ընտանիքների) անդամների մեծ մասը տանը չի եղել	Վրդ պատճառով Երեւանում հարցումներն իրականացվել են հանգստյան (շաբաթ եւ կիրակի) օրերին, երբ տնտեսությունների (ընտանիքների) անդամները հիմնականում տանն են եղել
Երեւան քաղաքում հարցազրուցավարների աշխատանքը դժվարացել է այն պատճառով, որ հատկապես կեստրոնում շենքերի մուտքերը կոդավորված են եղել	Վրդ խնդիրը լուծելու համար հարցազրուցավարները այցելել են այլ շենքեր, ինչի պատճառով ծախսվել է նախատեսվածից շատ ժամանակ՝ փոխարենը պահպանվել են պատահական ընտրանքի սկզբունքները
Ընտրանքի քայլի պահպանման հետ կապված դժվարությունների հարցազրուցավարները հանդիպել են նաեւ մարզերում, քանի որ մի շարք գյուղերում տները բավականին ցրված են եղել, թվագրված չեն եղել, իսկ փողոցներն անկանոն են	Վրդ պատճառով եղել են որոշ դեպքեր, երբ հարցազրուցավարները ինքնուրույն են թվագրել տները եւ փողոցները

<sup>8</sup> Վիճակագրական փաթեթ հասարակական ուսումնասիրությունների համար

<p>Հարցազրուցավարների տեղեկություններով՝ գյուղական բնակավայրերում եղել են դեպքեր, որ հարցմանը, բացի հետազոտության ընտրանքում ընդգրկված հարցման մասնակցից, ներկա են եղել նաև տնտեսության (ընտանիքի) այլ անդամներ կամ համայնքի այլ ներկայացուցիչներ: Դրա հետևանքով հարցազրույցները երբեմն վերածվել են խմբային քննարկումների՝ թեմայի հետաքրքիր լինելու պատճառով</p>	<p>☞ Այդ խոչընդոտը չեզոքացնելու համար հարցազրուցավարները գրանցել են միայն պատահական ընտրանքի սկզբունքով ընտրված հարցման մասնակցի պատասխանները</p>
<p>Հարցազրուցավարները փաստում են, որ որոշակի դժվարություններ են ունեցել հարցման մասնակիցների սեռատարիքային կազմի եւ տարիքային եւ կրթական մակարդակի հետ կապված բեւեռացվածությունից խուսափելու առումով: Խնդիրն այն է, որ հիմնականում կանայք, տարեցները եւ բարձրագույն կրթություն ունեցողներն են առավել հակված եղել հարցազրույցին մասնակցելու, իսկ օրինակ երիտասարդները քիչ են հետաքրքրվել կենսաթոշակի հետ կապված հարցերով եւ պատրաստակամություն չեն ցուցաբերել հարցերին պատասխանելու</p>	<p>☞ Հարցազրուցավարները հնարավոր մերժումների պարագայում հարցազրույցն անցկացրել են հաջորդ հարցման մասնակցի հետ՝ ընտրանքի սահմանված սկզբունքի համաձայն</p>

Հետազոտության արդյունքների ամփոփման փուլում պարզ դարձավ, որ ընդհանուր առմամբ գրանցվել է 238 մերժում, այսինքն՝ մերժում հարցման մասնակիցների յուրաքանչյուր հինգերորդի կողմից: Հարցումներին մասնակցության մերժումներ ավելի շատ գրանցվել է Երեւանում. 144 մերժում (մերժում ամեն երրորդի կողմից): Մարզերի քաղաքներում հարցման մասնակցությանը մերժել է ամեն վեցերորդը, գյուղերում՝ ամեն տասերորդը: Ընդ որում՝ հարցազրուցավարները արձանագրել են, որ մարզերի բնակչությունը հիմնականում հրաժարվել է հարցմանը մասնակցելուց այդ պահին զբաղված լինելու պատճառով, իսկ Երեւանում մարդիկ հակված չեն եղել հաղորդակցվելու, հարցերին պատասխանելու, շատ դեպքերում անգամ հրաժարվել են դուռը բացել:

## 2 ԳՈՐԾՈՂ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ. ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ, ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐ


### 2.1 ՀԱՆՐԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾՈՂ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

#### 2.1.1 Հանրության կողմից կենսաթոշակային համակարգի բնորոշումը

Հետազոտության արդյունքները վկայում են այն մասին, որ Հայաստանում գործող կենսաթոշակային համակարգի մասին հանրության տեղեկացվածությունը կարելի է բնութագրել որպես ցածր: Հայաստանում գործող կենսաթոշակային համակարգը իրավացիորեն *բաշխողական* են բնորոշել հարցման մասնակիցների 27%-ը: Մնացած 73%-ը չգիտի այդ հարցի պատասխանը, կամ եթե գիտի՝ ապա սխալ: Հարցման մասնակիցների 2%-ն են կազմում «անտեղյակները», ովքեր կարծում են, թե Հայաստանի գործում է կուտակային կենսաթոշակային համակարգ: Այստեղ նկատելի է վերջին մի քանի ամիսներին մամուլում եւ հեռուստատեսությամբ կուտակային կենսաթոշակային համակարգի մասին հաճախակի դարձած հոդվածների ու ելույթների ազդեցությունը:

Գործող կենսաթոշակային համակարգի մասին հանրության տեղեկացվածության մակարդակը պարզելու համար հարցման մասնակիցներին տրվել են երկու բաց հարցեր: Արդյունքներն այսպիսին են.

Նկար 3 - Հանրության կողմից կենսաթոշակային համակարգի բնորոշումը



Գործող կենսաթոշակային համակարգի մասին հանրության ցածր տեղեկացվածության համար կան առնվազն երկու պատճառներ.

- Հանրության մեծ մասը մինչեւ կենսաթոշակային տարիքը (63 տ) կենսաթոշակային համակարգի հետ չունի այնպիսի շփում, որը թույլ կտար ապահովել համակարգի մասին տեղեկատվության ստացում: Առօրյա կյանքում կենսաթոշակային համակարգի եւ կենսաթոշակների հետ կապված հարցերը ոչ թոշակառուների համար չունեն մեծ հրատապություն, ինչի պատճառով համակարգի մասին եղած կամ ստացվող տեղեկատվությունը չի հիշվում եւ մտապահվում:


- Անգամ վարձու աշխատողները, ովքեր յուրաքանչյուր ամիս իրենց ամսական եկամտի 3%-ի չափով մասնակցում են կենսաթոշակային համակարգի եկամուտների ձեւավորմանը, չունեն տեղեկացվածության բարձր մակարդակ: Ասվածի ապացույցն է այն, որ վարձու աշխատողների (ընդհանուրի 28%-ը, տես Նկար 2, էջ 10) ընդամենը 31%-ն է նշել, որ Հայաստանում գործող կենսաթոշակային համակարգը բաշխողական է: Խնդիրը կայանում է նրանում, որ վարձու աշխատողների կողմից սոցիալական վճարների կատարման պարտավորությունը օրենքով դրված է նրանց գործատուների վրա: Արդյունքում վարձու աշխատողներն անմասն են մնում կենսաթոշակային համակարգի հետ որոշակի շփումներ կամ հարաբերություններ ունենալու հնարավորությունից:

**2.1.2 Հանրության տեղեկացվածությունը կենսաթոշակների ֆինանսավորման աղբյուրների եւ չափերի մասին**

Մինչեւ 2008թ. կենսաթոշակային համակարգի ֆինանսավորման աղբյուր էր հանդիսանում Սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամը (ՍԱԴՀ), որի միջոցները գոյանում էին գործատուների եւ վարձու աշխատողների կողմից կատարվող սոցիալական վճարներից: Սակայն ՍԱԴՀ-ի հավաքագրած միջոցները, հատկապես 2008թ.-ին կենսաթոշակների 60% բարձրացումից հետո, բավարար չէին համակարգի ֆինասական կայունությունն ապահովելու առումով: Արդյունքում ՍԱԴՀ-ը վերակազմավորվեց Սոցիալական ապահովության պետական ծառայության, իսկ սոցիալական ապահովության վճարները ուղղորդվեցին պետական բյուջե, որտեղից էլ ներկայումս կատարվում է կենսաթոշակների վճարման ֆինանսավորումը:

Փաստորեն կենսաթոշակների ֆինանսավորման աղբյուրներն են գործատուները, աշխատողները եւ պետությունը: Այդ իմաստով հարցման մասնակիցների կողմից կենսաթոշակների ֆինանսավորման աղբյուրների վերաբերյալ տրված բոլոր պատասխաններն էլ կարելի է համարել հիմնականում կամ մասամբ ճիշտ (տես Նկար 4): Բացառություն են կազմում հարցման մասնակիցների 20%-ը, ովքեր գաղափար չունեն, թե որտեղից են գոյանում կենսաթոշակների ֆինանսավորման միջոցները:

**Նկար 4 - Հանրության տեղեկացվածությունը կենսաթոշակների ֆինանսավորման աղբյուրների մասին**



Հայաստանում սոցիալական վճարներ (սոցվճարներ) են կատարում գործատուները, վարձու աշխատողները եւ անհատ ձեռնարկատերերը (ձեռներեցները): Մենք ենթադրում ենք, որ մարդիկ անհատ ձեռնարկատերերին նույնացնում են գործատուների հետ եւ այդ պատճառով առանձին չեն նշում: Եթե դա այդպես է, ապա կարելի է համարել, հարցման մասնակիցների 39%-ը



Կենսաթոշակների ֆինանսավորման աղբյուրների մասին հարցին տվել է «հիմնականում ճիշտ» պատասխան: Այդ տրամաբանությամբ պետք է «մասնակի ճիշտ» համարել հարցման այն մասնակիցների պատասխանները, ովքեր կարծում են, որ Հայաստանում սոցվճարներ են կատարում կամ միայն գործատուները (14%), կամ՝ միայն վարձու աշխատողները (21%), կամ էլ՝ պետությունը (6%):

Եթե կենսաթոշակների ֆինանսավորման աղբյուրների մասին հանրության տեղեկացվածությունը կարելի է համարել բավարար, ապա սոցվճարների չափի վերաբերյալ հանրությունը գտնվում է բավականին անտեղյակ վիճակում: Սակայն նախքան համապատասխան վիճակագրության ներկայացնելը, կարիք կա անդրադառնալ Հայաստանում գործող սոցվճարների տեսակներին եւ չափերին: Դա մեծապես կհեշտացնի ներքեւում բերված վիճակագրության ընկալումը:

Համաձայն «Պարտադիր սոցիալական վճարների մասին» ՀՀ օրենքի, Հայաստանում սոցվճարներ են կատարում գործատուները, վարձու աշխատողները եւ անհատ ձեռնարկատերերը: Հետազոտության ընթացքում մենք կենտրոնացել ենք գործատուների եւ վարձու աշխատողների սոցվճարների չափերի վրա: Դրանք ըստ վճարողների տարբեր են եւ ներկայացված են Աղյուսակ 5-ում:

**Աղյուսակ 5 - Գործատուների եւ վարձու աշխատողների սոցիալական վճարների չափերը**

ԳՐԾՏԱՏՈՒՆԵՐ	
Սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտի ամսական չափը	Սոցիալական վճարի չափը
< 20,000 դրամ	7,000 դրամ
20,000-100,000 դրամ	7,000 դրամ + 20,000 դրամը գերազանցող գումարի 15%
> 100,000 դրամ	19,000 դրամ + 100,000 դրամը գերազանցող գումարի 5%

**ՎԱՐՁՈՒ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ**

Սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտը	Սոցիալական վճարի չափը
Աշխատավարձ եւ դրան հավասարեցված եկամուտներ	3%

Գործատուների սոցվճարների չափերի վերաբերյալ գրեթե բոլոր հարցման մասնակիցներն էլ նշել են մեկական թիվ (անկախ դրանց ճիշտ կամ սխալ լինելուց), չնայած գործատուների սոցվճարների համար գործում է հաշվարկման սանդղակ: Ուստի բոլոր այն պատասխանները, որոնք եղել են «7,000 դրամ», «15%» կամ «5%», մենք պայմանականորեն համարել ենք ճիշտ՝ ենթադրելով, որ յուրաքանչյուր հարցվող նշել է սոցվճարի այն չափը, որը վճարվում է հենց իր համար: Վարձու աշխատողների սոցվճարների չափի հարցում նման խնդիր չկա. այստեղ ճիշտ պատասխանը միանշանակ է (3%):

Գործող կենսաթոշակային համակարգում կիրառվող սոցվճարների դրույքաչափերի վերաբերյալ ստացված պատասխանների հիման վրա հարցման մասնակիցները դասակարգվել են հետեւյալ երեք խմբերի.

1. *Հիմնականում ճիշտ* պատասխան տված հարցման մասնակիցներ. այս խումբը, որը կազմում է հանրության 39%-ը, գտնում է, որ կենսաթոշակները ֆինանսավորվում են **միաժամանակ եւ գործատուների եւ վարձու աշխատողների** կատարած սոցվճարների հաշվին: Այս խմբի պատասխանների վիճակագրությունը ներկայացված է Աղյուսակ 6-ում:
2. *Մասնակի ճիշտ* պատասխան տված հարցման մասնակիցներ. այս խումբը, որը կազմում է հանրության 14%-ը, գտնում է, որ կենսաթոշակները ֆինանսավորվում են **միայն գործատուների** կատարած սոցվճարների հաշվին: Այս խմբի պատասխանների վիճակագրությունը ներկայացված է Աղյուսակ 7-ում:
3. *Մասնակի ճիշտ* պատասխան տված հարցման մասնակիցներ. այս խումբը, որը կազմում է հանրության 21%-ը, գտնում է, որ կենսաթոշակները ֆինանսավորվում են **միայն վարձու աշխատողների** կատարած սոցվճարների հաշվին: Այս խմբի պատասխանների վիճակագրությունը ներկայացված է Աղյուսակ 8-ում:

**Աղյուսակ 6 - Հանրության տեղեկացվածությունը սոցիալական վճարների չափի մասին (ա)**

Հարցման մասնակիցներ, ովքեր կարծում են, որ կենսաթոշակների քյուլջեն ձեւավորվում է «միաժամանակ գործատուների եւ աշխատողների վճարներից» (ընդհանուրի 39%)

		Աշխատողների սոցվճարների չափերն ըստ հարցման մասնակիցների (մասնաբաժինը 39%-ի մեջ)																											Ընդ.	
		0%	0.5%	1%	2%	3%	4%	5%	6%	7%	10%	14%	15%	16%	20%	30%	40%	500 դրամ	2,000 դրամ	3,500 դրամ	4,000 դրամ	5,000 դրամ	6,000 դրամ	7,000 դրամ	7,500 դրամ	12,000 դրամ	Չգիտեն			
Գործատուների չափերն ըստ հարցման մասնակիցների (մասնաբաժինը 39%-ի մեջ)	1%																											0.5%	0.5%	
	2%				0.3%											0.3%													0.5%	1.0%
	3%					1.0%																							1.0%	2.1%
	4%				0.3%	0.3%																								0.5%
	5%			0.3%	0.3%	0.5%		0.3%		0.3%																			1.0%	2.6%
	6%					0.3%																								0.3%
	7%					0.3%			0.3%																					0.5%
	8%					0.3%					0.3%																			0.5%
	10%					1.3%		0.3%			0.5%					0.3%													0.8%	3.1%
	13%	0.3%				0.5%																								0.8%
	15%					1.0%		0.3%		0.3%			0.3%																0.3%	2.1%
	18%										0.3%																			0.3%
	20%					0.3%					0.5%					0.5%							0.3%						0.5%	2.1%
	25%																												0.3%	0.3%
	28%															0.3%														0.3%
30%					0.3%			0.3%				0.3%				0.3%												0.5%	1.6%	
35%					0.3%																								0.3%	
5,000 դրամ							0.3%															0.3%						1.6%	2.1%	
6,000 դրամ																												0.5%	0.5%	
7,000 դրամ					0.8%																					0.3%		0.8%	1.8%	
7,500 դրամ					0.3%																								0.3%	
8,000 դրամ									0.3%																				0.3%	
10,000 դրամ																					0.3%			0.3%					0.5%	
12,000 դրամ																									0.3%				0.3%	
20,000 դրամ					0.3%																								0.3%	
50,000 դրամ																												0.3%	0.3%	
Չգիտեն		0.3%	0.5%	0.5%	3.1%	0.3%	2.3%		0.8%	0.8%	0.3%						0.3%	0.3%	0.3%	0.3%	0.5%	1.3%	0.8%	0.3%	0.5%		61.8%	75.1%		
<b>Ընդամենը</b>	<b>0.3%</b>	<b>0.3%</b>	<b>0.8%</b>	<b>1.3%</b>	<b>10.6%</b>	<b>0.3%</b>	<b>3.4%</b>	<b>0.5%</b>	<b>1.6%</b>	<b>2.3%</b>	<b>0.3%</b>	<b>0.5%</b>	<b>0.3%</b>	<b>0.8%</b>	<b>0.5%</b>	<b>0.3%</b>	<b>0.3%</b>	<b>0.3%</b>	<b>0.3%</b>	<b>0.3%</b>	<b>0.8%</b>	<b>1.8%</b>	<b>0.8%</b>	<b>0.8%</b>	<b>0.5%</b>	<b>0.3%</b>	<b>70.4%</b>	<b>100%</b>		

Այդուսակ 6-ի տվյալներից երեւում է, որ կենսաթոշակների ֆինանսավորման աղբյուրների մասին հիմնականում ճիշտ պատասխաններ տված հարցման մասնակիցների (ընդհանուրի 39%) մեջ կան սոցվճարների չափի մասին ամբողջապես եւ մասնակիորեն տեղյակ խմբեր: Այսպես, նշված հարցման մասնակիցների 10.6%-ը (ընդհանուրի 4.1%) ճիշտ գիտի վարձու աշխատողների սոցվճարների չափը եւ 6.5%-ը (ընդհանուրի 2.5%)՝ գործատուների սոցվճարների չափը: Սակայն մարդկանց թիվը, ովքեր ճշտորեն գիտեն եւ գործատուների եւ վարձու աշխատողների սոցվճարների չափերը՝ ծայրահեղ փոքր է, ընդամենը՝ 2.3% (Այդուսակ 6-ում դեղինով նշված սյունյակի եւ տողերի «խաչմերուկների» հանրագումարը): Դա կազմում է ընդհանուրի (ամբողջ ընտրանքի) 0.9%-ը, ինչը խիստ ցածր ցուցանիշ է:

Սոցվճարների չափերի մասին տեղեկացվածության մակարդակը խիստ ցածր է նաեւ հարցման այն մասնակիցների դեպքում, ովքեր կենսաթոշակների ֆինանսավորման աղբյուրների մասին հարցին տվել են մասնակի ճիշտ պատասխաններ: Խոսքը գնում է հետազոտված հանրության 14%-ի մասին, ովքեր կարծում են, որ սոցվճարներ են կատարում միայն գործատուները, եւ 21%-ի մասին, ովքեր կարծում են, որ սոցվճարներ են կատարում միայն վարձու աշխատողները: Ստորեւ ներկայացված են սոցվճարների չափերի մասին այդ խմբերի տեղեկացվածության ցուցանիշները.

**Այդուսակ 7 - Հանրության տեղեկացվածությունը սոցիալական վճարների չափի մասին (բ)**

Հարցման մասնակիցներ, ովքեր կարծում են, որ կենսաթոշակները ֆինանսավորվում են «միայն գործատուների վճարներից» (ընդհանուրի 14%)

Սոցվճարների չափն ըստ հարցման մասնակիցների	Հարցման մասնակիցների մասնաբաժինը (14%-ի մեջ)
1-4%	10%
<b>5%</b>	<b>3%</b>
6-10%	2%
<b>15%</b>	<b>2%</b>
20-28%	4%
5,000 դրամ	1%
<b>7,000 դրամ</b>	<b>1%</b>
10,000 դրամ	2%
Չգիտեն	76%
<b>Ընդամենը</b>	<b>100%</b>

**Այդուսակ 8 - Հանրության տեղեկացվածությունը սոցիալական վճարների չափի մասին (գ)**

Հարցման մասնակիցներ, ովքեր կարծում են, որ կենսաթոշակները ֆինանսավորվում են «միայն վարձու աշխատողների վճարներից» (ընդհ.ի 21%)

Սոցվճարների չափն ըստ հարցման մասնակիցների	Հարցման մասնակիցների մասնաբաժինը (21%-ի մեջ)
0.5-2%	3%
<b>3%</b>	<b>4%</b>
4-30%	7%
800-13,000 դրամ	4%
Չգիտեն	82%
<b>Ընդամենը</b>	<b>100.0%</b>

☞ ճիշտ պատասխաններն ընդգծված են

Այդուսակ 7-ի եւ Այդուսակ 8-ի տվյալներից երեւում է, որ կենսաթոշակների ֆինանսավորման աղբյուրների մասին մասնակի ճիշտ պատասխաններ տված հարցման մասնակիցներից գործատուների սոցվճարների չափը ճիշտ գիտեն 6%-ը (ընդհանուրի 1%), իսկ վարձու աշխատողների սոցվճարների չափը՝ 4%-ը (ընդհանուրի 1%):

Այսպիսով՝ կարելի է արձանագրել, որ սոցվճարների չափերի մասին հանրության տեղեկացվածությունը գտնվում է ցածր մակարդակի վրա: Սոցվճարների չափի մասին լիարժեք տեղեկություններ ունի հանրության միայն 1%-ը, իսկ մասնակի տեղեկություններ՝ 2%-ը:

**2.1.3 Հանրության տեղեկացվածությունը կենսաթոշակի կառուցվածքի եւ չափերի մասին**

Համաձայն «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի, Հայաստանում գործող կենսաթոշակները բաժանվում են 2 խմբի՝ ա) ապահովագրական, եւ բ) սոցիալական: Ապահովագրական կենսաթոշակներն էլ իրենց հերթին 6 տեսակի են՝ տարիքային, արտոնյալ


պայմաններով, երկարամյա ծառայություն, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում եւ մասնակի: Եվս 3 տեսակի կենսաթոշակներ կան սոցիալական կենսաթոշակների խմբում՝ ծերության, հաշմանդամության եւ կերակրողին կորցնելու դեպքում: Կենսաթոշակի կառուցվածքի եւ չափերի մասին հանրության տեղեկացվածության հետազոտության հիմքում դրվել է միայն **տարիքային ապահովագրական կենսաթոշակը**, քանի որ այն ունի համընդհանուր կիրառություն եւ կապված է առանձին սոցիալական խմբերի կենսաթոշակների առանձնահատկություններից:

Նախքան տարիքային ապահովագրական կենսաթոշակի կառուցվածքի եւ բաղադրիչների մասին հանրության տեղեկացվածության ներկայացումը, կարիք կա անդրադառնալ այն հարցին, թե ինչպե՞ս է կենսաթոշակի կառուցվածքը սահմանված օրենսդրությամբ (տես Աղյուսակ 10): Կենսաթոշակի երկու գլխավոր բաղադրիչներն են բազային կենսաթոշակը եւ ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքն են: Հենց այդ երկու բաղադրիչներն էլ ընկել են կենսաթոշակի կառուցվածքի եւ բաղադրիչների մասին հանրության տեղեկացվածության հետազոտության հիմքում (տես Նկար 5):

Աղյուսակ 9 - Կենսաթոշակի հաշվարկման բանաձևը

$Կ = ԲԿ + (n \times Ա) \times Գ$		
որտեղ՝	Չափը *	
Կ -	կենսաթոշակի ամսական գումար	
ԲԿ -	բազային (հիմնական) կենսաթոշակ	10,500 դրամ
n -	ապահովագրական ստաժի տարիների թիվ	
Ա -	ապահովագրական ստաժի 1 տարվա արժեք	450 դրամ
Գ -	կենսաթոշակառուի անձնական գործակից	(**)
(*) - հետազոտության պահի դրությամբ գործող		
(**) - մինչեւ 25 տարվա (ներառյալ) ապահովագրական ստաժի 1 տարվա համար սահմանված է 0.04 գործակից, իսկ 25 տարուց ավելի ապահովագրական ստաժի դեպքում՝ 0.02 գործակից		


Նկար 5 - Հանրության տեղեկացվածությունը կենսաթոշակների բաղադրիչների մասին



Ի տարբերություն մինչեւ այս պահը դիտարկված տեղեկացվածության ցուցանիշների, կենսաթոշակների կառուցվածքի եւ բաղադրիչների մասին հանրության տեղեկացվածությունը բավականին բարձր է (41%): Միաժամանակ հանրության մի հոծ զանգված ունի թերի տեղեկություններ եւ կարծում է, թե կենսաթոշակի մեծությունը կախված է միայն աշխատանքային ստաժից (30%) կամ միայն բազային կենսաթոշակից (4%): Կենսաթոշակների կառուցվածքի հարցում բացարձակ անտեղյակ է հանրության 25%-ը: Այդ մասին միանշանակ հայտարարել են հարցման մասնակիցների 20%-ը: Մնացած 5%-ը սխալմամբ կարծում են, որ կենսաթոշակների մեծությունը կախված է *աշխատավարձի չափից (1.8%), նվազագույն սպառողական զամբյուղի մեծությունից (0.5%), կենսաթոշակառուի երեխաների թվից (0.2%)*, եւ մի շարք այլ գործոններից, որոնց մեջ նաեւ մի շարք անտրամաբանական պատասխաններ (2%):

Եթե կենսաթոշակի կառուցվածքի եւ բաղադրիչների մասին հանրությունն ունի բավարար տեղեկացվածություն, ապա դրանց չափերի մասին առկա է համատարած անտեղյակություն: Պատկերը շատ նման է սոցիալական վճարներ կատարողների եւ սոցիալական վճարների չափերի դեպքին, որը վերլուծվել է նախորդ բաժնում: Ակնհայտ է, որ **հանրությունը բավարար չափով տիրապետում է որակական տեղեկատվությանը եւ չգիտի/անձանոթ է կամ դժվարությամբ է մտապահում թվային տեղեկատվությունը**: Ասվածի ապացույցն են բազային կենսաթոշակի չափի եւ ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքի մասին հարցման մասնակիցների տեղեկացվածության ցուցանիշները:

Նկար 6 - Հանրության տեղեկացվածությունը բազային կենսաթոշակի չափի եւ ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքի մասին



Աղյուսակ 10 - Հանրության տեղեկացվածությունը բազային կենսաթոշակի չափի մասին

Դրամ	Հարցման մասնակիցների մասնաբաժինը
1,000-10,250	20%
<b>10,500</b>	<b>2%</b>
11,000-35,000	17%
Չգիտեն	61%
<b>Ընդամենը</b>	<b>100%</b>


Աղյուսակ 11 - Հանրության տեղեկացվածությունը աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքի մասին

Դրամ	Հարցման մասնակիցների մասնաբաժինը
10-430	7%
<b>450</b>	<b>2%</b>
470-25,000	10%
Չգիտեն	81%
<b>Ընդամենը</b>	<b>100%</b>

☞ Ճիշտ պատասխաններն ընդգծված են

Համաձայն «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի, բազային կենսաթոշակի չափը եւ ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքը սահմանում է ՀՀ Կառավարությունը: Այդ մասին տեղյակ է հարցման մասնակիցների ընդամենը 39%-ը (տես Նկար 7):

Նկար 7 - Հանրության տեղեկացվածությունը բազային կենսաթոշակը եւ ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքը սահմանող պետական մարմնի մասին



Հարցման մասնակիցների 26%-ը սխալ գիտի կամ անտեղյակ է, թե պետական որ մարմինն է սահմանում բազային կենսաթոշակի չափը եւ ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքը: Մնացածի (35%) պատասխաններից կարելի է հասկանալ, որ նրանք շատ թե քիչ տեղյակ են, որ կենսաթոշակի բաղադրիչների սահմանման գործառույթն իրականացնում է ՀՀ Կառավարությունը կամ նրա համապատասխան ստորաբաժանումները:

**2.1.4 Հանրության տեղեկացվածությունը կենսաթոշակային տարիքի մասին**

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքը տղամարդկանց եւ կանանց համար սահմանում է տարբեր կենսաթոշակային տարիքներ: Այսպես, եթե տղամարդիկ տարիքային ապահովագրական կենսաթոշակի իրավունք են ստանում 63 տարեկանից, ապա կանանց համար գործում է սանդղակ: 2010թ.-ին կենսաթոշակի իրավունք ունեին 62.5 տարեկանը լրացած կանայք, իսկ 2011թ.-ից կանանց կենսաթոշակային տարիքի շեմը հավասարեցվել է տղամարդկանց կենսաթոշակային տարիքին՝ 63 տարեկանին: Քանի որ սույն հետազոտության շրջանակներում հարցումներն իրականացվել են 2010թ.-ի դեկտեմբերին, ապա կանանց կենսաթոշակային տարիքի ճիշտ պատասխանը պետք է լիներ «62.5 տարեկան»: Սակայն, քանի որ այդ ցուցանիշը առանձնապես մեծ տարբերություն չունի 2011թ.-ի հունվարի 1-ից հետո ուժի մեջ մտած նոր տարիքային շեմից, ապա կանանց համար կենսաթոշակային տարիքին վերաբերվող «63 տարեկան» պատասխանները եւս համարվել են ճիշտ: Կենսաթոշակային տարիքի մասին հանրության տեղեկացվածության ցուցանիշները ներկայացված են Աղյուսակ 12-ում:

Համեմատություն անցկացնելով Հայաստանի գործող կենսաթոշակային համակարգի մասին տեղեկացվածության միևնույն ժամանակահատվածում ցուցանիշների հետ, կարելի է արձանագրել, որ

Աղյուսակ 12 - Հանրության տեղեկացվածությունը կենսաթոշակային տարիքի մասին

Տղամարդկանց համար . . .		Կանանց համար . . .	
Տարիք	Հարցման մասնակիցների մասնաբաժինը	Տարիք	Հարցման մասնակիցների մասնաբաժինը
40-62 տ	18.4%	40-62 տ	39.5%
<b>63 տ</b>	<b>43.2%</b>	<b>63 տ</b>	<b>45.3%</b>
64-70 տ	33.8%	64-70 տ	10.3%
Զգիտեն	4.5%	Զգիտեն	4.9%
<b>Ընդամենը</b>	<b>100.0%</b>	<b>Ընդամենը</b>	<b>100.0%</b>

☞ ճիշտ պատասխաններն ընդգծված են

Կենսաթոշակային տարիքը հանրության կողմից ամենաճանաչված ցուցանիշն է. կենսաթոշակային տարիքի վերաբերյալ հարցին ճիշտ պատասխան են տվել հարցման մասնակիցների 43-45%-ը:

Միեւնույն ժամանակ հարցման մասնակիցները հարկ են համարել իրենց կարծիքն արտահայտել՝ կապված կենսաթոշակային տարիքի հետ: Հարցման մասնակիցների գերակշիռ մեծամասնությունը (81%) գտնում է, որ այն բարձր է սահմանված: Ընդ որում՝ հարցման մասնակիցների 64%-ը խիստ կտրուկ է արձագանքել այդ հարցին՝ հանդես գալով սահմանված կենսաթոշակային տարիքի քննադատությամբ: Այս հարցի կապակցությամբ լրյալ կեցվածք ունի հանրության ընդամենը 16%-ը, ընդ որում՝ 4%-ը գտնում է, որ այդ տարիքային շեմը կարելի է մի փոքր էլ բարձրացնել:

## 2.2 ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԳՈՐԾՈՂ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

### 2.2.1 Հանրության պատկերացումները գործող կենսաթոշակային համակարգի խնդիրների վերաբերյալ

Գործող կենսաթոշակային համակարգի մասին հանրության տեղեկացվածության մակարդակը բարձր չէ, նկատելի է գիտելիքի պակաս: Հետեւաբար՝ ակնկալել, որ հարցման մասնակիցները կմատնանշեին կենսաթոշակային համակարգի առջեւ ծառայած խորքային խնդիրները, սխալ կլիներ: Այդուհանդերձ 13-ում ամփոփված են հարցման մասնակիցների պատասխանները<sup>9</sup>, կապված կենսաթոշակային համակարգի խնդիրների հետ (մենք աշխատել ենք հնարավորինս հավատարիմ մնալ հարցման մասնակիցների ձեւակերպումներին): Բերված պատասխաններից կարելի է եզրակացնել, որ հանրության այն մասը, ովքեր իրականում հասկանում են մատնանշում են համակարգի առջեւ ծառայած խնդիրները՝ աննշան է: Հարցման մասնակիցների 0.1%-2.5%-ն է նշել համակարգի առջեւ ծառայած այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են փաստաթղթերի ձեւակերպման հետ կապված բարդությունները, կոռուպցիոն փաստերի առկայությունը, կապի բացակայությունը աշխատավարձի եւ կենսաթոշակի միջեւ, եւ այլն: Հիմնականում համակարգում եղած խնդիրների արդյունք հանդիսացող ցածր կենսաթոշակներն ընկալվել են որպես հենց համակարգի առջեւ ծառայած գլխավոր խնդիր: Խոսք անգամ չի գնացել այնպիսի խնդիրների մասին, ինչպիսիք են ժողովրդագրական խնդիրները, գործազրկության եւ սովորաբար տնտեսության մեծ մասշտաբները, ինֆլյացիայի բարձր աստիճանով պայմանավորված եկամուտների աճի ապահովման հրամայականը: Հարցման մասնակիցներն ավելի շուտ անդրադարձել են այն հարցերին, որոնք անմիջականորեն կամ ուղղակիորեն առնչվում են իրենց: Նրանց պատասխաններից կարելի է հասկանալ, որ նրանք արտահայտվել են **ոչ թե կենսաթոշակային համակարգի խնդիրների մասին**, այլ այդ **համակարգի հետ իրենց ունեցած խնդիրների մասին**: Նման մոտեցման թերությունը կայանում է նրանում, որ հարցման մասնակիցների պատասխաններում **պատճառներն ու հետեւանքները խառնվել են իրար**:

#### Աղյուսակ 13 - Հանրության պատկերացումները գործող կենսաթոշակային համակարգի խնդիրների վերաբերյալ

Կենսաթոշակային համակարգի խնդիրները	Հարցման մասնակիցների մասնաբաժինը
Կենսաթոշակները ցածր են	81%
Կենսաթոշակային տարիքը բարձր է սահմանված	27%

<sup>9</sup> Հարցման շատ մասնակիցներ տվել են մի քանի պատասխաններ (միջինը՝ մեկ հոգու կողմից 1.3 պատասխան): Հարցման մասնակիցների մասնաբաժինը հաշվարկված է ընտրանքի մեծության (992) նկատմամբ

Կան թոշակի ստացման եւ փաստաթղթերի հետ կապված խնդիրներ	3%
Կենսաթոշակային համակարգում խնդիրներ չկան	2%
Կենսաթոշակային համակարգում առկա են կաշառակերություն եւ խարդախություններ	1%
Թոշակառուները արտոնություններ չունեն	1%
Թոշակները ուշացնում են	1%
Թոշակներն անհավասար են բաշխում	1%
Այլ պատասխաններ *	5%
Զգիտեն	5%

(\*) - «Այլ պատասխաններ» խմբում ընդգրկված են հարցման մասնակիցների կողմից տրված 15 տեսակի պատասխաններ, որոնցից յուրաքանչյուրը հիշատակվել է ոչ ավել, քան 9 անգամ (ոչ ավել, քան 1%): Պատասխանների այս խմբում կարելի է հանդիպել. Կատարած աշխատանքի եւ թոշակի չափի միջեւ կապ չկա (0.9%), գյուղատնտեսական աշխատանքը ստաժ չի համարվում (0.6%), գործատուները թույլ են տալիս խախտումներ (0.6%) եւ այլն:

Ըստ հարցման մասնակիցների, Հայաստանի կենսաթոշակային համակարգի երկու գլխավոր խնդիրներն են կենսաթոշակների ցածր մակարդակը (81%) եւ կենսաթոշակային տարիքի բարձր շեմը (27%): Անշուշտ, կենսաթոշակների ցածր մակարդակի հարցում երկու կարծիք լինել չի կարող: Զանի դեռ այն ավելի փոքր է, քան սպառողական զամբյուղի մեծությունը, այդ հարցը միշտ էլ լինելու է հրատապ եւ շուտափույթ լուծման ենթակա: Ինչ վերաբերվում է կենսաթոշակային տարիքի շեմին, ապա մարդիկ լավ են հասկանում, որ դրա բարձրացմամբ Կառավարությունը փորձել է լուծել համակարգի ֆինանսական կայունության ապահովման խնդիրը: Բայց այս մոտեցումը խիստ քննադատության է արժանացել, քանի որ հարցման մասնակիցները կարծում են, որ վերջին տարիներին մարդկանց կյանքի միջին տեւողությունը ոչ միայն չի բարձրացել, այլ նաեւ անկում է ապրել<sup>10</sup>: Ըստ հարցման մասնակիցների, այդ կարծիքը առնվազն ճիշտ է այն սոցիալական խմբերի համար, ովքեր բոլորից շատ ունեն կենսաթոշակների կարիքը: Խոսքը գնում է սոցիալապես անապահով կամ աղքատ կենսաթոշակառուների մասին:

Այսպիսով, հարցման մասնակիցները մատնանշում են երկու հիմնական խնդիրներ՝ կենսաթոշակների ցածր մակարդակ եւ կենսաթոշակային տարիքի բարձր շեմ: Այս խնդիրների հարցում հարցման մասնակիցների առանձին խմբերն (սեռատարիքային եւ կրթական) ունեն առանձնահատուկ կարծիքներ (տես Աղյուսակ 14 եւ Աղյուսակ 15):

**Աղյուսակ 14 - Կենսաթոշակային համակարգի գլխավոր խնդիրներն ըստ հարցման մասնակիցների սեռատարիքային եւ կրթական խմբերի**

Հարցման մասնակիցներ, ովքեր կարծում են, որ «Կենսաթոշակները ցածր են»

Հարցման մասնակիցների բնորոշումն ըստ . . .	Հարցման մասնակիցների խմբերը	Մասնաբաժինը հարցման մասնակիցների համապատասխան խմբի մեջ
Սեռի	Արական	78%
	Իգական	82%
Տարիքային խմբերի	16-25 տ	81%
	26-40 տ	78%
	41-62 տ	79%
	63 տ եւ ավել	90%
Կրթական մակարդակի	Կրթություն չունեն	100%
	Տարրական	75%

<sup>10</sup> Համաձայն պաշտոնական վիճակագրության, կյանքի սպասվող տեւողությունը Հայաստանում ունի աճի միտում



	Թերի միջնակարգ	83%
	Միջնակարգ	78%
	Միջնակարգ տեխնիկական	80%
	Թերի բարձրագույն	82%
	Բարձրագույն	85%
	Չտարբերակված գիտական աստիճան	63%

(\*) - Սյունյակում նշված տոկոսների բացատրությունը հետևյալն է (1-ին տողում նշված 78%-ի օրինակով).  
*Ընտրանքի մեջ արական սեռի ներկայացուցիչների 78%-ը կարծում է, որ կենսաթոշակները ցածր են*

«Կենսաթոշակները ցածր են» խնդիրը առավել շատ եւ հաճախ բարձրաձայնում են կանայք (82%), թոշակառուները (63 եւ ավելի տարիքի մարդիկ) (90%), որոնք անմիջապես իրենց վրա են զգում կենսաթոշակի ցածր մակարդակի հետեւանքները եւ հանրության ավելի ցածր կրթական մակարդակ ունեցող խմբերը:

**Աղյուսակ 15 - Կենսաթոշակային համակարգի գլխավոր խնդիրներն ըստ հարցման մասնակիցների սեռատարիքային եւ կրթական խմբերի**

Հարցման մասնակիցներ, ովքեր կարծում են, որ «Կենսաթոշակային տարիքը բարձր է սահմանված»

Հարցման մասնակիցների բնորոշումն ըստ . . .	Հարցման մասնակիցների խմբերը	Մասնաբաժինը հարցման մասնակիցների համապատասխան խմբի մեջ *
Սեռի	Արական	26%
	Իգական	28%
Տարիքային խմբերի	16-25 տ	24%
	26-40 տ	26%
	41-62 տ	30%
	63 տ եւ ավել	28%
Կրթական մակարդակի	Կրթություն չունեն	0%
	Տարրական	100%
	Թերի միջնակարգ	34%
	Միջնակարգ	36%
	Միջնակարգ տեխնիկական	33%
	Թերի բարձրագույն	24%
	Բարձրագույն	15%
	Չտարբերակված գիտական աստիճան	0%

(\*) - Սյունյակում նշված տոկոսների բացատրությունը հետևյալն է (2-րդ տողում նշված 28%-ի օրինակով).  
*Ընտրանքի մեջ իգական սեռի ներկայացուցիչների 28%-ը կարծում է, որ կենսաթոշակային տարիքը բարձր է սահմանված*

«Կենսաթոշակային տարիքը բարձր է սահմանված» խնդիրը առավել շատ եւ հաճախ բարձրաձայնում են կանայք (81%), այսպես կոչված «նախակենսաթոշակային տարիքային խումբը» (41-62 տ մարդիկ) (30%) եւ հանրության ավելի ցածր կրթական մակարդակ ունեցող խմբերը:

Այս խնդրի հետ կապված մեկ ուշագրավ փաստ եւս: Հայաստանում կենսաթոշակային տարիքը բարձր համարող մարդկանց մեջ ճնշող մեծամասնությունը (81%) կազմում են աշխատանք չունեցող մարդիկ: Սա նշանակում է, որ աշխատանք չունեցող մարդիկ, որոնք եկամուտի աղբյուր չունեն, ցանկանում են կենսաթոշակային տարիքը տեսնել ավելի ցածր, ինչը նրանց հնարավորություն կտա ավելի շուտ ստանալ եկամուտի աղբյուր՝ կենսաթոշակի տեսքով:

Գործող կենսաթոշակային համակարգի խնդիրների լուծման վերաբերյալ հանրության առաջարկները մակերեսային են: Դրանք ներկայացված են Աղյուսակ 16-ում: Մենք կրկին փորձել ենք հավատարիմ մնալ հարցման մասնակիցների ձեռակերպումներին եւ հնարավորինս քիչ վերախմբագրել նրանց պատասխանները:

**Աղյուսակ 16 - Հանրության առաջարկները գործող կենսաթոշակային համակարգի խնդիրների լուծման վերաբերյալ**

Կենսաթոշակային համակարգի խնդիրների լուծման առաջարկներ	Հարցման մասնակիցների մասնաբաժինը
Կենսաթոշակները պետք է բարձրացվեն	43%
Կենսաթոշակային տարիքը պետք է նվազեցվի	20%
Տնտեսվարողները պետք է բերվեն հարկային դաշտ	12%
Պետք է ստեղծվեն աշխատատեղեր	11%
Պետությունը պետք է ուշադրություն դարձնի թոշակառուներին	6%
Կենսաթոշակները պետք է համապատասխանեցվեն սպառողական զամբյուղին	4%
Պետք է վերացվի կաշառակերությունը	3%
Պետական բյուջեից միջոցներ պետք է հատկացվեն կենսաթոշակների բարձրացմանը	3%
Պետք է ճիշտ բաշխել ռեսուրսները	3%
Պետք է նվազեցվեն հարկերը եւ կոմունալ ծառայությունների գները	2%
Պետք է բարձրացվեն աշխատավարձերը	2%
Թոշակառուներին պետք է արտոնություններ տալ	1%
Կենսաթոշակային համակարգով պետք է զբաղվեն բանիմաց մասնագետներ	1%
Պետք է պարզեցվի թոշակի ստացման գործընթացը	1%
Այլ պատասխաններ *	5%
Զգիտեն	11%


(\* ) - «Այլ պատասխաններ» խմբում ընդգրկված են հարցման մասնակիցների կողմից տրված 13 տեսակի պատասխաններ, որոնցից յուրաքանչյուրը հիշատակվել է ոչ ավել, քան 10 անգամ (ոչ ավել, քան 1%): Պատասխանների այս խմբում կարելի է հանդիպել. *Թոշակները պետք է բաշխվեն ըստ սոցիալական ապահովության աստիճանի (1.0%), բոլորի համար պետք է սահմանվեն հավասար կենսաթոշակներ (0.7%), գյուղատնտեսական աշխատանքը պետք է ստաժ համարվի (0.4%) եւ այլն:*

Կենսաթոշակային համակարգի խնդիրների լուծման վերաբերյալ հարցման մասնակիցների վերոհիշյալ առաջարկների մեջ կան գործնական եւ կիրառական նշանակություն ունեցող առաջարկներ: Մասնավորապես 12%-ը առաջարկում է միջոցներ ձեռնարկել *ստվերային տնտեսության ծավալների կրճատման ուղղությամբ եւ տնտեսվարողների բերել հարկային դաշտ*, 11%-ը համակարգի խնդիրների լուծումը տեսնում է *նոր աշխատատեղերի ստեղծման եւ գործազրկության կրճատման մեջ*: Սակայն, ընդհանուր առմամբ, հարցման մասնակիցների առաջարկները պարզունակ են: Այլ կերպ հնարավոր չէ դրանց անվանել, եթե *«կենսաթոշակները ցածր են»* կամ *«կենսաթոշակային տարիքը բարձր է սահմանված»* խնդիրների լուծումը հարցման մասնակիցները տեսնում են *«կենսաթոշակները պետք է բարձրացվեն»* կամ *«կենսաթոշակային տարիքը պետք է նվազեցվի»* առաջարկների միջոցով: Մյուս կողմից ավելին ակնկալել հարցման մասնակիցներից, որոնք կենսաթոշակային համակարգի մասին չունեն անհրաժեշտ տեղեկատվություն եւ գիտելիքներ, դժվար կլիներ:

### 2.2.2 Հանրության կողմից կենսաթոշակի կարելիության ընկալումը

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ կենսաթոշակի հետ կապված հարցերը հանրության շրջանում ունեն բավականին մեծ արձագանք եւ հնչեղություն: Դա զարմանալի չէ, քանի որ կենսաթոշակը, անկախ նրա չափից, հանրության մեծ մասի մոտ ընկալվում է որպես եկամտի հիմնական կամ հավելյալ աղբյուր: Հետազոտության արդյունքները վկայում են, որ հանրության 82%-ը այս կամ այն չափով մտահոգված է կենսաթոշակների հետ կապված հարցերով, ընդ որում՝ 61%-ը հայտնել է, որ *իրենք առանձնապես շատ են մտահոգված այդ հարցերով* (տես Նկար 8):

**Նկար 8 - Հանրության մտահոգվածությունը կենսաթոշակի հետ կապված հարցերով**



Կենսաթոշակի հետ կապված մարդկանց մտահոգությունները տարբեր են, սակայն հիմնական մտահոգությունները հանգում են նրան, որ *մարդիկ կենսաթոշակը դիտում են որպես իրենց կամ իրենց ընտանիքի եկամտի կարելի աղբյուր*: Ահավասիկ՝ այդ առումով մարդկանց պատասխանների վիճակագրությունը.

- հարցման մասնակիցների 34%-ը գտնում են, որ կենսաթոշակը հանդիսանում է (հանդիսանալու է) իրենց ընտանիքի *միակ* (21%) կամ *հավելյալ* (13%) աղբյուրներից մեկը,
- հարցման մասնակիցների 29%-ը անհանգստացած են ծերության տարիներին իրենց կյանքական ապահովվածության համար,
- հարցման մասնակիցների 23%-ը մտահոգված են կենսաթոշակների փոքր չափերով:

Ներկայացված վիճակագրության մեջ ամենամտահոգիչն այն է, որ հարցման մասնակիցների 21%-ի համար կենսաթոշակը հանդիսանում է (հանդիսանալու է) իրենց ընտանիքի միակ եկամուտը: Այս պատասխանի մեջ արտացոլված են Հայաստանի ներկայիս ժողովրդագրական իրավիճակի, բնակչության զբաղվածության եւ աղքատության մակարդակի հետ կապված շատ հիմնախնդիրներ: Հարցման մասնակիցների միայն 11%-ն է կենսաթոշակների հետ կապված հարցերը կարելի եղ թե իր անձնական, այլ պետության եւ հասարակության խնդիրների տեսանկյունից:

Հարցման մասնակիցների 18%-ը նշել են, որ իրենք մտահոգված չեն կենսաթոշակի հետ կապված հարցերով: Սակայն նրանց բացատրություններից կարելի է հասկանալ, որ *իրենք ոչ թե մտահոգություններ չունեն, այլ պարզապես վաղ են համարում այդ մասին մտածելը* (ընդհանուրի 14%): Հարցման մասնակիցների 3%-ը անիմաստ է համարում կենսաթոշակի մասին մտածելը դրանց *ցածր լինելու պատճառով*, իսկ 1%-ը հույս չունի, որ կհասնի կենսաթոշակային տարիքի եւ այդ պատճառով կարիք չունի մտածել կենսաթոշակի մասին:

Եթե կենսաթոշակի հետ կապված հարցերի շուրջ մտահոգությունները դիտարկվեն հանրության տարբեր խմբերի (սեռային, տարիքային, կրթական, զբաղվածության) դիրքերից

(վիճակագրությունը ներկայացված է Աղյուսակ 17-ում, տես էջ 27), ապա կարելի է նկատել հետևյալ առանձնահատկությունները.

- Ըստ սեռի՝ կենսաթոշակի հետ կապված հարցերում հանրության մտահոգությունները գրեթե նույնանման են;
- Ըստ տարիքային խմբերի՝ կենսաթոշակի հետ կապված հարցերով առավել մտահոգ են բարձր տարիքային խմբի մարդիկ: Ընդ որում՝ որքան մեծանում է մարդկանց տարիքը, այնքան ավելի ու ավելի են շատանում մարդկանց մտահոգությունները;
- Ըստ կրթական մակարդակի՝ կենսաթոշակի հետ կապված հարցերում հանրության մտահոգությունները գրեթե նույնանման են;
- Ըստ զբաղվածության կարգավիճակի՝ կենսաթոշակի հետ կապված հարցերում ամենամտահոգված խումբը *աշխատանք չունեցող թոշակառուներն են*: Նկատվում է այս խմբի բարեկեցության կախվածությունը կենսաթոշակների մեծությունից:

**Աղյուսակ 17 - Հանրության տարբեր խմբերի մտահոգվածությունը կենսաթոշակի հետ կապված հարցերով**

	Ըստ սեռի		Ըստ տարիքային խմբերի			
	Արական	Իգական	16-25 տ	26-40 տ	41-62 տ	63 տ եւ +
Շատ են մտահոգված	61%	61%	43%	43%	68%	86%
Բավականին մտահոգված են	16%	17%	19%	21%	18%	8%
Քիչ են մտահոգված	3%	4%	7%	7%	2%	1%
Մտահոգված չեն	20%	17%	31%	28%	12%	4%
Դժվարացել են պատասխանել	-	1%	0%	1%	0%	1%
<b>Ընդամենը</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>

	Ըստ կրթական մակարդակի							
	Կրթություն չունեն	Տարրական	Թերի միջնակարգ	Միջնակարգ	Միջնակարգ տեխնիկական	Թերի բարձրագույն	Բարձրագույն	Հետբուհական գիտական աստիճան
Շատ են մտահոգված	50%	75%	66%	54%	67%	66%	59%	100%
Բավականին մտահոգված են	50%	25%	14%	20%	14%	10%	18%	-
Քիչ են մտահոգված	-	-	2%	4%	3%	8%	4%	-
Մտահոգված չեն	-	-	19%	21%	15%	16%	18%	-
Դժվարացել են պատասխանել	-	-	-	1%	-	-	1%	-
<b>Ընդամենը</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>


  

	Ըստ զբաղվածության կարգավիճակի			
	Աշխատողներ	Աշխատանք չունեցողներ	Թոշակառուներ	Ուսանողներ
Շատ են մտահոգված	58%	53%	86%	53%
Բավականին մտահոգված են	18%	19%	10%	16%
Քիչ են մտահոգված	4%	4%	1%	9%
Մտահոգված չեն	18%	23%	3%	21%
Դժվարացել են պատասխանել	2%	0%	0%	0%
<b>Ընդամենը</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>

**2.2.3 Հանրության պատկերացումները կենսաթոշակային տարիքում իրենց նյութական ապահովվածության պատասխանատուի վերաբերյալ**

Կենսաթոշակային տարիքում իրենց նյութական ապահովվածության պատասխանատուի հետ կապված հարցման մասնակիցներից յուրաքանչյուրը նշել է միջին հաշվով 1.2 պատասխան: Այսինքն՝ մարդկանց 20%-ը կենսաթոշակային տարիքում իրենց նյութական ապահովվածության համար տեսնում երկու պատասխանատուների: Մարդկանց ընկալումներում, կենսաթոշակային տարիքում իրենց նյութական ապահովվածության գլխավոր պատասխանատուն *պետությունն* է: Այդ մասին միանշանակ ձեռով հայտարարել են հարցման մասնակիցների 53%-ը (տես Նկար 9):

**Նկար 9 - Հանրության պատկերացումները կենսաթոշակային տարիքում իրենց նյութական ապահովվածության պատասխանատուի վերաբերյալ**



Հարց հարցման մասնակիցներին.  
*Ո՞վ է պատասխանատու կենսաթոշակի անցնելուց հետո Ձեր նյութական ապահովվածության համար*  
! Հարցման մասնակիցները տվել են մեկից ավելի պատասխաններ


Մեր սուբյեկտիվ գնահատմամբ, սակայն, «բարեկեցիկ ծերություն» ապահովելու հարցում պետության հեղինակությունը այնքան էլ բարձր չէ: Կենսաթոշակների ներկայիս մակարդակը թույլ չի տալիս ապահովել նվազագույն սպառողական զամբյուղը, որի «մեղավորը» համարվում է պետությունը: Այդ իսկ պատճառով հանրության 47%-ը «բարեկեցիկ ծերություն» ունենալու հարցում առանձնապես հույսեր չի կապում պետության հետ: Կենսաթոշակային տարիքում նյութական ապահովվածության համար հանրության 1/3-ը հույսը դնում են անձամբ իրենց կամ ընտանիքի անդամների վրա: Ընդհանրապես նկատելի է, որ ոչ կենսաթոշակային տարիքի մարդիկ (երիտասարդները, միջին տարիքի մարդիկ) դժվարանում են երկարաժամկետ պլաններ կառուցել եւ արտահայտվել այնպիսի հարցի շուրջ, որն իրենց համար հրատապ է դառնալու տարիներ հետո: Հանրության մեծ մասի մոտ երկրի կայուն զարգացման զգացողություն չկա: Նման տրամադրվածությունը կարող է խանգարել կենսաթոշակային բարեփոխումների ընթացքին, որի համար անհրաժեշտ է երկարաժամկետ կտրվածքով մարդկանց դրական սպասումների առկայություն:

Կենսաթոշակային տարիքում իրենց նյութական ապահովվածության համար պատասխանատուի հարցում հանրության տարբեր խմբեր ունեն յուրահատուկ դիրքորոշումներ, որոնց վիճակագրությունը ներկայացված է Նկար 10-ում: Այդ հարցում հիմնական առանձնահատկությունները հետեւյալն են.

- Ըստ սեռային կազմի՝ տղամարդիկ ավելի շատ են այն խմբում, ովքեր կենսաթոշակային տարիքում նյութական ապահովվածության համար հույսը դնում են *սեփական ուժերի վրա*: Կանայք ավելի շատ են այն խմբում, ովքեր այդ հարցում պատասխանատու են համարում *պետությանը*;
- Ըստ տարիքային կազմի՝ այն խմբում, ովքեր կենսաթոշակային տարիքում նյութական ապահովվածության համար հույսը դնում են *սեփական ուժերի վրա*՝ գերակշռում են երիտասարդները: Այդ հարցում *պետության* դերը առավել շատ կարելուում են նախակենսաթոշակային տարիքային խումբը (41-62 տ):

- Ըստ կրթական մակարդակի՝ որքան բարձր է մարդկանց կրթական մակարդակը, այնքան կենսաթոշակային տարիքում նյութական ապահովվածության համար պատասխանատու է դիտվում *պետությունը*: Որքան ցածր է մարդկանց կրթական մակարդակը, այնքան նրանք կարելի էր են *ընտանիքի անդամների* դերը: Այս հարցում ուշագրավն այն է, որ հիմնականում բարձրագույն կրթություն ունեն այն մարդիկ, ովքեր կենսաթոշակային տարիքում նյութական ապահովվածության համար պատասխանատու են համարում *միաժամանակ եւ պետությանը, եւ իրենք իրենց*:

Նկար 10 - Հանրության տարբեր խմբերի պատկերացումները կենսաթոշակային տարիքում իրենց նյութական ապահովվածության պատասխանատուի վերաբերյալ




	Ըստ կրթական մակարդակի							
	Կրթություն չունեն	Տարրական	Թերի միջնակարգ	Միջնակարգ	Միջնակարգ սուբսիդիական	Թերի բարձրագույն	Բարձրագույն	Հետբուհական գիտական աստիճան
Ես ինքս	50%	25%	31%	28%	26%	34%	40%	13%
Ընտանիքի անդամները	50%	100%	29%	39%	33%	18%	27%	0%
Հարազատներս	0%	0%	3%	4%	3%	4%	3%	0%
Պետությունը	50%	0%	53%	51%	58%	62%	50%	88%
Դժվարացել են պատասխանել	0%	0%	2%	2%	1%	0%	2%	0%

**2.2.4 Հանրության պատկերացումները կենսաթոշակային տարիքում իրենց եկամուտների աղբյուրների վերաբերյալ**

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ հանրության 72%-ի համար կենսաթոշակային տարիքում եկամտի հիմնական աղբյուրը լինելու է (կամ է) *կենսաթոշակը*: Սա վկայում է այն մասին, որ կենսաթոշակի անցնելուց հետո հանրությունը մեծ կախվածության մեջ կլինի (կամ է) կենսաթոշակներից, ինչը լուրջ մարտահրավեր պետք է դիտվի ՀՀ Կառավարության համար: Ինչպես եւ նախորդ դեպքում, հանրության մի մասը (19%) կենսաթոշակի անցնելուց հետո իր համար տեսնում է եկամուտի երկու աղբյուրներ: Հանրության այդ մասը բարեկեցիկ ապրուստի համար կենսաթոշակի չբավարարող մասը կարող է փոխհատուցել *ընտանիքի անդամներից ստացած օգնության* հաշվին (27%), շատ ավելի փոքր խմբեր կծախսեն իրենց ինսայդությունները (5%), կշարունակեն անձամբ աշխատել գյուղատնտեսության մեջ (5%), որպես գործարար կամ վարձու աշխատող իրենց գործունեությունը կշարունակեն հարցման մասնակիցների 4-ական տոկոսը (տես Նկար 11):

**Նկար 11 - Հանրության պատկերացումները կենսաթոշակային տարիքում եկամուտների աղբյուրների վերաբերյալ**



Ըստ հանրության տարբեր խմբերի, կենսաթոշակային տարիքում իրենց եկամուտների վերաբերյալ առկա են հետեւյալ կարծիքները (տես նաեւ Աղյուսակ 18).

- Ըստ սեռի՝ կենսաթոշակային տարիքում կենսաթոշակից, որպես եկամուտի աղբյուրի, ավելի մեծ կախվածություն կունենան կանայք (74%), քան տղամարդիկ (66%);
- Ըստ տարիքային խմբերի՝ որքան մեծանում է մարդկանց տարիքը, այնքան եկամուտի աղբյուրների մեջ մեծանում է կենսաթոշակի դերը: Կենսաթոշակային տարիքում այլ աղբյուրներից եկամուտներ ունենալու հարցում ավելի մեծ սպասումներ ունեն երիտասարդները, ամենից շատ՝ 16-25 տ տարիքային խումբը:
- Կրթական մակարդակով բնորոշվող հանրության խմբերի մեջ դժվար է առանձնացնել ընդհանուրից տարբերվող որեւէ խումբ: Նկատելի է, որ որքան ցածր է մարդկանց կրթական մակարդակը, այնքան մեծ է կենսաթոշակի նկատմամբ նրանց սպասումները: Թերի կամ լրիվ բարձրագույն կրթությամբ հարցման մասնակիցների շրջանում համեմատաբար շատ են այն մարդիկ, ովքեր կարծում են, որ կենսաթոշակային տարիքում եկամուտներ կունենան իրենց մասնավոր բիզնեսից: Սակայն, ընդհանուր առմամբ, բոլոր

տարիքային խմբերի համար կենսաթոշակային տարիքում գլխավոր եկամուտ է դիտվում կենսաթոշակը:

Աղյուսակ 18 - Հանրության տարբեր խմբերի պատկերացումները կենսաթոշակային տարիքում իրենց եկամուտների աղբյուրների վերաբերյալ

	Ըստ սեռի		Ըստ տարիքային խմբերի			
	Արական	Իգական	16-25 տ	26-40 տ	41-62 տ	63 տ եւ +
Կենսաթոշակը	66%	74%	69%	61%	75%	81%
Ընտանիքի անդամների օգնությունը	26%	27%	24%	29%	26%	28%
Եկամուտը գյուղ. գործունեությունից	5%	5%	6%	5%	5%	3%
Նախապես խնայած գումարը	6%	4%	9%	5%	4%	2%
Աշխատավարձը	7%	3%	4%	4%	4%	5%
Մասնավոր բիզնեսը	7%	3%	9%	7%	2%	1%
Հարազատների օգնությունը	1%	2%	3%	3%	2%	1%
Այլ թոշակը կամ նպաստը	1%	1%	1%	0%	0%	1%
Դժվարացել են պատասխանել	7%	3%	5%	4%	6%	1%

	Ըստ կրթական մակարդակի							
	Կրթություն չունեն	Տարրական	Թերի միջնակարգ	Միջնակարգ	Միջնակարգ տեխնիկական	Թերի բարձրագույն	Բարձրագույն	Հետբուհական գիտական աստիճան
Կենսաթոշակը	100%	25%	75%	69%	76%	78%	70%	75%
Ընտանիքի անդամների օգնությունը	-	100%	27%	32%	27%	22%	23%	-
Եկամուտը գյուղ. գործունեությունից	-	-	3%	8%	5%	2%	2%	-
Նախապես խնայած գումարը	-	-	5%	6%	5%	6%	3%	-
Աշխատավարձը	-	-	7%	2%	3%	4%	7%	13%
Մասնավոր բիզնեսը	-	-	3%	4%	3%	8%	5%	-
Հարազատների օգնությունը	-	-	2%	1%	3%	2%	3%	-
Այլ թոշակը կամ նպաստը	-	-	-	1%	1%	-	1%	-
Դժվարացել են պատասխանել	-	-	5%	2%	2%	4%	7%	25%




### 3 ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԲԱՐԵՓՈՒՄՆԵՐ. ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ, ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆԶ, ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐ ԵՎ ՄՏԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

#### 3.1 ԶԱՆՐԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԲԱՐԵՓՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

##### 3.1.1 Հանրության ընդհանուր տեղեկացվածությունը սպասվող բարեփոխումների մասին

Համաձայն հետազոտության արդյունքների, հարցման մասնակիցների 36%-ը հայտնել են, որ իրենք *տեղյակ են կամ լսել են* ՀՀ Կառավարության նախաձեռնած կենսաթոշակային բարեփոխումների մասին (տես Նկար 12): Շատ դժվար է այդ ցուցանիշին միանշանակ բնորոշում տալ՝ բա՞րձր է այն, թե՞ ցածր: Եթե հարցին նայենք այն տեսանկյունից, որ կենսաթոշակային բարեփոխումների վերաբերյալ շահագրգիռ մարմինների կողմից սփռվող տեղեկատվությունը եւ հանրային քննարկումները առավել ինտենսիվ բնույթ են ստացել 2010թ.-ի երկրորդ կեսին (հետազոտությունից ընդամենը մի քանի ամիս առաջ), ապա 36% տեղեկացվածությունը կարելի է համարել բավարար: Մյուս կողմից՝ եթե հաշվի առնենք երկրի համար այդ բարեփոխումների նշանակությունը եւ հանրության տարբեր շերտերի ընդգրկման մասշտաբը, ապա 36% տեղեկացվածությունը կարելի է համարել բավականին ցածր:

Նկար 12 - Հանրության տեղեկացվածությունը կենսաթոշակային բարեփոխումների մասին



Կենսաթոշակային բարեփոխումների մասին հանրային տեղեկացվածության առավել ճիշտ ընկալման համար պետք է ուշադրություն դարձնել մի կարեւոր հանգամանքի վրա: Անշուշտ, հանրության 36%-ը տեղյակ է կամ լսել է կենսաթոշակային բարեփոխումների մասին: Սակայն նրանց տեղեկություններն այդ բարեփոխումների մասին **խիստ ֆրագմենտավորված են**: Ոմանք տեղյակ են *բազմաստիճան կենսաթոշակային համակարգի ներդրման մասին*, ոմանք՝ *ըստ տարիքային խմբերի առանձնահատկությունների մասին*, ոմանք էլ՝ *նոր համակարգի ներդրման ժամկետների մասին*: Շատ դժվար է հանդիպել մարդկանց, ովքեր կենսաթոշակային բարեփոխումների բոլոր բաղկացուցիչների մասին ունեն ամբողջական տեղեկություններ: Առավել դժվար է հանդիպել մարդկանց, ովքեր այդ բոլոր բաղկացուցիչների մասին ունեն **ճիշտ** տեղեկություններ:

Մեկ կարեւոր հանգամանք եւս: Հետազոտության ընթացքում հանդիպել են մարդիկ, ովքեր հայտնել են, թե *չեն լսել կենսաթոշակային բարեփոխումների մասին, բայց լսել են կուտակային կենսաթոշակային համակարգի մասին*: Սա վկայում է այն մասին, որ այդ մարդիկ տեղյակ չեն, որ կուտակային կենսաթոշակային համակարգը կապ ունի կամ մաս է կազմում կենսաթոշակային բարեփոխումներին: Ուստի այն հանգամանքը, որ հանրության 36%-ը պարզապես լսել է կենսաթոշակային բարեփոխումների մասին, դեռեւս օբյեկտիվ հիմք չի կարող ծառայել տեղեկացվածության գնահատման համար: Այդ պատճառով կենսաթոշակային բարեփոխումների մասին հանրային տեղեկացվածության գնահատումն իրականացվել է **ըստ այդ բարեփոխումների առանձին բաղկացուցիչների**, ինչը ներկայացված է հաջորդ բաժիններում:


Հանրության տարբեր խմբերը կենսաթոշակային բարեփոխումների մասին ունեն իրարից տարբերվող տեղեկություններ (տես Նկար 13).

- Ըստ սեռի՝ կենսաթոշակային բարեփոխումների մասին մի փոքր ավելի տեղյակ են տղամարդիկ (38%), քան կանայք (36%);
- Ըստ տարիքային խմբերի՝ հնարավոր է, որ կենսաթոշակային բարեփոխումների նկատմամբ առավել մեծ հետաքրքրություն է ցուցաբերում այսպես կոչված «նախակենսաթոշակային» տարիքային խումբը (41-62 տ): Այս խմբի 43%-ը հայտնել է, որ լսել է կենսաթոշակային բարեփոխումների մասին;
- Կրթական մակարդակով բնորոշվող հանրության խմբերի մեջ կենսաթոշակային բարեփոխումների մասին ավելի շատ տեղյակ են բարձր կրթական մակարդակ ունեցող մարդիկ: Ընդ որում՝ որքան բարձրանում է մարդկանց կրթական մակարդակը, այնքան բարձր է նաեւ նրանց տեղեկացվածության աստիճանը;
- Կենսաթոշակային բարեփոխումների մասին ավելի շատ տեղյակ են *աշխատանք ունեցող* մարդիկ (46%): Ի տարբերություն նրանց, գործազուրկները, երիտասարդները եւ թոշակառուները ավելի քիչ են տեղեկացված:

Նկար 13 - Հանրության տարբեր խմբերի տեղեկացվածությունը կենսաթոշակային բարեփոխումների մասին

Հարց հարցման մասնակիցներին.


*Լսե՞լ եք արդյոք թե՛ Կառավարության նախաձեռնած կենսաթոշակային բարեփոխումների մասին*



### 3.1.2 Կենսաթոշակային բարեփոխումների մասին հանրության տեղեկացվածության աղբյուրները

Կենսաթոշակային բարեփոխումների մասին հանրության տեղեկացվածության աղբյուրներն են զանգվածային լրատվության գրեթե բոլոր միջոցները: Հարցման մասնակիցներից ոմանք կենսաթոշակային բարեփոխումների մասին լսել են մեկ աղբյուրից, իսկ ոմանք էլ՝ մի քանի աղբյուրներից: Կենսաթոշակային բարեփոխումների մասին տեղյակ հանրությունը (ընդհանուրի 36%), որպես տեղեկատվության աղբյուր, առավել հաճախ նշել են *հեռուստատեսությունը* (32%).

Նկար 14 - Կենսաթոշակային բարեփոխումների մասին հանրության տեղեկացվածության աղբյուրները



Ներկայացված վիճակագրությունը ճիշտ ընկալելու համար պետք է նկատի ունենալ մի կարեւոր հանգամանք: Այս թվերը չեն նշանակում, որ մարդիկ ավելի շատ հեռուստատեսություն են դիտում, քան թերթ են կարդում կամ ինտերնետից օգտվում: Պարզապես դրանք տեղեկատվության այն աղբյուրներ են, որոնցով կենսաթոշակային բարեփոխումների մասին տեղեկություններ են սփռվել եւ որոնք, ըստ ամենայնի, հիշվել են մարդկանց կողմից:

Ըստ հանրության տարբեր խմբերի, կենսաթոշակային բարեփոխումների մասին տեղեկատվության ստացման աղբյուրների կազմը մի փոքր տարբեր է (տես Աղյուսակ 19): Մասնավորապես՝

- Ըստ սեռի՝ կանանց շրջանում կենսաթոշակային բարեփոխումների մասին տեղեկացվածության առավել հաճախ նշվող աղբյուրը հեռուստատեսությունն է (32%): Պատկերը նույնն է նաեւ տղամարդկանց շրջանում (33%): Սակայն, ի տարբերություն կանանց, տղամարդիկ երկու անգամ ավելի շատ են տեղեկություններ ստանում *թերթերից* (5%) եւ *ռադիոյից* (2%);
- Ըստ տարիքային խմբերի՝ հեռուստատեսությունը, որպես կենսաթոշակային բարեփոխումների մասին տեղեկացվածության աղբյուր, ավելի հաճախ է նշվել համեմատաբար ավագ տարիքի խմբերի (41 տ-ից ավել) շրջանում;
- Կրթական մակարդակով բնորոշվող հանրության խմբերի շրջանում որքան բարձրանում է կրթական մակարդակը, այնքան ավելի բազմազան են տեղեկատվության աղբյուրները;
- Ըստ զբաղվածության կարգավիճակի՝ աշխատանք ունեցող մարդկանց շրջանում տեղեկատվության աղբյուրներն ավելի բազմազան են:

**Աղյուսակ 19 - Կենսաթոշակային բարեփոխումների մասին հանրության տարբեր խմբերի տեղեկացվածության աղբյուրները**

	Ըստ սեռի		Ըստ տարիքային խմբերի			
	Արական	Իգական	16-25 տ	26-40 տ	41-62 տ	63 տ եւ +
Յեռուստատեսություն	33%	32%	28%	23%	39%	35%
Ծանոթներ, բարեկամներ, ընկերներ	4%	4%	4%	4%	4%	2%
Մամուլ	5%	2%	1%	1%	4%	5%
Ռադիո	2%	1%	1%	0%	3%	1%
Ինտերնետ	1%	1%	1%	1%	1%	2%
Բուկլետներ, տեղեկատվ. թերթիկներ	1%	0%	-	0%	0%	1%
Կենսաթոշակային համակարգի հետ ունեցած շփումներ	-	0%	-	-	0%	1%
Չգիտեն	-	0%	1%	0%	-	-
Չեն լսել կենսաթոշակային բարեփոխումների մասին	62%	64%	69%	71%	57%	61%


	Ըստ կրթական մակարդակի							
	Կրթություն չունեն	Տարրական	Թերի միջնակարգ	Միջնակարգ	Միջնակարգ տեխնիկական	Թերի բարձրագույն	Բարձրագույն	Հետբուհական գիտական աստիճան
Յեռուստատեսություն	-	-	29%	21%	34%	20%	44%	50%
Ծանոթներ, բարեկամներ, ընկերներ	-	-	2%	2%	4%	4%	6%	-
Մամուլ	-	-	2%	0%	2%	6%	5%	50%
Ռադիո	-	-	-	1%	1%	2%	2%	13%
Ինտերնետ	-	-	-	0%	1%	-	2%	13%
Բուկլետներ, տեղեկատվ. թերթիկներ	-	-	-	-	-	-	1%	-
Կենսաթոշակային համակարգի հետ ունեցած շփումներ	-	-	-	-	-	-	1%	-
Չգիտեն	-	-	-	-	-	2%	0%	-
Չեն լսել կենսաթոշակային բարեփոխումների մասին	100%	100%	69%	78%	62%	72%	50%	13%

	Ըստ զբաղվածության կարգավիճակի			
	Աշխատողներ	Աշխատանք չունեցողներ	Թոշակառուներ	Ուսանողներ
Յեռուստատեսություն	41%	29%	30%	28%
Ծանոթներ, բարեկամներ, ընկերներ	5%	4%	2%	7%
Մամուլ	5%	1%	4%	5%
Ռադիո	3%	1%	1%	-
Ինտերնետ	2%	0%	1%	-
Բուկլետներ, տեղեկատվ. թերթիկներ	1%	-	-	-
Կենսաթոշակային համակարգի հետ ունեցած շփումներ	0%	0%	-	-
Չգիտեն	-	0%	-	-
Չեն լսել կենսաթոշակային բարեփոխումների մասին	54%	67%	66%	70%


### 3.1.3 Չանրության տեղեկացվածությունը կուտակային կենսաթոշակային համակարգի մասին

Ինչպես արդեն նշվել է, ոչ բոլոր մարդիկ են ընկալում, որ կուտակային կենսաթոշակային համակարգը կապված է կամ մաս է կազմում Չայաստանում իրականացվող կենսաթոշակային բարեփոխումներին: Դրա վկայությունն է այն, որ կուտակային կենսաթոշակային համակարգի մասին լսել են հարցման մասնակիցների 40%-ը (տես Նկար 15), այն դեպքում, երբ նրանց 36%-ն էր հայտնել, թե իրենք լսել են կենսաթոշակային բարեփոխումների մասին:

Նկար 15 - Չանրության տեղեկացվածությունը կուտակային կենսաթոշակային համակարգի մասին



Նկար 16 - Չանրության տարբեր խմբերի տեղեկացվածությունը կուտակային կենսաթոշակային համակարգի մասին




Կուտակային կենսաթոշակային համակարգի մասին ավելի շատ տեղեկացված են. ըստ սեռի՝ տղամարդիկ (45%), ըստ տարիքային խմբերի՝ «նախակենսաթոշակային» տարիքային խումբը

(41-62 տ) (49%): Կրթական մակարդակով բնորոշվող հանրության խմբերի շրջանում որքան բարձր է մարդկանց կրթական մակարդակը, այնքան ավելի բարձր է կուտակային կենսաթոշակային համակարգի մասին նրանց տեղեկացվածության մակարդակը (տես Նկար 16):

Ուշագրավ է նաեւ կուտակային կենսաթոշակային համակարգի մասին տեղեկացվածությունը ըստ հարցման մասնակիցների բնակության վայրերի: Այսպես, **կուտակային կենսաթոշակային համակարգի մասին լսել է Երեւանի բնակչության 53%-ը, մարզերի քաղաքների բնակչության 36%-ը եւ գյուղերի բնակչության ընդամենը 30%-ը:**

Ջետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ կուտակային կենսաթոշակային համակարգի մասին մարդկանց պատկերացումները եւ ընկալումները *շատ ընդհանուր են, մասամբ ճիշտ եւ մասամբ՝ սխալ*: Ստորեւ ներկայացված են կուտակային կենսաթոշակային համակարգի վերաբերյալ հանրության ընկալումները բնութագրող պատասխանների վիճակագրությունը:

**Նկար 17 - Կուտակային կենսաթոշակային համակարգի վերաբերյալ հանրության ընկալումները**



**Աղյուսակ 20 - Կուտակային կենսաթոշակային համակարգի վերաբերյալ հանրության տարբեր խմբերի ընկալումները**

	Ըստ սեռի	
	Արական	Իգական
Ձեւավորվելու է աշխատավարձից տոկոսներ մուծելու եղանակով	25%	20%
Գումար է կուտակվելու եւ վերադարձվելու է կենսաթոշակի տեսքով	8%	10%
Ձեւավորվելու է աշխատավարձից տոկոսների եւ պետության ներդրման հաշվին	4%	2%
Թոշակառուներից գումար է գանձվելու	1%	1%
Գումար կուտակվելու համակարգ է	1%	1%
Չգիտեն	5%	5%
Չեն լսել կուտակային կենսաթոշակային համակարգի մասին	55%	63%
<b>Ընդամենը</b>	<b>100%</b>	<b>100%</b>

	Ըստ տարիքային խմբերի			
	16-25 տ	26-40 տ	41-62 տ	63 տ եւ +
Ձեւավորվելու է աշխատավարձից տոկոսներ մուծելու եղանակով	15%	16%	26%	22%
Գումար է կուտակվելու եւ վերադարձվելու է կենսաթոշակի տեսքով	4%	9%	11%	9%
Ձեւավորվելու է աշխատավարձից տոկոսների եւ պետության ներդրման հաշվին	1%	2%	4%	2%
Թոշակառուներից գումար է գանձվելու	1%	1%	2%	1%
Գումար կուտակվելու համակարգ է	1%	1%	1%	1%
Չգիտեն	2%	7%	5%	4%
Չեն լսել կուտակային կենսաթոշակային համակարգի մասին	75%	64%	51%	62%
<b>Ընդամենը</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>

	Ըստ կրթական մակարդակի							
	Կրթության չունեն	Տարրական	Թերի միջնակարգ	Միջնակարգ	Միջնակարգ տեխնիկական	Թերի բարձրագույն	Բարձրագույն	Չեթուրական գիտական աստիճան
Ձեւավորվելու է աշխատավարձից տոկոսներ մուծելու եղանակով	-	-	7%	9%	19%	24%	35%	75%
Գումար է կուտակվելու եւ վերադարձվելու է կենսաթոշակի տեսքով	50%	-	5%	7%	9%	12%	11%	-
Ձեւավորվելու է աշխատավարձից տոկոսների եւ պետության ներդրման հաշվին	-	-	2%	2%	3%	-	3%	-
Թոշակառուներից գումար է գանձվելու	-	-	-	1%	2%	-	1%	-
Գումար կուտակվելու համակարգ է	-	-	2%	1%	-	4%	1%	-
Չգիտեն	-	-	-	4%	6%	10%	5%	13%
Չեն լսել կուտակային կենսաթոշակային համակարգի մասին	50%	100%	84%	76%	62%	50%	43%	12%
<b>Ընդամենը</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>

Չեթուրական արդյունքները ցույց են տալիս, որ «լսած լինել» կուտակային կենսաթոշակային համակարգի մասին՝ դեռ չի նշանակում, որ մարդիկ իրապես տիրապետում են այդ համակարգի առանձնահատկություններին կամ գիտեն, թե այն ինչ է իրենից ներկայացնելու: Չայաստանում իրականացվող կենսաթոշակային բարեփոխումների առանցքային հարցերը հետեւյալն են.


- ա) ի՞նչ սկզբունքով է ներդրվելու/գործելու կուտակային կենսաթոշակային համակարգը՝ կամավո՞ր, թե պարտադիր,
- բ) ե՞րբ է նախատեսվում ներդնել կուտակային կենսաթոշակային համակարգը,
- գ) ովքե՞ր կարող են կամ պետք է դառնան նոր համակարգի մասնակիցները,
- դ) ի՞նչ աղբյուրներից է կուտակվելու ապագա կենսաթոշակի գումարները:

Այս հարցերի շուրջ ճիշտ կամ սխալ տեղեկություններն են, որ մարդկանց մոտ ձեւավորում են դրական կամ բացասական սպասումներ եւ վերաբերմունք: Ուստի կենսաթոշակային բարեփոխումների վերաբերյալ հանրության տեղեկացվածության առավել օբյեկտիվ պատկերացումը կարելի է ձեւավորել այդ կոնկրետ հարցերի մասին հարցման մասնակիցների պատասխանների հիման վրա:

**3.1.4 Հանրության տեղեկացվածությունը կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման սկզբունքների մասին**

Հայաստանի ապագա կենսաթոշակային համակարգը, որը կծեւավորվի համակարգային բարեփոխումների արդյունքում, իրենից ներկայացնում է **բազմաստիճան կենսաթոշակային համակարգ**, որի պայմաններում **միաժամանակ կգործեն եւ բաշխողական, եւ կուտակային կենսաթոշակային համակարգերը**: Կենսաթոշակային համակարգի բարեփոխումների գլխավոր նորամուծությունը կայանում է կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման մեջ: Այն գործելու է **կամավոր եւ պարտադիր սկզբունքներով**: Նախատեսվում է, որ 2011թ.-ին կգործարկվի կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգը, իսկ 2014թ.-ին՝ պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգը: Հետեւաբար՝ ճիշտ պատասխանը, թե *ի՞նչ սկզբունքով է ներդրվելու կուտակային կենսաթոշակային համակարգը*, պետք է լիներ «*միաժամանակ եւ կամավոր, եւ պարտադիր*»: Նկար 18-ում եւ Աղյուսակ 21-ում ներկայացված է հարցման մասնակիցների կողմից այս հարցին տրված պատասխանների վիճակագրությունը:

**Նկար 18 - Հանրության տեղեկացվածությունը նոր կենսաթոշակային համակարգի ներդրման սկզբունքների մասին**



**Աղյուսակ 21 - Հանրության տարբեր խմբերի տեղեկացվածությունը նոր կենսաթոշակային համակարգի ներդրման սկզբունքների մասին**

	Ըստ սեռի		Ըստ տարիքային խմբերի			
	Արական	Իգական	16-25 տ	26-40 տ	41-62 տ	63 տ եւ +
Կամավոր	14%	13%	10%	15%	17%	7%
<b>Միաժամանակ եւ պարտադիր, եւ կամավոր</b>	<b>11%</b>	<b>9%</b>	<b>7%</b>	<b>7%</b>	<b>13%</b>	<b>9%</b>
Պարտադիր	13%	7%	6%	8%	10%	12%
Սկզբունքավոր, հետո պարտադիր	0%	0%	-	-	-	1%
Չգիտեն	6%	7%	2%	6%	8%	10%
Չեն լսել կուտակային կենսաթոշակային համակարգի մասին	55%	63%	75%	64%	51%	62%
<b>Ընդամենը</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>



	Ըստ կրթական մակարդակի							
	Կրթություն չունեն	Տարրական	Թերի միջնակարգ	Միջնակարգ	Միջնակարգ տեխնիկական	Թերի բարձրագույն	Բարձրագույն	Դե տրուիական գիտական աստիճան
Կամավոր	50%	-	3%	4%	8%	8%	14%	38%
<b>Միաժամանակ եւ պարտադիր, եւ կամավոր</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>3%</b>	<b>8%</b>	<b>17%</b>	<b>14%</b>	<b>17%</b>	<b>25%</b>
Պարտադիր	-	-	3%	5%	6%	18%	16%	13%
Սկզբում կամավոր, հետո պարտադիր	-	-	-	-	-	-	1%	-
Զգիտեն	-	-	5%	6%	7%	10%	8%	13%
Զեն լսել կուտակային կենսաթոշակային համակարգի մասին	50%	100%	84%	76%	62%	50%	43%	12%
<b>Ընդամենը</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>

(\* ) - ճիշտ պատասխաններն ընդգծված են

Հաշվի առնելով կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման փուլայնությունը (2011թ.-ին՝ կամավոր, 2014թ.-ին՝ պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգերի ներդրում), տեսականորեն կարելի է ճիշտ համարել նաեւ «սկզբում կամավոր, հետո պարտադիր» պատասխանը: Սակայն այն փոքրաթիվ հարցման մասնակիցները (0.3%), ովքեր այդպես են պատասխանել, նկատի են ունեցել *սկզբում միայն կամավոր, հետո՝ միայն պարտադիր*, ինչն անշուշտ, ճիշտ չէ:


Նկար 18-ի տվյալներից երեւում է, որ հանրության միայն 10%-ը ճիշտ գիտի, որ կուտակային կենսաթոշակային համակարգը գործելու է միաժամանակ կամավոր եւ պարտադիր սկզբունքներով: Հանրության 23%-ն ունի *մասնակի ճիշտ* տեղեկություններ (միայն կամավոր կամ միայն պարտադիր): Սակայն դա հավասարազոր է սխալ պատասխանի, քանի որ այդ սկզբունքներից մեկի բացակայությունը իսպառ աղավաղում է բարեփոխումների ելությունը:

### 3.1.5 Հանրության տեղեկացվածությունը կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման ժամկետների մասին

Հայաստանի կենսաթոշակային համակարգի բարեփոխումների ծրագրով նախատեսվում է կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրում **2011թ.**-ին: Ընդ որում՝ այդ տարում կգործարկվի կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգը, իսկ **2014թ.**-ին՝ պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգը: Հետեւաբար՝ ճիշտ պատասխանը, թե ե՞րբ է նախատեսվում ներդնել կուտակային կենսաթոշակային համակարգը՝ պետք է լիներ միանշանակ՝ «կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգի դեպքում՝ 2011թ.-ին» եւ «պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի դեպքում՝ 2014թ.-ին»:

Նկար 19-ում եւ Աղյուսակ 22-ում ներկայացված է հարցման մասնակիցների կողմից այս հարցին տրված պատասխանների վիճակագրությունը:

Նկար 19 - Հանրության տեղեկացվածությունը նոր կենսաթոշակային համակարգի ներդրման ժամկետների մասին



Աղյուսակ 22 - Հանրության տարբեր խմբերի տեղեկացվածությունը նոր կենսաթոշակային համակարգի ներդրման ժամկետների մասին

ԿԱՄԱՎՈՐ կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման ժամկետները			ՊԱՐՏԱԴԻՐ կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման ժամկետները		
Համակարգի ներդրման ժամկետը	Ըստ սեռի		Համակարգի ներդրման ժամկետը	Ըստ սեռի	
	Արական	Իգական		Արական	Իգական
Արդեն ներդրված է	1%	-	2010-2013	6%	5%
2010	1%	0%	<b>2014 *</b>	<b>6%</b>	<b>3%</b>
<b>2011 *</b>	<b>13%</b>	<b>12%</b>	2015-2020	1%	1%
2012-2020	4%	4%	Չգիտեն	31%	28%
Չգիտեն	26%	22%	Չեն լսել կուտակային կենսաթոշակային համակարգի մասին	55%	63%
Չեն լսել կուտակային կենսաթոշակային համակարգի մասին	55%	63%	<b>Ընդամենը</b>	<b>100%</b>	<b>100%</b>
<b>Ընդամենը</b>	<b>100%</b>	<b>100%</b>			

Համակարգի ներդրման ժամկետը	Ըստ տարիքային խմբերի				Համակարգի ներդրման ժամկետը	Ըստ տարիքային խմբերի			
	16-25 տ	26-40 տ	41-62 տ	63տ եւ +		16-25 տ	26-40 տ	41-62 տ	63տ եւ +
Արդեն ներդրված է	-	0%	0%	1%	2010-2013	2%	5%	6%	8%
2010	-	-	0%	-	<b>2014 *</b>	<b>-</b>	<b>3%</b>	<b>5%</b>	<b>8%</b>
<b>2011 *</b>	<b>6%</b>	<b>12%</b>	<b>16%</b>	<b>10%</b>	2015-2020	-	1%	-	1%
2012-2020	3%	3%	4%	5%	Չգիտեն	21%	27%	37%	23%
Չգիտեն	15%	21%	28%	23%	Չեն լսել կուտակային կենսաթոշակային համակարգի մասին	75%	64%	51%	62%
Չեն լսել կուտակային կենսաթոշակային համակարգի մասին	75%	64%	51%	62%	<b>Ընդամենը</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>
<b>Ընդամենը</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>					

Համակարգի ներդրման ժամկետը	Ըստ կրթական մակարդակի							
	Կրթություն չունեն	Տարրական	Թերի միջնակարգ	Միջնակարգ	Միջնակարգ տեխնիկական	Թերի բարձրագույն	Բարձրագույն	Հետբուհական գիտական աստիճան
Արդեն ներդրված է	-	-	-	1%	1%	-	-	-
2010	-	-	-	0%	0%	-	-	-
<b>2011 *</b>	-	-	<b>3%</b>	<b>7%</b>	<b>13%</b>	<b>14%</b>	<b>17%</b>	<b>25%</b>
2012-2020	-	-	-	2%	4%	6%	6%	-
Զգիտեն	50%	-	12%	15%	20%	32%	33%	63%
Զեն լսել կուտակային կենսաթոշակային համակարգի մասին	50%	100%	84%	76%	62%	50%	43%	12%
<b>Ընդամենը</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>

Համակարգի ներդրման ժամկետը	Ըստ կրթական մակարդակի							
	Կրթություն չունեն	Տարրական	Թերի միջնակարգ	Միջնակարգ	Միջնակարգ տեխնիկական	Թերի բարձրագույն	Բարձրագույն	Հետբուհական գիտական աստիճան
2010-2013	-	-	-	3%	4%	10%	8%	50%
<b>2014 *</b>	-	-	<b>3%</b>	<b>3%</b>	<b>3%</b>	<b>4%</b>	<b>7%</b>	-
2015-2020	-	-	-	-	0%	-	2%	-
Զգիտեն	50%	-	12%	18%	30%	36%	41%	38%
Զեն լսել կուտակային կենսաթոշակային համակարգի մասին	50%	100%	84%	76%	62%	50%	43%	12%
<b>Ընդամենը</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>

(\* ) - ճիշտ պատասխաններն ընդօժված են

Բերված տվյալներից նկատելի է, որ հանրությունը մի փոքր ավելի լավ է տեղեկացված կամավոր, քան թե պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման մասին: Հնարավոր է դա նրանից է, որ կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրումը նախատեսվում է արդեն այս տարի (2011թ.-ին) եւ դրա մասին ավելի ու ավելի հաճախ է խոսվում եւ քննարկվում: Ինչպես եւ նախորդ բոլոր դեպքերում, կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման ժամկետների մասին մի փոքր ավելի տեղյակ են տղամարդիկ, «նախակենսաթոշակային» տարիքային խումբը (41-62 տ) եւ առավել բարձր կրթական մակարդակ ունեցողները: Պատկերը գրեթե նույնն է պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման ժամկետների դեպքում, բացառությամբ միայն տարիքային խմբի: Այստեղ մի փոքր ավելի տեղեկացված է եղել կենսաթոշակային տարիքային խումբը (63 տ եւ +):

### 3.1.6 Հանրության տեղեկացվածությունը պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակիցների մասին


Կուտակային կենսաթոշակային համակարգին միանալը **պարտադիր է լինելու** 1974թ. հունվարի 1-ից հետո ծնված բոլոր քաղաքացիների համար, այսինքն՝ կիրառման առաջին տարում (2014թ.) մինչեւ 40 տարեկան կամ այդ տարվա ընթացքում 40 տարեկան դարձող անձանց համար: Դա նշանակում է, որ հետազոտության իրականացման պահին (2010թ. դեկտեմբեր) հանրության այդ խումբը կազմված էր **մինչեւ 37 տարեկան** անձանցից: Հետեւաբար՝ ճիշտ պատասխանը, թե *ովքե՞ր են լինելու պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակիցները՝ պետք է լինե՞ր «հարցման պահին մինչեւ 37 տարեկան անձինք»* կամ *«2014թ. դրությամբ մինչեւ 41 տարեկան անձինք»*: Նկար 20-ում ներկայացված է հարցման մասնակիցների կողմից այս հարցին տրված պատասխանների վիճակագրությունը:

**Նկար 20 - Հանրության տեղեկացվածությունը պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակիցների մասին**

Հարց հարցման մասնակիցներին.

**Չիտե՞ք, թե ովքեր են լինելու ՊԱՐՏԱԴՐԻԿ կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակիցները**

! Հարցման մասնակիցները տվել են մեկից ավելի պատասխաններ



(\* ) - «Այլ պատասխաններ» խմբում ընդգրկված են հարցման մասնակիցների կողմից տրված 15 տեսակի պատասխաններ, որոնցից յուրաքանչյուրը հիշատակվել է ոչ ավել, քան 8 անգամ (ոչ ավել, քան 1%): Պատասխանների այս խմբում կարելի է հանդիպել. Մխալ տարիքային շեմի նշումով պատասխաններ, պետական հիմնարկներում աշխատողները (0.8%), ղեկավար անձինք (0.6%) եւ այլն:

**Աղյուսակ 23 - Հանրության տարբեր խմբերի տեղեկացվածությունը պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակիցների մասին**

	Ըստ սեռի		Ըստ տարիքային խմբերի			
	Արական	Իգական	16-25 տ	26-40 տ	41-62 տ	63 տ եւ +
Բոլոր նրանք, ովքեր ներկայումս աշխատում են	20%	15%	12%	17%	18%	17%
<b>40 տ-ից ցածր անձինք *</b>	<b>6%</b>	<b>6%</b>	<b>1%</b>	<b>4%</b>	<b>9%</b>	<b>8%</b>
Բոլոր նրանք, ովքեր նոր են սկսում աշխատել	2%	2%	3%	1%	2%	4%
30 տ-ից ցածր անձինք	1%	2%	1%	1%	2%	1%
Բոլորը	0%	1%	1%	-	2%	-
Այլ պատասխաններ	5%	5%	3%	5%	7%	4%
Չգիտեն	11%	7%	3%	9%	10%	6%
Գնել լսել կուտակային կենսաթոշակային համակարգի մասին	55%	62%	75%	62%	51%	62%

	Ըստ կրթական մակարդակի							
	Կրթություն չունեն	Տարրական	Թերի միջնակարգ	Միջնակարգ	Միջնակարգ տեխնիկական	Թերի բարձրագույն	Բարձրագույն	Հետբուհական գիտական աստիճան
Բոլոր նրանք, ովքեր ներկայումս աշխատում են	-	-	3%	8%	14%	20%	27%	25%
<b>40 տ-ից ցածր անձինք *</b>	-	-	<b>5%</b>	<b>3%</b>	<b>6%</b>	<b>2%</b>	<b>9%</b>	<b>13%</b>
Բոլոր նրանք, ովքեր նոր են սկսում աշխատել	-	-	2%	2%	1%	4%	3%	

30 տ-ից ցածր անձինք	-	-		1%	3%	2%	2%	
Բոլորը	-	-	2%	0%	0%	4%	2%	
Այլ պատասխաններ	50%	0%	2%	3%	6%	8%	7%	13%
Չգիտեն	-	-	3%	7%	10%	12%	8%	38%
Չեն լսել կուտակային կենսաթոշակային համակարգի մասին	-	-	-	1%	1%	-	1%	-

(\* ) - ճիշտ պատասխաններն ընդօժված են

Հարցման մասնակիցների Նկար 20-ում եւ Աղյուսակ 23-ում թվարկված պատասխանների բազմազանությունից կարելի է եզրակացնել, որ պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի հանրության թիրախային խմբերի վերաբերյալ տեղեկությունները կցկտուր են, երբեմն նաեւ անհեթեթ (օրինակ՝ *ղեկավար անձինք, սոցիալապես ապահով կամ անապահով խավերը եւ այլն*):


Հանրության 6%-ը հայտնել է, որ պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի թիրախային խումբը կազմում են 40 տարեկանից ցածր տարիքի մարդիկ: Սա պետք է համարել ճիշտ պատասխան, չնայած այն բանին, որ այդ 6%-ը չի մասնավորեցրել, թե *ո՞ր պահի դրությամբ* մինչեւ 40 տարեկան մարդկանց մասին է խոսքը: Ակնհայտ է, որ այդ մարդիկ, եթե անգամ չգիտեն պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման ժամկետների մասին, այնուամենայնիվ ճիշտ գիտեն, որ համակարգի շահառուներն են լինելու ներդրման պահի դրությամբ մինչեւ 40 տարեկան մարդկանց խումբը:

### 3.1.7 Հանրության տեղեկացվածությունը պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգում կուտակային միջոցների աղբյուրների մասին

Հայաստանի կենսաթոշակային համակարգի բարեփոխումների ծրագրով նախատեսվում է, որ պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի դեպքում յուրաքանչյուր անձի կուտակային հաշվին միջոցներ են փոխանցվելու անձանց կողմից՝ իրենց աշխատավարձի 5%-ի չափով կատարվող մասհանումներից (կուտակումներից), որն էլ իր հերթին կրկնապատկվելու է՝ պետության կողմից կատարված համարժեք վճարի հաշվին<sup>11</sup>: Հետեւաբար՝ ճիշտ պատասխանը, թե *ովքե՞ր են վճարներ կատարելու պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի դեպքում*՝ պետք է լիներ «*անձը ինքը եւ պետությունը*»: Նկար 21-ում եւ Աղյուսակ 24-ում ներկայացված է հարցման մասնակիցների կողմից այս հարցին տրված պատասխանների վիճակագրությունը:

<sup>11</sup> Սակայն ոչ ավել, քան 25,000 դրամի չափով

Նկար 21 - Հանրության տեղեկացվածությունը պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգում կուտակային միջոցների աղբյուրների մասին



Աղյուսակ 24 - Հանրության տարբեր խմբերի տեղեկացվածությունը պարտադիր կուտակային կենսաթոշակային ֆոնդի ձեւավորման աղբյուրների մասին

	Ըստ սեռի		Ըստ տարիքային խմբերի			
	Արական	Իգական	16-25 տ	26-40 տ	41-62 տ	63 տ եւ +
Անձին ինքը	21%	21%	15%	18%	27%	18%
Գործատուն	5%	3%	2%	2%	5%	5%
Պետությունը	7%	6%	4%	4%	7%	8%
Անձը ինքը եւ գործատուն	1%	2%	1%	2%	1%	2%
Անձը ինքը, գործատուն եւ պետությունը	1%	0%	-	0%	0%	-
<b>Անձը ինքը եւ պետությունը *</b>	<b>6%</b>	<b>3%</b>	<b>3%</b>	<b>5%</b>	<b>3%</b>	<b>5%</b>
Գործատուն եւ պետությունը	-	0%	-	0%	0%	-
Չգիտեն	4%	2%	-	3%	4%	1%
Չեն լսել կուտակային կենսաթոշակային համակարգի մասին	55%	62%	75%	64%	51%	62%
<b>Ընդամենը</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>

	Ըստ կրթական մակարդակի							
	Կրթություն չունեն	Տարրական	Թերի միջնակարգ	Միջնակարգ	Միջնակարգ տեխնիկական	Թերի բարձրագույն	Բարձրագույն	Դե տրուհական գիտական աստիճան
Անձին ինքը	-	-	3%	15%	19%	30%	31%	25%
Գործատուն	-	-	3%	1%	5%	4%	6%	-
Պետությունը	50%	-	7%	5%	5%	10%	7%	25%
Անձը ինքը եւ գործատուն	-	-	2%	-	1%	-	4%	-
Անձը ինքը, գործատուն եւ պետությունը	-	-	-	-	0%	2%	0%	-
<b>Անձը ինքը եւ պետությունը *</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>2%</b>	<b>3%</b>	<b>4%</b>	<b>6%</b>	<b>38%</b>
Գործատուն եւ պետությունը	-	-	-	-	-	-	1%	-
Չգիտեն	-	-	-	1%	5%	-	3%	-
Չեն լսել կուտակային կենսաթոշակային համակարգի մասին	50%	100%	84%	76%	62%	50%	43%	12%
<b>Ընդամենը</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>

(\* ) - ճիշտ պատասխաններն ընդգծված են

Կրկին կարելի է նկատել, որ այս հարցի շուրջ հանրության շատ փոքր մասն (4%) ունի ճիշտ տեղեկություններ, իսկ ավելի մեծ մասն ունի մասնակի ճիշտ, ֆրագմենտալ եւ երբեմն՝ սխալ տեղեկություններ: Հարցի շուրջ հանրության առավել տեղեկացված խմբերն են. ըստ սեռի՝ տղամարդիկ (6%), ըստ տարիքային խմբերի՝ «26-40 տ» եւ «63 տ եւ +» տարեկանները, ըստ կրթական մակարդակի՝ առավել բարձր կրթական աստիճան ունեցող մարդկանց խմբերը:

### 3.2 ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆԵՐԸ, ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐԸ ԵՎ ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԲԱՐԵՓՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ


#### 3.2.1 Հանրության վերաբերմունքը կենսաթոշակային բարեփոխումների նկատմամբ

Կենսաթոշակային բարեփոխումների մասին հանրության տեղեկացվածության վերլուծությունը ցույց տվեց, որ բարեփոխումների բաղկացուցիչների մասին նվազագույն տեղեկացվածությունը կազմում է 4%, իսկ առավելագույն տեղեկացվածությունը՝ 12%: Բարեփոխումների մասին չունենալով առանձնապես շատ մեծ տեղեկացվածություն, հանրության 16%-ը, այնուամենայնիվ, կողմ է արտահայտվել կենսաթոշակային բարեփոխումների իրականացմանը (տես Նկար 22): Այս երեւույթը կարելի է բացատրել հետեւյալով.

- Հանրության այդ խումբը բաղկացած է մարդկանցից, ովքեր *տեղյակ են կենսաթոշակային բարեփոխումների հիմնական առանձնահատկությունների մասին* (Ժամկետներ, պայմաններ, շահառուներ) եւ *գիտակցաբար* կողմ են այդ փոփոխությունների իրականացմանը, եւ
- Հանրության այդ խումբը բաղկացած է մարդկանցից, ովքեր *տեղյակ չեն կենսաթոշակային բարեփոխումների մասին*, սակայն *կողմ չեն նաեւ ներկայումս գործող կենսաթոշակային համակարգի պահպանմանը* եւ համոզված են, որ այն բարեփոխման կարիք ունի: Այս խմբի մեջ մեծ մաս են կազմում մարդիկ, ովքեր դժգոհ են կենսաթոշակների մակարդակից:

Կենսաթոշակային բարեփոխումների նկատմամբ հանրության վերաբերմունքն արտահայտող հարցման մասնակիցների պատասխանների վիճակագրությունը ներկայացված է ստորեւ.

Նկար 22 - Հանրության վերաբերմունքը կենսաթոշակային բարեփոխումների նկատմամբ



Ընդհանրացնելով Նկար 22-ի տվյալները, կարելի է նկատել, որ՝

- կենսաթոշակային բարեփոխումների իրականացմանը **կողմ է** հանրության 16%-ը,
- կենսաթոշակային բարեփոխումների իրականացման նկատմամբ **անտարբեր է** հանրության 5%-ը, եւ
- կենսաթոշակային բարեփոխումների իրականացմանը **դեմ է** հանրության 15%-ը, եւ

Հանրության մնացած մասը ընդհանրապես չի լսել կենսաթոշակային բարեփոխումների մասին եւ այդ պատճառով չունի դիրքորոշում (60%) կամ էլ դժվարացել են դիրքորոշում արտահայտել (4%):

Հանրության այն մասը, որոնք կողմ են եւ դրական են վերաբերվում կենսաթոշակային բարեփոխումների իրականացմանը (16%), իրենց դիրքորոշումը բացատրում են հետեւյալ մեկնաբանություններով (հարցման մասնակիցների պատասխանները չեն խմբագրվել). *Միայն այդպես է հնարավոր ապահովել բարեկեցիկ ծերություն (11%), դրանով կապ կստեղծվի աշխատավարձի եւ կենսաթոշակի միջեւ (2%), դա գումարը ապահով խնայելու եղանակ է (1%) եւ այլն:*

Կենսաթոշակային բարեփոխումների իրականացման նկատմամբ անտարբեր հանրությունը (5%) իր դիրքորոշումը բացատրում են հետեւյալ մեկնաբանություններով (հարցման մասնակիցների պատասխանները չեն խմբագրվել). *Կենսաթոշակային բարեփոխումներն իրենց չեն վերաբերվում (2%), ծանոթ չեն կենսաթոշակային բարեփոխումներին (1%), իրենք աշխատանք չունեն (1%), վստահություն չեն տածում բարեփոխումների նկատմամբ (1%) եւ այլն:*

Հանրության այն մասը, որոնք դեմ են եւ բացասաբար են վերաբերվում կենսաթոշակային բարեփոխումների իրականացմանը (15%), իրենց դիրքորոշումը բացատրում են հետեւյալ մեկնաբանություններով (հարցման մասնակիցների պատասխանները չեն խմբագրվել). *Վստահություն չեն տածում բարեփոխումների նկատմամբ (7%), իրենք աշխատանք չունեն (4%), աշխատավարձը ցածր է (2%), ներկա պայմաններում պետք չէ բարեփոխումներ անել (1%), կենսաթոշակային բարեփոխումները որեւէ օգուտ չեն տա (1%) եւ այլն:*

Ըստ սեռատարիքային եւ կրթական մակարդակով բնորոշվող հանրության խմբերի, կենսաթոշակային բարեփոխումների նկատմամբ վերաբերմունքի ցուցանիշները հետեւյալն են.



Աղյուսակ 25 - Հանրության տարբեր խմբերի վերաբերմունքը կենսաթոշակային բարեփոխումների նկատմամբ

	Ըստ սեռի		Ըստ տարիքային խմբերի			
	Արական	Իգական	16-25 տ	26-40 տ	41-62 տ	63 տ եւ +
Միանշանակ կողմ են	4%	3%	4%	2%	3%	4%
Ավելի շուտ կողմ են	15%	12%	13%	12%	15%	8%
Միեւնույն է / անտարբեր են	5%	4%	2%	2%	7%	6%
Ավելի շուտ դեմ են	11%	8%	4%	8%	10%	12%
Միանշանակ դեմ են	5%	6%	1%	5%	8%	7%
Դժվարացել են պատասխանել	4%	4%	1%	7%	5%	1%
Չեն լսել կուտակային կենսաթոշակային համակարգի մասին	55%	62%	75%	64%	51%	62%
<b>Ընդամենը</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>

	Ըստ կրթական մակարդակի							
	Կրթություն չունեն	Տարրական	Թերի միջնակարգ	Միջնակարգ	Միջնակարգ տեխնիկական	Թերի բարձրագույն	Բարձրագույն	Հետբուհական գիտական աստիճան
Միանշանակ կողմ են	50%	-	-	1%	4%	4%	4%	38%
Ավելի շուտ կողմ են	-	-	3%	6%	17%	16%	18%	-
Միեւնույն է / անտարբեր են	-	-	2%	4%	1%	6%	8%	-
Ավելի շուտ դեմ են	-	-	5%	6%	6%	12%	13%	38%
Միանշանակ դեմ են	-	-	5%	4%	5%	10%	8%	-
Դժվարացել են պատասխանել	-	-	-	2%	6%	2%	6%	13%
Չեն լսել կուտակային կենսաթոշակային համակարգի մասին	50%	100%	84%	76%	62%	50%	43%	12%
<b>Ընդամենը</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>

Ըստ հանրության տարբեր խմբերի, կենսաթոշակային բարեփոխումների նկատմամբ վերաբերմունքն ունի հետեւյալ դրսեւորումները.

- Ըստ սեռի՝ բարեփոխումներին տղամարդկանց եւ կանանց վերաբերմունքը գրեթե նույնն է. տղամարդկանց շրջանում կողմ են 19%-ը, դեմ՝ 16%-ը, կանանց շրջանում կողմ են 15%-ը, դեմ՝ 14%-ը;
- Ըստ տարիքային խմբերի՝ կենսաթոշակային բարեփոխումներին կողմ մարդկանց թվաքանակը հակադարձ համեմատական է նրանց տարիքին: Այսինքն՝ որքան մարդիկ երիտասարդ են (տարիքը փոքր է), այնքան ավելի շատ են բարեփոխումներին կողմ մարդկանց թիվը եւ հակառակը: Դրա պատճառը կարող է լինել այն, որ երիտասարդները, որոնց համար դեռ շատ երկար ժամանակ կա կենսաթոշակային տարիքին հասնելու համար, հակված են համակարգային փոփոխությունների, քանի որ այդ փոփոխությունները այնքան էլ չեն դիպչում նրանց այսօրեական շահերին: Բացի այդ, երիտասարդներն ավելի են հակված նորարարությունների, քան ավագ տարիքի մարդիկ: Վերջիններս ներկայացուցիչները (այդ թվում կենսաթոշակառուները) ավելի պահպանողական են եւ զգուշավոր բարեփոխումների հարցում, քանի որ ունեն մի շարք մտավախություններ եւ անհանգստություններ;

- Կրթական մակարդակով բնորոշվող հանրության խմբերի շրջանում կենսաթոշակային բարեփոխումներին դրական եւ բացասաբար վերաբերվող մարդկանց թիվը գրեթե հավասար է:


Կենսաթոշակային բարեփոխումների իրականացման նկատմամբ **ավելի դրական դիրքորոշում ունեն գյուղերի բնակչությունը**: Կուտակային կենսաթոշակային համակարգի մասին տեղյակ գյուղական բնակչության 55%-ը կողմ է արտահայտվել բարեփոխումներին: Մինչդեռ քաղաքային բնակչության ընդամենը 34-36%-ն է կողմ արտահայտվել բարեփոխումներին: Ընդ որում՝ Երեւանի եւ մարզերի քաղաքների բնակչության դիրքորոշումների միջեւ առանձնապես մեծ տարբերություններ չկան:

Բացի հանրության սեռատարիքային եւ կրթական մակարդակով բնորոշվող խմբերի վերաբերմունքի առանձնահատկություններից, շատ կարելու է հասկանալ, թե՛ ա) հանրության *ինչպիսի՞ իրավագիտակցություն եւ սպասումներ ունեցող խմբերն են կողմ կամ դեմ արտահայտվում կենսաթոշակային բարեփոխումներին*, կամ՝ բ) *հնարավո՞ր է արդյոք, որ մարդիկ դեմ արտահայտվեն կենսաթոշակային բարեփոխումներին՝ կուտակային կենսաթոշակային համակարգի բնույթը չհասկանալու պատճառով*: Նշված հարցերի շուրջ հարցման մասնակիցների պատասխանների վիճակագրությունը ներկայացված է ՀԱՎԵԼՎԱԾ 1-ում ներկայացված վերլուծություններում (տես էջ 79):

### 3.2.2 Հանրության վերաբերմունքը անհատական կենսաթոշակային հաշվին կուտակվող վճարների չափի նկատմամբ

Ինչպես արդեն նշվեց, պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի դեպքում կենսաթոշակային ֆոնդը ձեւավորվելու է անձանց եւ պետության վճարման հաշվին: Ընդ որում՝ անձանց վճարման (կուտակման) չափը կազմում է ամսական աշխատավարձի 5%-ը, որը կկրկնապատկվի (բայց ոչ ավել, քան 25,000 դրամի չափով) պետության կողմից: Այս հարցի շուրջ մարդկանց վերաբերմունքը հասկանալու համար, նախ եւ առաջ, նրանց տրամադրվել է անհրաժեշտ տեղեկություն, այսինքն՝ նրանց տեղեկացվել է կողմերի վճարման չափերի մասին: Ստանալով տեղեկություն, ամբողջ հանրությունը կարծիք է հայտնել անձանց եւ պետության վճարման չափերի վերաբերյալ (տես Նկար 23):

Նկար 23 - Հանրության վերաբերմունքը անհատական կենսաթոշակային հաշվին կուտակվող վճարների չափերի նկատմամբ



Սեփական վճարման չափի նկատմամբ հանրության մեծամասնությունը (65%) դրական է տրամադրված: Մինչդեռ պետությունից ակնկալիքներն ավելի մեծ են, քան պետությունն է առաջարկում: Հանրության 47%-ը կցանկանար, որ պետության վճարման չափն ավելի բարձր լիներ: Հարցման մասնակիցների պատասխաններից ընդհանուր տպավորությունն այն է, որ պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի դեպքում անձանց եւ պետության վճարման չափի հետ կապված պայմանները առանձնապես մեծ հակազդեցության չեն հանդիպի:

### **3.2.3 Հանրության սպասելիքները եւ մտահոգությունները կապված կենսաթոշակային բարեփոխումների հետ**

Կենսաթոշակային բարեփոխումների նկատմամբ հանրության վերաբերմունքը պայմանավորված չէ միայն այն պայմաններով, համաձայն որոնց գործելու է կուտակային կենսաթոշակային համակարգը (ժամկետներ, սկզբունքներ, վճարման չափեր, շահառուների տարիքային խմբեր): Բարեփոխումների նկատմամբ հանրության դրական կամ բացասական վերաբերմունքը ձեւավորվում է նաեւ մարդկանց հոգեբանական վիճակի եւ բարեփոխումներն իրականացնող պետական կառույցների նկատմամբ վստահության հիման վրա: Հոգեբանական առումով մարդկանց մոտ նկատվում է որոշակի լարվածություն՝ կապված գործազրկության բարձր կամ եկամուտների ցածր մակարդակների հետ: Սոցիալական խնդիրների առկայությունը եւ դրանց լուծման սահմանափակ հնարավորությունները վստահություն չեն ներշնչում վաղվա օրվա նկատմամբ: Այդ իրավիճակի համար հանրության մի ստվար զանգված մեղավոր կամ պատասխանատու է համարում իշխանություններին (բոլոր մակարդակների): Ուստի վերջիններիս կողմից նախաձեռնված այնպիսի կարեւոր միջոցառում, ինչպիսին կենսաթոշակային բարեփոխումներն են, հավատ չեն ներշնչում մարդկանց, որ դա կենսաթոշակները բարձրացնելու (հանրությանը հուզող թիվ մեկ խնդիրը) ուղիներից մեկն է:

Ասվածի ապացույցն է այն, որ հանրության ընդամենը 34%-ն է հույս հայտնել, որ կենսաթոշակային բարեփոխումները կհանգեցնեն կենսաթոշակների բարձրացման: Մինչդեռ հանրության 40%-ը գտնում է, որ *բարեփոխումները որեւէ արդյունք չեն տա*: 4%-ը կարծում է, որ *կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրումը թույլ կտա իրականացնել խնայողություններ*, 2%-ը կարծում է, որ *դրանով պետությունը կլուծի իր եւ ոչ թե կենսաթոշակառուների խնդիրները*: Այստեղ ուշագրավն այն է, որ կենսաթոշակային բարեփոխումների նկատմամբ բացասաբար տրամադրված մարդկանց մեծ մասը չի լսել ոչ ընթացքի մեջ գտնվող կենսաթոշակային բարեփոխումների մասին եւ ոչ էլ կուտակային կենսաթոշակային համակարգի մասին: Ստացվում է, որ **ոչ փոքր թվով մարդիկ կարծիք են հայտնում մի բանի մասին, որից տեղեկություն չունեն**: Ակնհայտ է, որ որոշակի սոցիալական լարվածությունը բացասաբար է ազդում մարդկանց տրամադրությունների վրա՝ ձեւավորելով ապագայի եւ կենսաթոշակային բարեփոխումների նկատմամբ բացասական սպասումներ:


Կենսաթոշակային բարեփոխումներից հանրության սպասելիքների առավել օբյեկտիվ պատկերը կարելի է ստանալ կենսաթոշակային բարեփոխումների մասին տեղյակ հարցման մասնակիցների պատասխանների հիման վրա, որոնք կազմում են ընտրանքի 36%-ը: Վերջիններիս մասին խոսք է գնացել Բաժին 3.1.1-ում («Հանրության ընդհանուր տեղեկացվածությունը սպասվող բարեփոխումների մասին», էջ 32): Ստորեւ ներկայացվում է հանրության այդ մասի սպասելիքների եւ մտահոգությունների վերլուծությունը:

#### **3.2.3.1 *Հանրության սպասելիքները կապված կենսաթոշակային բարեփոխումների հետ***

Կենսաթոշակային բարեփոխումների մասին հանրության սպասելիքներն այդ բարեփոխումներից միարժեք չեն: Բարեփոխումներից տեղյակ հարցման մասնակիցների մեջ գերակշռում են *դրական սպասելիքներ* ունեցող մարդիկ: Նրանց թվում 14%-ը լավատես եւ կարծում է, որ

Կենսաթոշակային բարեփոխումների արդյունքում կենսաթոշակները կբարձրանան եւ միայն 3%-ը չի հավատում դրական փոփոխություններին (տես Նկար 24):

Նկար 24 - Հանրության սպասելիքները կապված կենսաթոշակային բարեփոխումների հետ



Աղյուսակ 26 - Հանրության տարբեր խմբերի սպասելիքները կապված կենսաթոշակային բարեփոխումների հետ

	Ըստ սեռի		Ըստ տարիքային խմբերի			
	Արական	Իգական	16-25 տ	26-40 տ	41-62 տ	63 տ եւ +
Կենսաթոշակները կբարձրանան	12%	15%	15%	11%	15%	16%
Յուրաքանչյուրն իր թոշակի համար փող կկուտակի	14%	9%	3%	7%	14%	13%
Ոչ մի փոփոխություն չի լինի	3%	2%	2%	2%	4%	1%
Անցում կկատարվի քարտային համակարգին	1%	3%	4%	2%	1%	3%
Աշխատավարձի եւ թոշակի միջեւ կապ կստեղծվի	0%	1%	1%	2%	0%	-
Կենսաթոշակային տարիքը կնվազի	1%	0%	1%	1%	0%	-
Դժվարացել են պատասխանել	7%	7%	2%	6%	8%	10%
Չեն լսել կենսաթոշակային բարեփոխումների մասին	62%	64%	69%	71%	57%	61%

	Ըստ կրթական մակարդակի							
	Կրթություն չունեն	Տարրական	Թերի միջնակարգ	Միջնակարգ	Միջնակարգ տեխնիկական	Թերի բարձրագույն	Բարձրագույն	Հետբուհական գիտական աստիճան
Կենսաթոշակները կբարձրանան	-	-	14%	12%	18%	12%	14%	13%
Յուրաքանչյուրն իր թոշակի համար փող կկուտակի	-	-	8%	4%	10%	8%	17%	25%
Ոչ մի փոփոխություն չի լինի	-	-	2%	1%	1%	-	5%	13%
Անցում կկատարվի քարտային համակարգին	-	-	2%	3%	1%	2%	2%	-
Աշխատավարձի եւ թոշակի միջեւ կապ կստեղծվի	-	-	-	1%	0%	-	1%	-

Կենսաթոշակային տարիքը կնվազի	-	-	-	-	1%	-	1%	-
Դժվարացել են պատասխանել	-	-	7%	3%	8%	4%	11%	38%
Զեւ լսել կենսաթոշակային բարեփոխումների մասին	100%	100%	69%	78%	62%	72%	50%	13%


Ներկայացված տվյալները վկայում են այն մասին, որ հանրության շրջանում կենսաթոշակային բարեփոխումների մասին տեղեկացվածության բարձրացումը անհրաժեշտություն է: Դա ապացուցվում է հետեւյալ ցուցանիշների համադրության արդյունքում: Ամբողջ հանրության մեջ, որը ներառում է կենսաթոշակային բարեփոխումներից տեղյակ եւ անտեղյակ բոլոր մարդկանց, բարեփոխումներից դրական արդյունքներ են ակնկալում 34%-ը, իսկ փոփոխությունների հույս չունեն 40%-ը: Մինչդեռ կենսաթոշակային բարեփոխումներից **տեղյակ** հանրության մեջ (ամբողջ հանրության 36%-ը) բարեփոխումներից դրական կամ առնվազն ոչ բացասական արդյունքներ են ակնկալում 67%-ը (ամբողջ հանրության 24%-ը), իսկ փոփոխությունների հույս չունեն ընդամենը 8%-ը (ամբողջ հանրության 3%-ը):

**3.2.3.2 Հանրության մտահոգությունները կապված կենսաթոշակային բարեփոխումների հետ**

Հանրության շրջանում առկա են կենսաթոշակային բարեփոխումների հետ կապված որոշակի մտահոգություններ: Ընդ որում՝ մտահոգություններ ունեն ոչ միայն այն մարդիկ, ովքեր բարեփոխումներից դրական փոփոխությունների ակնկալիքներ չունեն: Իրենց մտահոգություններ են հայտնել նաեւ մարդիկ, ովքեր, չնայած դրանց՝ կողմ են այդ բարեփոխումների իրականացմանը:

Հանրության շրջանում կենսաթոշակային բարեփոխումների հետ կապված գլխավոր մտահոգությունը *պետության նկատմամբ վստահության ցածր մակարդակն է եւ կուտակված (կուտակվելիք) գումարների ապահովության հարցում անհանգստությունը (10%)*: Հանրության երկրորդ խոշոր խումբն այն կարծիքին է, որ *կենսաթոշակային բարեփոխումները եւ կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրումը չեն կարող հանգեցնել կենսաթոշակների բարձրացման, որովհետեւ իրենք կամ աշխատանք (իմա՝ եկամուտ) չունեն, կամ էլ եթե ունեն՝ ապա աշխատավարձերը բավականին ցածր են (9%)*: Պետք է նկատի ունենալ, որ հանրության 64%-ը, տեղյակ չլինելով կենսաթոշակային բարեփոխումների մասին, օբյեկտիվորեն չեն կարողացել հայտնել բարեփոխումների հետ կապված իրենց մտահոգությունները:

**Նկար 25 - Հանրության մտահոգությունները կապված կենսաթոշակային բարեփոխումների հետ**



Հարց հարցման մասնակիցներին.

**Որո՞նք են Ձեր մտահոգությունները, կապված կենսաթոշակային բարեփոխումների հետ**

! Բաց հարց  
! Հարցման մասնակիցները տվել են մեկից ավելի պատասխաններ

(\* ) - «Այլ պատասխաններ» խմբում ընդգրկված են հարցման մասնակիցների կողմից տրված 12 տեսակի պատասխաններ, որոնցից յուրաքանչյուրը հիշատակվել է ոչ ավել, քան 8 անգամ (ոչ ավել, քան 1%): Պատասխանների այս խմբում կարելի է հանդիպել. *Կուտակման համար գանձվող գումարը մեծ է (0.8%), կառաջանան կենսաթոշակի ստացման հետ կապված տեխնիկական խնդիրներ (0.7%), հույս չունեն հասնել կենսաթոշակային տարիքի (0.6%), աշխատանք չունեցողների հարցն անորոշ է (0.5%) եւ այլն:*

**Աղյուսակ 27 - Հանրության տարբեր խմբերի մտահոգությունները կապված կենսաթոշակային բարեփոխումների հետ**

	Ըստ սեռի	
	Արական	Իգական
Պետությունը վստահելի չէ, մտահոգ են գումարների ապահովությամբ	12%	10%
Գումար ավելի քիչ կկուտակվի, քան պետք է բարձր թոշակի համար	5%	5%
Աշխատանք չունեն, որպեսզի գումար կուտակեն	4%	5%
Մտահոգություն չունեն	3%	3%
Այլ պատասխաններ	5%	4%
Դժվարացել են պատասխանել	8%	10%
Չեն լսել կենսաթոշակային բարեփոխումների մասին	62%	64%

	Ըստ տարիքային խմբերի			
	16-25 տ	26-40 տ	41-62 տ	63 տ եւ +
Պետությունը վստահելի չէ, մտահոգ են գումարների ապահովությամբ	6%	9%	14%	9%
Գումար ավելի քիչ կկուտակվի, քան պետք է բարձր թոշակի համար	6%	3%	6%	6%
Աշխատանք չունեն, որպեսզի գումար կուտակեն	-	4%	6%	6%
Մտահոգություն չունեն	5%	2%	2%	5%
Այլ պատասխաններ	7%	2%	4%	5%
Դժվարացել են պատասխանել	10%	10%	10%	8%
Չեն լսել կենսաթոշակային բարեփոխումների մասին	69%	71%	57%	61%

	Ըստ կրթական մակարդակի							
	Կրթություն չունեն	Տարրական	Թերի միջնակարգ	Միջնակարգ	Միջնակարգ տեխնիկական	Թերի բարձրագույն	Բարձրագույն	Հետբուհական գիտական աստիճան
Պետությունը վստահելի չէ, մտահոգ են գումարների ապահովությամբ	-	-	3%	4%	9%	6%	18%	50%
Գումար ավելի քիչ կկուտակվի, քան պետք է բարձր թոշակի համար	-	-	12%	5%	7%	2%	4%	13%
Աշխատանք չունեն, որպեսզի գումար կուտակեն	-	-	3%	3%	6%	2%	5%	13%
Մտահոգություն չունեն	-	-	2%	1%	3%	6%	5%	-
Այլ պատասխաններ	-	-	-	0%	-	-	2%	-
Դժվարացել են պատասխանել	-	-	8%	7%	12%	8%	11%	-
Չեն լսել կենսաթոշակային բարեփոխումների մասին	100%	100%	69%	78%	62%	72%	50%	13%


Հիմնվելով Աղյուսակ 27-ի տվյալների վրա, ցավով կարելի է արձանագրել, որ պետության նկատմամբ վստահությունը ցածր է հատկապես հանրության ավելի բարձր կրթական մակարդակ

ունեցող խմբերի շրջանում: Իսկ եթե այդպես են մտածում հասարակության առավել բանիմաց եւ գիտակից խմբերը, ապա դրա համար հավանաբար կան իրական հիմքեր: Սա շատ լուրջ մարտահրավեր է պետության (ի դեմս իշխանությունների) համար, որը պատրաստվում է երկիրը դուրս բերել համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի եւ համընդհանուր բարձր գնաճի պատճառով առաջացած դժվարությունների միջից եւ իրականացնել կառուցվածքային բարեփոխումներ:

**3.2.4 Կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգին միանալու հանրության պատրաստակամությունը**

Կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգին միանալու պատրաստակամություն են հայտնել հանրության 39%-ը: Սա շատ ուշագրավ ցուցանիշ է՝ հետեւյալ պատճառով: Հանրության միայն 40%-ն է հայտնել, որ իրենք տեղյակ են կուտակային կենսաթոշակային համակարգի մասին: Միեւնույն ժամանակ, հանրության ընդամենը 4-12%-ը **ճիշտ տեղեկություն** ունի կուտակային կենսաթոշակային համակարգի կիրառման պայմանների մասին: Սա նշանակում է, որ հանրության մի զգալի մասը, հստակ չիմանալով, թե ինչ է իրենից ներկայացնում կուտակային կենսաթոշակային համակարգը, այնուամենայնիվ պատրաստ է միանալու դրան: Սա էլ իր հերթին կարող է նշանակել, որ հանրության այդ մասը, այլեւս հույս չկապելով գործող կենսաթոշակային համակարգի հետ, պատրաստ է օգտվել ցանկացած հնարավորությունից, որը թեկուզ տեսականորեն կարող է հանգեցնել կենսաթոշակների բարձրացման:

**Նկար 26 - Կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգին միանալու հանրության պատրաստակամությունը**



Կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգին միանալու պատրաստակամություն են հայտնել հանրության 39%-ը: Հանրության այս խումբը, ըստ իրենց դիրքորոշումների, բաժանվում է 2 ենթախմբի. ա) մարդիկ, որոնք կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգին **կմիանան միանշանակորեն** (հանրության 19%), եւ բ) մարդիկ, որոնք կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգին **կմիանան պայմանով** (հանրության 20%):

Կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգին միանալու **միանշանակ ցանկություն** հայտնած հանրության (19%) դիրքորոշումը հետեւյալն է. նրանք կարծում են, որ կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգը թույլ կտա *ապագայում ապահովել ավելի բարձր կենսաթոշակ, այն ավելի արդյունավետ կենսաթոշակային համակարգ է եւ այն իր կամ իր զավակների համար գումար խնայելու լավ տարբերակ է:*


Համակարգին միանալու ցանկություն հայտնած երկրորդ խումբը (20%) գտնում է, որ դրա համար պետք է ապահովվեն մի շարք **նախապայմաններ**: Դրանցից հետո նոր իմաստ կունենա միանալ կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգին: Մասնավորապես խոսքը գնում է հետեւյալի մասին. համակարգին միանալու համար մարդկանց պետք է *աշխատանք ունենալ կամ ունենալ կայուն (հիմնական) եւ բավարար եկամուտներ*: Այլ կերպ ասած՝ մարդիկ դեմ չեն անհատական կենսաթոշակային հաշվին կուտակել որոշակի գումարներ (խնայողություններ),

սակայն իրենք այս պահին չունեն դրա աղբյուրը՝ աշխատանք կամ բավարար եկամուտ: Չանրության 3%-ը կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգին կմիասն այն բանից հետո, երբ համոզվի, որ համակարգը նորմալ գործում է, մարդկանց չեն խաբում եւ կենսաթոշակի վճարումները կատարվում են ինչպես հարկն է:

Չանրության տարբեր խմբերը կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգին միանալու հարցում ունեն իրարից տարբերվող մոտեցումներ (տես Նկար 27).

- Ըստ սեռի՝ կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգին միանալու հարցում տղամարդիկ եւ կանայք բացարձակ միակարծիք են;
- Ըստ տարիքային խմբերի՝ պատկերը հետեւյալն է. կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգին միանալու պատրաստակամությունը առավել շատ է երիտասարդների (16-25 տ) շրջանում: Ընդ որում՝ որքան մեծանում է մարդկանց տարիքը, այնքան փոքրանում է համակարգին միանալու պատրաստակամությունը;
- Կրթական մակարդակով բնորոշվող հանրության խմբերի մեջ չկա մի խումբ, որտեղ գերակշռեն կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգին միանալու պատրաստակամություն ունեցող մարդիկ: Ուշագրավ է այն, որ առավել բարձր կրթական մակարդակ ունեցող խմբերում եւս համակարգին չմիացողները բավականին շատ են:

**Նկար 27 - Կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգին միանալու հանրության տարբեր խմբերի պատրաստակամությունը**





Կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգին միանալու հարցում կրկին ուշագրավ վիճակագրություն է ստացվել քաղաքային եւ գյուղական բնակչությունից: Այսպես, Երեւանի եւ մարզերի քաղաքների բնակչության 35-37%-ն է պատրաստակամ միանալու կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգին: Գյուղական բնակչության մոտ այդ ցուցանիշը կազմում է 45%: Սա կարող է պայմանավորված լինել նրանով, որ գյուղական բնակչությանը առավել հատուկ է հարմարվողական դիրքորոշումը, անգամ կուտակային կենսաթոշակային համակարգի մասին ոչ լիարժեք տեղեկություններ ունենալու պարագայում: Մյուս կողմից շատ դժվար է գնահատել, թե ինչպես կփոխվի գյուղական բնակչության դիրքորոշումը, եթե ավելանա նրանց տեղեկացվածությունը կուտակային կենսաթոշակային համակարգի մասին:

Կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգին միանալու հանրության տարբեր խմբերի պատրաստակամությունը մեծապես կպայմանավորի այդ համակարգի կայացումն ու զարգացումը: Նկատի ունենալով հարցի կարելիությունը, մենք շարունակում ենք ուսումնասիրել կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգին միանալու պատրաստակամություն հայտնաձ հանրությանը՝ ըստ նրանց հետեւյալ բնորոշիչների.

*Ինչպիսի՞ն է կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգին միանալու պատրաստակամությունը . . .*

- 1) տարբեր եկամուտների մակարդակ ունեցող տնտեսությունների ներկայացուցիչների շրջանում
- 2) կենսաթոշակի հետ կապված հարցերով մտահոգված մարդկանց շրջանում
- 3) այն մարդկանց շրջանում, ովքեր արտահայտվել են կենսաթոշակային տարիքում իրենց նյութական ապահովվածության պատասխանատուի վերաբերյալ
- 4) կենսաթոշակային համակարգի բարեփոխումներին կողմ կամ դեմ մարդկանց շրջանում

Չարցման մասնակիցների պատասխանների վիճակագրությունը ներկայացված է ՅԱՎԵԼՎԱԾ 2-ում (տես էջ 82):

Կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգի զարգացման գլխավոր խոչընդոտը լինելու է այն, որ **հանրության մեծ մասն ի վիճակի չէ կատարել խնայողություններ**: Այսպես, հարցման մասնակիցների միայն 23%-ն է հայտարարել, որ իրենք կատարում են դրամական խնայողություններ: 77%-ը չի կարողանում կատարել դրամական խնայողություններ եւ դրա համար նշել են ընդամենը մեկ պատճառ. չունեն բավարար եկամուտներ կամ աշխատանք:

Խնայողություններ կատարող հանրության մեջ ըստ սեռային կազմի մեծ տարբերություններ չկան: Փոխարենը հստակ երեւում է, որ նրանց մեջ ավելի մեծ թիվ են կազմում երիտասարդները եւ ավելի բարձր կրթական մակարդակ ունեցող մարդիկ: Դրանում համոզվելու համար կարելի է դիտել ստորեւ բերված աղյուսակի տվյալները.

**Աղյուսակ 28 - Չանրության տարբեր խմբերի կողմից դրամական խնայողություններ կատարելը**

	Սեռային կազմ		Տարիքային կազմ			
	Արական	Իգական	16-25 տ	26-40 տ	41-62 տ	63 տ եւ +
Կատարում են խնայողություններ	22%	24%	44%	33%	16%	6%
Չեն կատարում խնայողություններ	78%	76%	56%	67%	84%	94%
<b>Ընդամենը</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>

	Կրթական մակարդակ							
	Կրթություն չունեն	Տարրական	Թերի միջնակարգ	Միջնակարգ	Միջնակարգ տեխնիկական	Թերի բարձրագույն	Բարձրագույն	Չեւթուիական գիտական աստիճան
Կատարում են խնայողություններ	-	-	10%	22%	20%	30%	27%	50%
Չեն կատարում խնայողություններ	100%	100%	90%	78%	79%	70%	73%	50%
<b>Ընդամենը</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>	<b>100%</b>

Կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգին մարդկանց միանալու հարցում մեկ այլ խնդիր է այն, թե որտեղ են նրանք պահում իրենց խնայողությունները: Խնայողություններ կատարող մարդկանց (հանրության 23%) 60%-ը հայտնել է, որ իրենք իրենց խնայողությունները պահում են տանը եւ միայն 19%-ն է նշել, որ խնայողությունները պահում են բանկում՝ ավանդի տեսքով: Մնացած մասը դրանք վերածում են ոսկու կամ անշարժ գույքի: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ խնայողություններ կատարող մարդկանց (հանրության 23%) 36%-ը բոլոր դեպքերում չի միանա կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգին:

## 4 ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՎՍԱՀՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱԿԸ


Կենսաթոշակային համակարգի բարեփոխումը ՀՀ Կառավարության կողմից իրականացվող համապետական միջոցառում է, որն այս կամ այն չափով իր ազդեցությունն է ունենալու հանրության բոլոր շերտերի վրա: Բարեփոխումներն իրականացվում են հետճգնաժամային ժամանակահատվածում, երբ երկիրը կանգնած է անհապաղ լուծման կարիք ունեցող բազմաթիվ սոցիալ-տնտեսական խնդիրների առաջ: Աղքատության եւ գործազրկության մեծ մասշտաբները որոշակի սոցիալական լարվածության աղբյուր են հանդիսանում, որում հանրության լայն շերտերը պատասխանատու են համարում իշխանություններին՝ ի դեմս ՀՀ Կառավարությանը կամ այլ շահագրգիռ պետական կառույցների: Մինչդեռ հենց ՀՀ Կառավարությունն է իրականացնում կենսաթոշակային բարեփոխումները, եւ դրանք սահուն եւ անխոչընդոտ անցկացնելու համար ՀՀ Կառավարությանը շատ անհրաժեշտ է հանրության լայն շերտերի աջակցությունը, վստահությունը եւ լոյալությունը:



Կենսաթոշակային բարեփոխումները, որպես ֆինանսական համակարգի մասշտաբային միջոցառում, առնչվում են նաեւ երկրի ֆինանսական կառույցների (բանկերի, ներդրումային հիմնադրամների, ապահովագրական ընկերությունների) գործունեությանը: Հանրության տեսանկյունից, կենսաթոշակային բարեփոխումների հետ կապված հիմնական հուզող հարցերից մեկը կուտակվող միջոցների ապահովության հարցն է: Հանրության ընկալմամբ, այս հարցում կոլեկտիվ պատասխանատվություն են կրում եւ ՀՀ Կառավարությունը՝ որպես բարեփոխումների իրականացնող, եւ ֆինանսական կառույցները՝ որպես բնակչության խնայողությունները ընդունող: Ուստի ֆինանսական կառույցների նկատմամբ հանրության վստահությունը եւս շատ կարեւոր գործոն է կենսաթոշակային բարեփոխումների սահուն իրականացման համար:

Պետական եւ ֆինանսական կառույցների նկատմամբ վստահության գնահատման համար ուսումնասիրության թիրախ են ընտրվել ՀՀ Կառավարությունը, ՀՀ Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը, Սոցիալական ապահովության պետական ծառայությունը, ՀՀ Կենտրոնական Բանկը, առեւտրային բանկերը եւ ապահովագրական ընկերությունները: Վստահության գնահատումն իրականացվել է գնահատման քառանիշ սանդղակի կիրառմամբ, որտեղ 4-ը նշանակում է «լիովին վստահում են», իսկ 1-ը նշանակում է «բոլորովին չեն վստահում»:

Ստորեւ ներկայացված են պետական եւ ֆինանսական կառույցների նկատմամբ հանրության վստահությունը բնութագրող ցուցանիշները:

Նկար 28 - Հանրության վստահությունը պետական եւ ֆինանսական կառույցների նկատմամբ






Ներկայացված տվյալների հիման կարելի է եզրակացնել, որ պետական եւ ֆինանսական կառույցներն այնքան էլ բարձր վստահություն չեն վայելում: Առավելագույն վստահության վարկանիշ ունի ՀՀ Կենտրոնական Բանկը (43%<sup>12</sup>), իսկ նվազագույն վստահություն վայելում են ապահովագրական ընկերությունները (26%): Կենսաթոշակային բարեփոխումների հարցում գլխավոր դերակատարը՝ ՀՀ Կառավարությունը վայելում է 38% վստահություն, ինչը շատ բարձր չէ՝ նման նախաձեռնությունները սահուն կերպով կյանքի կոչելու համար: ՀՀ Կառավարության,

ինչպես նաեւ նրա առանձին ստորաբաժանումների (նախարարությունների) նկատմամբ 32-38% կազմող վստահության մեջ, անշուշտ, արտացոլված են այն սոցիալ-տնտեսական խնդիրները, որոնք առկա են այսօր մեր իրականության մեջ: Հանրությանը հուզող գլխավոր խնդիրը մնում է *աղքատության բարձր մակարդակը*, որը վերջին 2 տարիներին էլ ավելի է բարձրացել՝ 2009թ. 27.6%-ից հասնելով 2010թ. 34.1%-ի<sup>13</sup>: Ոչ պաշտոնական *գործազրկության* մակարդակը կազմում է 28.6%, ինչը շատ բարձր ցուցանիշ է<sup>14</sup>: Ֆինանսական կառույցները եւս վստահության առանձնապես բարձր վարկանիշ չունեն: Առևտրային բանկերի վստահության վարկանիշը կազմում է ընդամենը 34%, ինչը լուրջ խոչընդոտ պետք է դիտել հանրության ազատ դրամական

<sup>12</sup> Հաշվարկված է «Լիովին վստահում են» եւ «Ավելի շուտ վստահում են» պատասխանած հարցման մասնակիցների հանրագումարի միջոցով  
<sup>13</sup> Աղբյուր՝ «Հայաստանի սոցիալական պատկերը եւ աղքատությունը, 2010», ԱՎԾ, 2010  
<sup>14</sup> Աղբյուր՝ Աշխատանքի միջազգային կազմակերպություն

միջոցները բանկեր տեղափոխելու ճանապարհին: Ստորել ներկայացված է պետական եւ ֆինանսական կառույցների նկատմամբ հանրության վստահության միջինացված համեմատական վարկանիշերը, որտեղ կարելի է նկատել, որ գրեթե բոլոր կառույցների մասով վստահության վարկանիշերը գտնվում են *«ավելի շուտ չեն վստահում»* սահմանանիշի միջակայքում:

**Նկար 29 - Պետական եւ ֆինանսական կառույցների նկատմամբ հանրային վստահության համեմատական վարկանիշերը**



Եթե պետական եւ ֆինանսական կառույցների նկատմամբ վստահությունը վերլուծենք ըստ հանրության սեռատարիքային կազմի եւ կրթական մակարդակով բնորոշվող խմբերի (տես հաջորդիվ՝ Աղյուսակ 29), ապա կարելի է նկատել հետեւյալ առանձնահատկությունները:

Գրեթե բոլոր կառույցներն էլ ավելի մեծ վստահություն են վայելում կանանց, քան տղամարդկանց շրջանում: Բայց եթե այս դեպքում ստանդարտ շեղումը շատ մեծ չէ, ապա տարիքային խմբերի դեպքում այն բավականին ընդգծված է: Տարիքային խմբերից պետական եւ ֆինանսական կառույցների նկատմամբ առավել բարձր վստահություն են տածում երիտասարդները (16-25 տ): ՀՀ Կենտրոնական Բանկի եւ առևտրային բանկերի նկատմամբ երիտասարդների վստահության վարկանիշն ընկած է *«ավելի շուտ վստահում են»* սահմանանիշի միջակայքում: Երիտասարդների շրջանում պետական եւ ֆինանսական կառույցների նկատմամբ համեմատաբար բարձր վստահությունը բացատրվում է նրանով, որ այդ խումբը իր ուսերին չի տանում կամ ամբողջությամբ չի զգում սոցիալ-տնտեսական խնդիրների ծանրությունը: Այդ ծանրությունը կրում են նրանց ծնողների տարիքային խումբը (41-62 տ), որոնց շրջանում պետական եւ ֆինանսական կառույցների նկատմամբ վստահությունը գտնվում է բոլոր տարիքային խմբերի մեջ ամենացածր մակարդակի վրա: Բացի դա, ավագ տարիքի մարդիկ իրենց հիշողություններում դեռևս պահում են բարեկեցիկ ապրուստի տարիները եւ նրանց համար վստահություն ներշնչող պետության պատկերացումները մի փոքր ուրիշ են: Երիտասարդների համար համեմատության բազա չկա, նրանք պետությանը ընդունում են այնպես, ինչպես որ կա:

Կրթական մակարդակով բնորոշվող խմբերի մեջ նկատելի է, որ որքան բարձրանում է մարդկանց կրթական մակարդակը, այնքան նվազում է պետական եւ ֆինանսական կառույցների նկատմամբ վստահությունը: Այդ հարցում որոշակի բացառություն են կազմում առևտրային բանկերը եւ ապահովագրական ընկերությունները, որոնց նկատմամբ վստահությունը բարձր կրթական մակարդակ ունեցող մարդկանց շրջանում միջինից բարձր է:

Աղյուսակ 29 - Պետական և ֆինանսական կառույցների նկատմամբ հանրության տարբեր խմբերի վստահության համեմատական վարկանիշերը

		Պետական և ֆինանսական կառույցներ						
		ՀՀ Կառավարություն	ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Սոցիալական ապահովության պետական ծառայություն	ՀՀ ֆինանսների նախարարություն	ՀՀ Կենտրոնական Բանկ	Առևտրային բանկեր	Ապահովագրական ընկերություններ
		↓	↓	↓	↓	↓	↓	↓
Ըստ սեռի	Արական	1.99	1.90	1.93	1.91	2.03	1.90	1.72
	Իգական	2.08	2.03	2.10	1.99	2.38	2.03	1.91
		↓	↓	↓	↓	↓	↓	↓
Ըստ տարիքային խմբերի	16-25 տ	2.24	2.17	2.28	2.19	2.76	2.46	2.25
	21-40 տ	2.03	1.99	2.03	1.95	2.39	2.14	2.00
	41-62 տ	1.99	1.90	1.97	1.91	2.07	1.83	1.67
	63 տ և +	2.05	2.04	2.03	1.92	2.04	1.63	1.68
		↓	↓	↓	↓	↓	↓	↓
Ըստ կրթական մակարդակի	Կրթություն չունեն	3.00	3.00	3.00	3.00	2.50	1.50	1.00
	Տարրական	2.50	2.50	2.50	2.50	2.50	1.50	1.50
	Թերի միջնակարգ	2.14	2.35	2.24	2.11	2.22	1.84	1.80
	Միջնակարգ	2.12	2.05	2.19	2.06	2.35	2.02	1.89
	Միջնակարգ տեխնիկական	2.04	1.99	2.04	2.00	2.24	1.90	1.84
	Թերի բարձրագույն	2.15	2.00	1.98	1.91	2.11	2.00	2.03
	Բարձրագույն	1.98	1.86	1.90	1.84	2.24	2.07	1.81
	Հետբուհ. գիտ. աստիճան	1.50	1.50	1.50	1.50	1.83	1.57	2.00

որտեղ՝  
 «4» = Լիովին վստահում են  
 «3» = Ավելի շուտ վստահում են  
 «2» = Ավելի շուտ չեն վստահում  
 «1» = Բոլորովին չեն վստահում


## 5 ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

### 5.1 ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԵՏԵՎԵԼԸ

Կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրմամբ Հայաստանի ֆինանսական շուկայում ստեղծվում է նոր իրավիճակ եւ բացվում են շուկայի զարգացման նոր հնարավորություններ: Նոր համակարգի դեպքում կենսաթոշակային միջոցների օգտագործման վերաբերյալ ցանկացած որոշում կայացնում է ինքը՝ կենսաթոշակային մուծում կատարողը: Նա է ընտրում իր անհատական հաշվում կուտակված ակտիվների կառավարչին, նա է որոշում որտեղ եւ ինչ ռիսկայնությամբ ներդնել իր միջոցները, նա է ընդունում որոշումը՝ վատ կառավարչի փոփոխության վերաբերյալ: Իսկ այդ ամենը կատարելու համար հաշվետեղը հնարավորություն ունի հետեւել իր հաշվին՝ ամսական հաշվետվությունների պարտադիր ստանալու միջոցով, վերահսկել իր կուտակումների ֆինանսական վիճակը, համադրել իր դիվիդենտները շուկայական միջինի հետ եւ իր ունակություններին համապատասխան որոշում կայացնել սեփական կենսաթոշակային միջոցների ճակատագրի վերաբերյալ:

Կենսաթոշակային մուծում կատարողը, որպեսզի կարողանա օգտվել այդ հնարավորություններից, նա պետք է առնվազն ունենա ֆինանսական միջոցների կառավարման որոշակի գիտելիքներ եւ փորձ: Դրանց առկայությունը գնահատելու համար հարցման մասնակիցներին տրվել է հարց, թե *հետեւում են արդյոք նրանք ֆինանսական շուկայի նորություններին*: Ընդ որում՝ հարցը տրվել է համեմատաբար լայն տարածում եւ մեծ ճանաչում ունեցող այնպիսի ֆինանսական նորությունների մասով, ինչպիսիք են ավանդի կամ վարկի տոկոսը, տարադրամի փոխարժեքը, գնաճի մակարդակը եւ պարտատոմսերի շահութաբերությունը: Մենք ենթադրել ենք, որ որքան ֆինանսական շուկայի նշված նորությունները կիրառական կամ կարելու են մարդկանց համար, այնքան նրանք այդ նորություններին ավելի հաճախ են հետեւում: Ստորեւ ներկայացված են այդ հարցի հետ կապված հարցման մասնակիցների պատասխանների վիճակագրությունը:

Նկար 30 - Հանրության կողմից ֆինանսական շուկայի նորություններին հետեւելը



Բերված տվյալները ցույց են տալիս, որ հանրության գերակշռող մասը հետեւում է միայն տարադրամի փոխարժեքին եւ գնաճի մակարդակի փոփոխություններին: Դա բացատրվում է

Նրանով, որ այդ երկու ցուցանիշներն ուղղակի կապ ունեն տնային տնտեսությունների եկամուտների մակարդակի հետ: Տարադրամի փոխարժեքի նկատմամբ մեծ (42%) հետաքրքրությունը պայմանավորված է արտերկրից ստացվող տարադրամի (ԱՄՆ դոլար, Եվրո կամ Ռուսական ռուբլի) հոսքերի ծավալով, որը շատ տնտեսությունների համար հանդիսանում է եկամտի միակ կամ հավելյալ աղբյուր: Որոշակի կանոնավորությամբ ստանալով այդ միջոցները, ստացող տնային տնտեսությունները ակամա հաղորդակից են լինում տարադրամի փոխարժեքի հետ կապված տեղեկություններին:

Գնաճի մակարդակի նկատմամբ առավել մեծ (62%) հետաքրքրությունը պայմանավորված է վերջին տարվա (2010թ.) ընթացքում այդ ցուցանիշի արձանագրված բարձր մակարդակով (2010թ.-ին՝ 8.2%), որն արտահայտվել է առաջին անհրաժեշտության ապրանքների մեծ մասի թանկացմամբ: Նաեւ սպառողական ապրանքների գների թռիչքով է պայմանավորված բնակչության գնողունակության անկումը եւ աղքատության ծավալների մեծացումը: Ուստի հանրության համար գնաճի ցուցանիշը այսօր հանդիսանում է մեծ մտահոգության եւ տագնապի առարկա: Սակայն հանուն արդարության պետք է նշել, որ հարցման մասնակիցների մի զգալի մասի համար «գնաճի ցուցանիշը» ոչ թե պետության (ի դեմս Ազգային Վիճակագրական Ծառայության) կողմից հաշվարկվող եւ հանրությանը ներկայացվող ցուցանիշն է, այլ *ապրանքների գների սեփական դիտարկումների արդյունքում ձեւավորված պատկերացումները*: Ուստի հանրության այս խմբին չի կարելի վերաբերվել մի զանգվածի, որը *հետեւում է գնաճի մակարդակի ցուցանիշին*:

Ֆինանսական շուկայի մյուս նորություններին, որոնք կապված են ավանդի եւ վարկի տոկոսների հետ, հանրության փոքր մասն է հետեւում (համապատասխանաբար 11% եւ 18%): Դրանք հիմնականում ֆինանսական համակարգի մասնագետներ են կամ ավանդներ եւ վարկեր ունեցող (կամ ունեցած) մարդիկ: Հանրության շրջանում սահմանափակ կիրառության արդյունքում էլ ավելի ցածր է պարտատոմսերի շահութաբերության ցուցանիշին հետեւելու մակարդակը:

## 5.2 ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՄՊԱՌՈՒՄԸ

Դատելով հանրության կողմից ֆինանսական շուկայի նորություններին հետեւելու պատկերից, կարելի է ենթադրել, որ կենսաթոշակային բարեփոխումների մասին նորություններին եւս կարող են հետեւել հանրության ոչ մեծ մասը: Եթե հիմնվենք հանրության կողմից ֆինանսական շուկայի նորություններին հետեւելու տրամաբանության վրա, ապա կենսաթոշակային բարեփոխումներին վերաբերվող նորություններին կարող են ավելի շատ հետեւել մարդիկ, ովքեր անմիջական առնչություն ունեն կենսաթոշակների հետ, մասնավորապես ներկայիս կենսաթոշակառուները, ինչպես նաեւ մարդիկ, որոնց քիչ է մնացել հասնելու կենսաթոշակային տարիքի: Մինչդեռ առավել երիտասարդները (16-25 տ եւ 26-40 տ) հնարավոր է, որ չհետեւեն կենսաթոշակային բարեփոխումներին վերաբերվող նորություններին, կարծելով, որ դա իրենց չի վերաբերվում կամ դեռ վաղ է դրա մասին մտածելը: Մինչդեռ հատկապես մինչեւ 40 տարեկան մարդկանց համար են սպասվում ամենամեծ նորամուծությունները: Ուստի անկախ հանրության ցանկությունից, ՀՀ Կառավարությունը ստիպված կլինի կենսաթոշակային բարեփոխումների եւ դրանց պայմանների մասին տարածել տեղեկություններ, ձգտելով այն հասցնել հանրության բոլոր շերտերին: Դա անելու համար, նախ եւ առաջ անհրաժեշտ է պատկերացում ունենալ, թե որոնք են հանրության կողմից տեղեկատվություն ստանալու աղբյուրները եւ ինչպիսին է դրանց նկատմամբ հանրության վստահության աստիճանը:

### 5.2.1 Հանրության կողմից տեղեկատվություն ստացման աղբյուրները


Տեղեկատվություն ստանալու համար հանրությունը օգտվում է բազմաթիվ աղբյուրներից: Ըստ նախնական ենթադրության, դրանց կազմը ըստ տեղեկատվության թեմատիկ ուղղությունների



պետք է որ տարբեր լիներ: Որպես տեղեկատվության թեմատիկ ուղղություններ՝ առանձնացվել են քաղաքական, տնտեսական, սոցիալական եւ մշակութային տեղեկությունները: Սակայն հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ տեղեկությունների թեմատիկ ուղղվածությամբ պայմանավորված առանձնահատկություններ գրեթե չկան, քանի որ բոլոր դեպքերում տեղեկատվության աղբյուրների կազմը գրեթե նույնն է:

Տեղեկատվության աղբյուրների մեջ բացառիկ դեր ունի հեռուստատեսությունը: Այն հանրության 92-93%-ի համար ծառայում է բոլոր տեսակի տեղեկությունների ստացման աղբյուր: Հաջորդ ամենաօգտագործվող տեղեկատվության աղբյուրներն են թերթերը, ծանոթները/բարեկամները, ինտերնետը (տես Նկար 31).

**Նկար 31 - Հանրության կողմից տեղեկատվության ստացման աղբյուրներն ըստ տեղեկությունների թեմատիկ ուղղությունների**




Ինտերնետը, որպես տեղեկատվության տարածման/ստացման ժամանակակից միջոց, դեռեւս լայն տարածում չունի հանրության շրջանում: Հանրության 36%-ը հաստատել է, որ իրենք տան

ունեն համակարգիչներ, 32%-ը օգտվում է ինտերնետից, սակայն ընդամենը 13-14%-ն է ինտերնետը ծառայեցնում/օգտագործում որպես տեղեկատվության ստացման միջոց: Մնացած 18-19%-ի համար ինտերնետը լուծում է սոցիալական ցանցերում շփման խնդիրը, ինչպես նաև ծառայում է որպես հեռավոր ազգականների, ծանոթների եւ ընկերների հետ կապի եւ հաղորդակցության ապահովման միջոց:

**5.2.2 Հանրության նախընտրելի ՉԼՄ-ները. հաճախականություն եւ վստահություն**

Ցանկացած կառույցի համար, ով մտադրություն ունի իրականացնել լայն տեղեկատվական արշավ, անհրաժեշտ է իմանալ, թե որոնք են տեղեկատվության ամենաօգտագործելի աղբյուրները եւ ինչ վստահություն են վայելում դրանք: Մեր իրականության մեջ տեղեկատվության աղբյուրի օգտագործման աստիճանին եւ նրա նկատմամբ վստահությանը պետք է վերաբերվել որպես տարբեր երեւույթների: Հայաստանի շատ տարածաշրջաններում տեղեկատվության աղբյուրներից հասանելի են ընդամենը մի քանիսը: Նման դեպքերում բնակչությունն այլընտրանք չունի եւ օգտվում է այդ տեղեկատվության աղբյուրներից: Սակայն ստացած տեղեկատվությանը բնակչությունը կարող է անվստահությամբ վերաբերվել, ինչը նշանակում է, որ տեղեկատվության կոնկրետ աղբյուրն ունի լայն օգտագործում, սակայն վստահության ցածր մակարդակ: Ուստի մենք եւս, հաշվի առնելով այդ առանձնահատկությունը, տեղեկատվության աղբյուրների օգտագործման աստիճանին եւ վստահությանը վերաբերվել ենք որպես առանձին երեւույթների եւ վերլուծությունն էլ կառուցել ենք առանձին:

Նկար 32 - Հանրության կողմից առավել շատ օգտագործվող հեռուստաալիքները եւ դրանց օգտագործման հաճախականությունը



(\* ) - Այդ հեռուստաալիքը արդեն չի գործում

Նկար 31-ից երեւաց, որ զանգվածային լրատվության միջոց հանդիսացող տեղեկատվության աղբյուրներից առավել տարածված են հեռուստատեսությունը, թերթերը, ինտերնետը եւ ռադիոն: Ստորեւ ներկայացված են այդ տեղեկատվության աղբյուրների հանրության կողմից առավել մեծ օգտագործման աստիճան ունեցող լրատվության միջոցների կազմը:

**5.2.2.1 Հեռուստաալիքներ**


Հետազոտության արդյունքների համաձայն հարցման մասնակիցները նշել են թվով 18 հեռուստաալիքներ, որոնք իրենք դիտում են եւ ստանում են տեղեկատվություն: Թվարկված հեռուստաալիքներից 8-ը ունեն օգտագործման շատ ցածր աստիճան՝ ոչ ավել, քան հանրության 1%-ի կողմից: Այդ ցանկում են հայտնվել հայկական TV5, Երեւան, Դար 21, ATV, Արարատ, Հայրենիք, ArmNews եւ եվրոպական EuroNews հեռուստաալիքները: 1%-ից ավել օգտագործման աստիճան ունեցող 10 հեռուստաալիքների կազմը ներկայացված է Նկար 32-ում: Հանրության կողմից ամենաշատ դիտվող հեռուստաալիքների ցանկը գլխավորում է Հանրային

Հեռուստաընկերության Առաջին ալիքը (Հ1): Հայկական բոլոր հեռուստաալիքների մեջ Հ1-ն ունի հեռարձակման ամենամեծ գոտին: Ի տարբերություն հեռուստաալիքների մեծ մասի, այն հասանելի է Հայաստանի բոլոր բնակավայրերում, ինչի պատճառով նրա լսարանը օբյեկտիվորեն ամենամեծն է: Երկրորդ եւ երրորդ ամենաօգտագործելի հեռուստաալիքներն են Շանթը եւ Արմենիան, որոնք տեղեկատվության աղբյուր են հանդիսանում հանրության համապատասխանաբար 63%-ի եւ 59%-ի համար: Մյուս հեռուստաալիքների օգտագործման աստիճանն անհամեմատ ցածր է եւ երբեմն սահմանափակվում է առանձին կոնկրետ հաղորդումներով:

Համեմատած տեղեկատվության մյուս աղբյուրների հետ, հեռուստատեսությունը գրեթե ամենօրյա օգտագործման տեղեկատվության աղբյուր է: Այդ եւ վկայում հեռուստաալիքների օգտագործման հաճախականության ցուցանիշները, որոնք եւս ներկայացված են Նկար 32-ում: 5 հեռուստաալիքներ, այդ թվում՝ Հ1-ը, Շանթը, Արմենիան, ռուսական ալիքները (հիմնականում Ռուսական Առաջին եւ Երկրորդ ալիքները) եւ մարզային (տեղական) ալիքներն իրենց լսարանի 92-95%-ի կողմից օգտագործվում են ամեն օր: Հ2-ը, ԱՐ-ը եւ ԱԼՄ-ն (որը 2011թ. հունվարից չի գործում) ամեն օր դիտում են դրանց լսարանի 80-89%-ը, իսկ Երկիր-Մեդիան եւ Կենտրոնը ամեն օր դիտում են լսարանի համապատասխանաբար 77%-ը եւ 68%-ը:

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ հեռուստաալիքների նկատմամբ հանրության վստահությունը որեւէ կապ չունի դրանց օգտագործման աստիճանի հետ: Բավական է նշել, որ ամենից մեծ լսարան ունեցող հեռուստաալիքը՝ Հ1-ը ունի **ամենացածր վստահության մակարդակը**: Գնահատման հնգանիշ սանդղակով հեռուստաալիքների վստահության գնահատման ցուցանիշները ներկայացված են ստորեւ (տես Նկար 33 եւ Աղյուսակ 30):

Նկար 33 - Հանրության կողմից առավել շատ օգտագործվող հեռուստաալիքների նկատմամբ վստահության մակարդակը



Աղյուսակ 30 - Հանրության կողմից առավել շատ օգտագործվող հեռուստաալիքների օգտագործման ինտենսիվությունը համեմատած վստահության մակարդակի հետ

Հեռուստաալիքներ	Դիրքը . . .	
	ըստ օգտագործման ինտենսիվության	ըստ վստահության մակարդակի
Հ1	1	10
Շանթ	2	2
Արմենիա	3	5
Հ2	4	9
Երկիր-Մեդիա	5	7
Ռուսական ալիքներ	6	4
Կենտրոն	7	8
ԱԼՄ *	8	6
Մարզային ալիքներ	9	1
ԱՐ	10	3

(\* ) - Այս ալիքը արդեն չի գործում


→ որտեղ՝ «5» = Միանշանակ վստահում են  
 «4» = Ավելի շուտ վստահում են  
 «3» = . . .  
 «2» = Ավելի շուտ չեն վստահում  
 «1» = Բոլորովին չեն վստահում

Ընդհանրապես հանրության մի զգալի մասը կարծում է, որ իշխանամետ հեռուստաալիքները, որպեսզի ընկալվում են հատկապես 31-ը, 32-ը, Կենտրոնը, այնքան էլ ճիշտ եւ անաչառ չեն լուսաբանում երկրում առկա սոցիալ-տնտեսական վիճակը: Ըստ հարցման մասնակիցների, դրանք ավելի շուտ ծառայում են իշխանությունների գովաբանմանը եւ իմիջի ամրապնդմանը, քան թե իրականության ներկայացմանը: Շատ մարդիկ էլ այդ հեռուստաալիքներին (հատկապես 31-ին) հայտնելով ցածր վստահություն՝ փորձել են այդ կերպով արտահայտել իրենց դժգոհությունը այդ ալիքների որոշ հաղորդումներից: «Բարձր օգտագործում+բարձր վստահություն» տարբերակով առաջատար հեռուստաալիքը Շանթն է: Այն ունի մեծությամբ 2-րդ լսարանը եւ վստահության ամենաբարձր ցուցանիշը (եթե չհաշվենք տեղական ալիքները):

5.2.2.2 Թերթեր

Ըստ մեր գնահատման, որի հետ համաձայն են նաեւ բազմաթիվ այլ փորձագետներ, ներկայումս Հայաստանում հեռուստատեսությունը ամբողջությամբ վերահսկվում է իշխանությունների կամ նրանց նկատմամբ լոյալ դիրքորոշում ունեցող քաղաքական ուժերի կամ դրանց հետ կապ ունեցող սուբյեկտների կողմից: Իշխանություններին ընդդիմադիր քաղաքական ուժերը հայտարարում են, որ իրենք չունեն իրենց համար ամբիոն ծառայող հեռուստաալիքներ: Ուստի տեղեկատվության տարածման համար նրանք հիմնական շեշտը դնում են թերթերի տպագրության վրա: Նմանապես հանրության այն մասը, որն ընդդիմադիր կեցվածք ունի իշխանությունների նկատմամբ, իրեն անհրաժեշտ տեղեկատվությունը, որը չի կարողանում գտնել հեռուստաթերթից, փորձում է ստանալ թերթերից: Հենց այս հանգամանքով պետք է բացատրել այն, որ հանրության կողմից ամենից շատ ընթերցվող թերթերի առաջին տասնյակի մեջ կեսից ավելին ներկայացնում են ընդդիմադիր քաղաքական ուժերի կողմից թողարկվող թերթերը, որոնց թվում են առաջին 4 ամենից շատ ընթերցվող թերթերը (տես Նկար 34):

Նկար 34 - Հանրության կողմից առավել շատ օգտագործվող թերթերը եւ դրանց օգտագործման հաճախականությունը




Հետազոտության արդյունքների համաձայն, հարցման մասնակիցները նշել են 16 թերթերի անուններ, որոնք ծառայում են որպես տեղեկատվության աղբյուրներ: Դրանցից 6-ը (Ժամանցային թերթեր, Ազգ, Հրապարակ, Ժամանակ, Կապիտալ, 168 ժամ) օգտագործվում են հանրության ոչ ավել, քան 1%-ի կողմից: Մյուս թերթերը եւս չեն կարող պարծենալ իրենց օգտագործման բարձր աստիճանով: Մասնավորապես ամենից շատ ընթերցվող թերթը Առավոտ օրաթերթն է, որն ընթերցում են հանրության ընդամենը 7%-ը, ընդ որում՝ նրանց միայն կեսն է Առավոտն ընթերցում ամեն օր: Ընդհանուր առմամբ՝ թերթերի օգտագործումը, որպես տեղեկատվության աղբյուրի, բավականին սահմանափակ է: Մեր գնահատմամբ, առաջիկա 1-2 տարիներին, պայմանավորված Հայաստանի հանրության

ինտերնետի զգացիայի տեմպերով, թերթերի օգտագործումն էլ ավելի է սահմանափակվելու եւ հանրության հիմնական շեշտադրությունը կտեղափոխվի դեպի դրանց ինտերնետային կայքերը:

Վստահության առումով առաջին 5 հորիզոնականներում գտնվում են գրեթե նույն թերթերը, որոնք առաջինն են նաեւ իրենց օգտագործման աստիճանով (տես Նկար 35 եւ Աղյուսակ 31):

**Նկար 35 - Հանրության կողմից առավել շատ օգտագործվող թերթերի նկատմամբ վստահության մակարդակը**



**Աղյուսակ 31 - Հանրության կողմից առավել շատ օգտագործվող թերթերի օգտագործման ինտենսիվությունը համեմատած վստահության մակարդակի հետ**

Թերթեր	Դիրքը . . .	
	ըստ օգտագործման ինտենսիվության	ըստ վստահության մակարդակի
Առավոտ	1	5
Հայկական ժամանակ	2	4
Չորրորդ Իշխանություն	3	3
Իրավունք	4	1
Հայաստանի Հանրապետություն	5	6
Հայոց Աշխարհ	6	10
Եթեր	7	7
Գոլոս Արմենիի	8	8
Մարզային թերթեր	9	2
Երկիր	10	9


Վստահության հարցում ուշագրավ բարձր դիրք ունեն մարզային թերթերը (4 բալ, մյուս թերթերի հետ համեմատած՝ 2-րդ ցուցանիշ): Սա հատկապես ուշագրավ է նրանով, որ վստահության առումով ամենաբարձր գնահատականի են արժանացել նաեւ մարզային հեռուստատեսությունները: Ակնհայտ է, որ հեռարձակման կամ տարածման սահմանափակ գոտի ունեցող մարզային լրատվության միջոցները մարզերի բնակիչների շրջանում վայելում են բավականին բարձր վստահություն, ինչը անպայմանորեն պետք է հաշվի առնվի կենսաթոշակային բարեփոխումների տեղեկատվական արշավի կազմակերպման ժամանակ:

**5.2.2.3 Ինտերնետային կայքեր**

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ հանրությունը նշել է ընդամենը 12 կայքեր, որոնք իրենց համար ծառայում են որպես տեղեկատվության աղբյուր: Դրանցից 5-ը (սոցիալական կայքեր, slaq.am, armtoday.info, asecese.am, hrapararak.am) օգտագործվում են հանրության ոչ ավել, քան 1%-ի կողմից: Մյուս 7 տեղեկատվական կայքերի օգտագործման ցուցանիշները ներկայացված են Նկար 36-ում: Կարելի է նկատել, որ ինտերնետի օգտագործումը, որպես տեղեկատվության աղբյուրի, դեռեւս ցածր մակարդակի վրա է: Ներկայացված տեղեկատվական կայքերի ուսումնասիրությունից կարելի է նկատել, որ դրանց մեծ մասը այլ տեղեկատվության աղբյուրների լուրերը վերարտադրող կայքեր են եւ ոչ թե ինքնուրույն տեղեկատվական

գործակալություններ: Բացառություն է կազմում միայն a1plus.am-ը, որտեղ փակումից հետո հանգրվանել է համանուն հեռուստաալիքը (Ա1+):


Նկար 36 - Հանրության կողմից առավել շատ օգտագործվող ինտերնետային կայքերը եւ դրանց օգտագործման հաճախականությունը



Ամենից հաճախ իրենց նախընտրած տեղեկատվական կայքն են այցելում news.am-ի հաճախորդները: Նրանց 87%-ը հայտարարել է, որ իրենք *ամեն օր* օգտվում են կայքի ծառայություններից: Մյուս կայքերը ամեն օր այցելում են իրենց օգտագործողների հետեւյալ մասը (ըստ նվազման կարգի). Iragir.am (73%), panorama.am (70%), tert.am (68%), armenianow.com (64%), yandex.ru (64%), a1plus.am (55%):

Ինտերնետային տեղեկատվական կայքերի նկատմամբ հանրության վստահության ցուցանիշները ինքնաբացատրող են ներկայացված են ստորել (տես Նկար 37 եւ Աղյուսակ 32):

Նկար 37 - Հանրության կողմից առավել շատ օգտագործվող ինտերնետային կայքերի նկատմամբ վստահության մակարդակը




Աղյուսակ 32 - Հանրության կողմից առավել շատ օգտագործվող ինտերնետային կայքերի օգտագործման ինտենսիվությունը համեմատած վստահության մակարդակի հետ

Ինտերնետային կայքեր	Դիրքը . . .	
	ըստ օգտագործման ինտենսիվության	ըստ վստահության մակարդակի
tert.am	1	4
a1plus.am	2	2
news.am	3	1
Iragir.am	4	3
yandex.ru	5	5
armenianow.com	6	7
panorama.am	7	6


5.2.2.4 Ռադիոյի ալիքներ

Մեր գնահատմամբ, Հայաստանի իրականության մեջ ռադիոն որպես տեղեկատվության միջոց, աստիճանաբար կորցնում է իր նշանակությունը: Ռադիոյի ալիքները, որոնց ունկնդրում են հանրության 1%-ից ավելին, ընդամենը երեքն են (տես Նկար 38): Դրա պատճառը հետևյալն է: Այսօր շատ թե քիչ ճանաչում են օգտագործում ունեն FM հաճախականությամբ հեռարձակվող ռադիոյի ալիքները, որոնց մեծ մասը Երեւանից եւ նրա շրջակա տարածքներից դուրս հասանելի չեն: Բացի այդ, դրանք հիմնականում ունեն երաժշտական-զվարճալի ուղղվածություն, ուստի որպես լրատվության միջոց՝ նրանց դերակատարությունը բավականին փոքր է: Այդ պատճառով է, որ ռադիոյի ալիքների մեջ, որպես տեղեկատվության աղբյուր, նշվել են միայն հանրային ցանցով հեռարձակվող Հանրային Ռադիոն եւ Ազատություն Ռադիոկայանը: Իր օգտագործման աստիճանով առաջատարը Ազատություն Ռադիոկայանն է, որը հանրության կողմից ընկալվում է որպես իշխանությունների կողմից չկառավարվող եւ օբյեկտիվ տեղեկատվություն փոխանցող լրատվության միջոց: Այդ իսկ պատճառով Ազատություն Ռադիոկայանը վայելում է իր ունկնդիրների բարձր վստահությունը, ինչում կարելի է համոզվել Նկար 39-ում եւ Աղյուսակ 33-ում բերված տվյալներից:

Նկար 38 - Հանրության կողմից առավել շատ օգտագործվող ռադիոյի ալիքները եւ դրանց օգտագործման հաճախականությունը



Նկար 39 - Հանրության կողմից առավել շատ օգտագործվող ռադիոյի ալիքների նկատմամբ վստահության մակարդակը



Աղյուսակ 33 - Հանրության կողմից առավել շատ օգտագործվող ռադիոյի ալիքների օգտագործման ինտենսիվությունը համեմատած վստահության մակարդակի հետ


Ռադիոյի ալիքներ	Դիրքը . . .	
	ըստ օգտագործման ինտենսիվության	ըստ վստահության մակարդակի
Ազատություն Ռադիոկայան	1	1
Հանրային Ռադիո	2	2
Հայ FM	3	3

5.2.3 Կենսաթոշակային բարեփոխումների վերաբերյալ տեղեկությունների ստացման նախընտրելի ձևաչափերը

Տեղեկատվության աղբյուրների մեջ օգտագործման ամենամեծ աստիճանն ունի հեռուստատեսությունը: Այն առաջարկում է հաղորդումների եւ ձեւաչափերի ամենամեծ բազմազանությունը: Հարցին, թե ի՞նչ ձեւաչափով կցանկանային տեղեկություններ ստանալ կենսաթոշակային բարեփոխումների մասին, հարցման մասնակիցները տվել են տասնյակ պատասխաններ: Ընդ որում՝ տեղեկատվության ստացման հարցում նախընտրությունների եւ ճաշակի բազմազանության պատճառով հարցման մասնակիցները նրանցիցի յուրաքանչյուրը

տվել է մի քանի պատասխաններ, միջինը՝ 1.37 պատասխան: Ստացված պատասխանների նմանության հիման վրա կատարված խմբավորումից հետո ստացվել է հետևյալ պատկերը.

**Նկար 40 - Հանրության կողմից կենսաթոշակային բարեփոխումների վերաբերյալ տեղեկությունների ստացման նախընտրելի ձևաչափերը**



Հարց հարցման մասնակիցներին.

**Ի՞նչ ձևաչափով կնախընտրեիք տեղեկություններ ստանալ կենսաթոշակային բարեփոխումների մասին**

! Հարցման մասնակիցները տվել են մեկից ավելի պատասխաններ

! Հարցման մասնակիցների պատասխանները մասնակիորեն խմբագրվել են եւ խմբավորվել

Ինչպես կարելի է նկատել Նկար 40-ի տվյալներից, կենսաթոշակային բարեփոխումների մասին տեղեկությունների ստացման առավել նախընտրելի ձևաչափերը համընկնում են հեռուստատեսային հաղորդումների ձևաչափերին: Տպագիր միջոցներով (թերթեր, բուկլետներ) տեղեկատվության ստացումը պահանջված չէ: Միանշանակ կարելի է պնդել, որ տեղեկատվության սպառողը նախընտրում է դիտել եւ լսել, քան կարդալ: Տեղեկատվության ստացման առավել նախընտրելի ձևաչափը բանավեճերն ու հարցազրույցներն են: Ըստ հարցման մասնակիցների, բանավեճերի միջոցով տեղեկատվության ստացումը մի փոքր ավելի նախընտրելի է, քանի որ դրանց ընթացքում առկա է մտքերի բախում եւ բացի զուտ տեղեկատվությունից, ներկայացվում են նաեւ հիմնավորումներ: Ըստ հարցման մասնակիցների, հարցազրույցների ժամանակ տեղեկատվությունը կարող է մատուցվել ստանդարտ ձևով եւ միակողմանի: Ըստ հանրության տարբեր խմբերի, Նկար 40-ի տվյալների բաշխվածքը ներկայացված է ստորեւ.



**Աղյուսակ 34 - Հանրության տարբեր խմբերի կողմից կենսաթոշակային բարեփոխումների վերաբերյալ տեղեկությունների ստացման նախընտրելի ձևաչափերը**

	Ըստ սեռի		Ըստ տարիքային խմբերի			
	Արական	Իգական	16-25 տ	26-40 տ	41-62 տ	63 տ եւ +
Բանավեճեր եւ թոք շոուներ	59%	48%	60%	46%	51%	51%
Հարցազրույցներ	35%	45%	36%	42%	42%	46%
Հատուկ կրթական ծրագրեր	11%	10%	13%	9%	9%	13%
Ինձ ոչինչ չի հետաքրքրում, ինձ համար միեւնույն է	10%	7%	2%	7%	9%	12%
Չեռուստառադիոգովազդ	6%	7%	10%	8%	5%	4%
Տեղեկատվական ֆիլմեր	4%	6%	6%	6%	6%	2%
Տպագիր նյութեր	2%	5%	6%	4%	4%	2%
Ռեպորտաժներ լուրերի թողարկման ժամանակ	3%	4%	2%	3%	4%	6%
Ինտերնետ	1%	1%	2%	2%	0%	-
Պետական այրերի կողմից ինֆորմ.-ի տրամադրում	0%	0%	-	0%	0%	-
Դժվարացել են պատասխանել	2%	2%	1%	2%	2%	1%

	Ըստ կրթական մակարդակի							
	Կրթություն չունեն	Տարրական	Թերի միջնակարգ	Միջնակարգ	Միջնակարգ տեխնիկական	Թերի բարձրագույն	Բարձրագույն	Հետբուհական գիտական աստիճան
Բանավեճեր եւ թոք շոուներ	-	75%	41%	50%	53%	60%	51%	63%
Հարցազրույցներ	100%	100%	42%	50%	49%	34%	29%	38%
Հատուկ կրթական ծրագրեր	-	-	19%	9%	10%	2%	12%	13%
Ինձ ոչինչ չի հետաքրքրում, ինձ համար միեւնույն է	-	-	10%	7%	6%	10%	10%	13%
Չեռուստառադիոգովազդ	-	-	5%	9%	6%	4%	5%	-
Տեղեկատվական ֆիլմեր	-	-	5%	4%	7%	-	7%	-
Տպագիր նյութեր	-	-	-	2%	5%	10%	6%	-
Ռեպորտաժներ լուրերի թողարկման ժամանակ	-	-	7%	2%	2%	8%	5%	-
Ինտերնետ	-	-	-	0%	0%	-	2%	13%
Պետական այրերի կողմից ինֆորմ.-ի տրամադրում	-	-	-	-	-	-	1%	-
Դժվարացել են պատասխանել	-	-	2%	3%	1%	2%	2%	-

Կենսաթոշակային բարեփոխումների մասին տեղեկությունների ստացման ձևաչափերի հարցում հանրության տարբեր խմբերն ունեն տարբերվող նախասիրություններ: Մասնավորապես, բանավեճերի ձևաչափով տեղեկատվության ստացմանը ավելի շատ կողմ են տողամարդիկ, երիտասարդները (16-25 տ) եւ ավելի բարձր կրթական մակարդակ ունեցողները: Հարցազրույցների դեպքում պատկերը հակառակն է. դրանց ավելի շատ կողմ են կանայք, ավագ տարիքային խմբերը եւ ավելի ցածր կրթական մակարդակ ունեցողները:

## 6 ԱՄՓՈՓՈՄ

### 6.1 ԵԶՐԱՅԱՆԳՈՒՄՆԵՐ

Ամփոփելով հետազոտության արդյունքները, կարելի է արձանագրել, որ Հայաստանում գործող կենսաթոշակային համակարգին եւ ընթացքի մեջ գտնվող կենսաթոշակային բարեփոխումների վերաբերվող հարցերի մասին հանրության տեղեկացվածությունը տարբեր է: Կենսաթոշակային համակարգին առնչվող որոշ հարցերի շուրջ հանրությունն ունի բավարար տեղեկություններ, իսկ որոշ հարցերի մասին՝ չնչին տեղեկություններ: Ասվածի ապացույցն են կենսաթոշակային համակարգի հիմնական բաղադրիչների մասին հանրության տեղեկացվածության հետեւյալ ամփոփ ցուցանիշները.

Տեղեկացվածության ցուցանիշներ	Տեղեկացվածության մակարդակը
1. Հայաստանում գործում է բաշխողական կենսաթոշակային համակարգ	27%
2. Կենսաթոշակները ֆինանսավորվում են գործատուների եւ վարձու աշխատողների սոցվճարներից	39%
3. Գործատուների սոցվճարները կազմում են աշխատավարձի նկատմամբ 7,000 դրամ / 15% / 5%, իսկ վարձու աշխատողների սոցվճարները՝ աշխատավարձի նկատմամբ 3%	1%
4. Գործատուների սոցվճարները կազմում են աշխատավարձի նկատմամբ 7,000 դրամ / 15% / 5%	3%
5. Վարձու աշխատողների սոցվճարները կազմում են աշխատավարձի նկատմամբ աշխատավարձի նկատմամբ 3%	5%
6. Կենսաթոշակը բաղկացած է բազային կենսաթոշակի չափից եւ ապահովագրական ստաժի 1 տարվա արժեքից	41%
7. Բազային կենսաթոշակի չափը կազմում է 10,500 դրամ	2%
8. Ապահովագրական ստաժի մեկ տարվա՝ արժեքը կազմում է 450 դրամ	2%
9. Բազային կենսաթոշակի չափը եւ ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքը սահմանում է ՀՀ Կառավարությունը	39%
10. Հայաստանում տղամարդկանց կենսաթոշակի անցնելու տարիքը 63 տարեկանն է	43%
11. Հայաստանում կանանց կենսաթոշակի անցնելու տարիքը 63 տարեկանն է	45%
12. Հայաստանում իրականացվում են կենսաթոշակային բարեփոխումներ	36%
13. Կենսաթոշակային բարեփոխումների առանցքը կազմում է կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրումը	40%
14. Կուտակային կենսաթոշակային համակարգը գործելու է կամավոր եւ պարտադիր սկզբունքներով	10%
15. Կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգը ներդրվելու է 2011թ.-ին	12%
16. Պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգը ներդրվելու է 2014թ.-ին	4%
17. Կուտակային կենսաթոշակային համակարգը պարտադիր է լինելու ներդրման տարվա (2014թ.) դրությամբ 40 տարեկան դարձած եւ դրանից ցածր տարիքի մարդկանց համար	6%
18. Պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգը ձեւավորվելու է անձանց եւ պետության վճարումներից	4%

Հետազոտությամբ ստացված քանակական եւ որակական տեղեկատվության համադրման արդյունքում մենք կատարել ենք հետեւյալ հիմնական եզրահանգումները.

1. Հայաստանում գործող կենսաթոշակային համակարգի վերաբերյալ հանրության տեղեկացվածության աստիճանը բարձր չէ: Որպես այդ իրավիճակը բացատրող հավանական պատճառ՝ կարելի է առանձնացնել այն, որ աշխատանք ունեցող մարդկանց կողմից սոցիալական վճարների կատարման պարտավորությունը օրենքով դրված է նրանց գործատուների վրա:
2. Հանրությունը բավարար չափով տիրապետում է գործող կենսաթոշակային համակարգի վերաբերյալ որակական տեղեկատվությանը, ինչպիսիք են կենսաթոշակային ֆոնդի ձեւավորման աղբյուրները, կենսաթոշակի կառուցվածքը եւ բաղադրիչները, մինչդեռ անձանոթ են կամ չեն մտապահում թվային տեղեկությունները՝ սոցվճարների չափը, բազային կենսաթոշակի չափը եւ ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքը:
3. Հայաստանում գործող կենսաթոշակային համակարգի վերաբերյալ ամենալայն ճանաչումն ունի կենսաթոշակային տարիքի վերաբերյալ տեղեկությունը: Դրա պատճառն այն է, որ հանրության գերակշիռ մասը մտահոգված է կենսաթոշակի հետ կապված հարցերով, իսկ նրանց մոտ 1/3-ը գտնում է, որ այն բարձր է սահմանված: Այս հարցի պատասխանի բացատրությունը հանրության այն ըստ զբաղվածության բաշխվածքի մեջ է: Գաղտնիք չէ, որ կենսաթոշակային տարիքին մոտ գտնվող մարդկանց շրջանում գործազրկությունը անհամեմատ ավելի բարձր է, ուստի բնականորեն նրանք ցանկանում են տեսնել ցածր կենսաթոշակային տարիք, որը նրանց լրացուցիչ եկամտի աղբյուրի հնարավորություն կտա:
4. Հանրությունը լավի չի պատկերացնում, թե ներկայումս ի՞նչ խնդիրներ են առկա Հայաստանի կենսաթոշակային համակարգում: Ըստ նրանց՝ երկու գլխավոր խնդիրներն են կենսաթոշակների ցածր չափը եւ կենսաթոշակային տարիքի բարձր շեմը: Մինչդեռ կենսաթոշակային համակարգի ժողովրդագրական խնդիրների, գործազրկության եւ սովետային տնտեսության մեծ մասշտաբների, ինֆլյացիայի բարձր աստիճանով պայմանավորված եկամուտների աճի ապահովման մասին մարդիկ չեն խոսել: Ավնհայտ է, որ հանրության պատկերացումներում կենսաթոշակային համակարգի առջեւ կանգնած խնդիրների պատճառներն ու հետեւանքները խառնվել են իրար:
5. Հանրության մեծ մասի համար կենսաթոշակային տարիքում նյութական ապահովվածության համար հիմնական պատասխանատու է դիտվում պետությունը: Մյուս կողմից՝ մեր սուբյեկտիվ գնահատմամբ, «բարեկեցիկ ծերություն» ապահովելու հարցում պետության հեղինակությունը այնքան էլ բարձր չէ: Կենսաթոշակների ներկայիս մակարդակը թույլ չի տալիս ապահովել նվազագույն սպառողական զամբյուղը, որի «մեղավորը» համարվում է պետությունը: Նկատելի է, որ ոչ կենսաթոշակային տարիքի մարդիկ (երիտասարդները, միջին տարիքի մարդիկ) դժվարանում են երկարաժամկետ պլաններ կառուցել եւ արտահայտվել այնպիսի հարցի շուրջ, որն իրենց համար հրատապ է դառնալու տարիներ հետո: Հանրության մեծ մասի մոտ երկրի կայուն զարգացման զգացողությունն չկա: Նման տրամադրվածությունը կարող է խանգարել կենսաթոշակային բարեփոխումների ընթացքին, որի համար անհրաժեշտ է երկարաժամկետ կտրվածքով մարդկանց դրական սպասումների առկայություն:
6. Հանրության տեղեկացվածության մակարդակը կենսաթոշակային բարեփոխումների մասին բավականին ցածր է եւ ոչ ամբողջական: Այսօր դեռ շատ դժվար է հանդիպել մարդկանց, ովքեր լիարժեք, համապարփակ եւ ճիշտ տեղեկություններ ունեն ներդրվող կենսաթոշակային համակարգի բոլոր բաղադրիչների մասին:
7. Հանրությունը խիստ մակերեսային եւ ոչ լիարժեք տեղեկություն ունի կենսաթոշակային համակարգի ներդրման սկզբունքների՝ կամավոր եւ կուտակային համակարգերի, ժամկետների, կենսաթոշակային ֆոնդի ձեւավորման աղբյուրների մասին: Համեմատության

մեջ՝ հանրությունը մի փոքր ավելի լավ է տեղեկացված կամավոր, քան պարտադիր կուտակային համակարգի եռթյան ու մանրամասների մասին:

8. Հանրության վերաբերմունքը կենսաթոշակային ֆոնդի ձեւավորման աղբյուրների մասին, ընդհանուր առմամբ, դրական է: Սեփական վճարման չափը հանրության մեծամասնությունը համարում է միանգամայն ճիշտ սահմանված: Ինչ վերաբերում է պետության վճարման չափին, հանրության մեծամասնությունը գտնում է, որ պետք է ավելացնել: Իհարկե, պետք է հաշվի առնել, որ քիչ չեն մարդիկ, որ հարցին մոտենում են «որքան շատ, այնքան լավ» տեսանկյունից:
9. Հանրության վերաբերմունքը եւ դիրքորոշումները կենսաթոշակային բարեփոխումների վերաբերյալ բաժանվում են երկու մասի. մի մասը դրական է արտահայտվել բարեփոխումների վերաբերյալ եւ գտնում է, որ կենսաթոշակային համակարգի ներդրումը կհանգեցնի կենսաթոշակների չափի բարձրացմանը, իսկ բացասական տրամադրված մասը գտնում է, որ բարեփոխումները ոչ մի արդյունք չեն տա: Ուշագրավն այն է, որ կենսաթոշակային բարեփոխումների նկատմամբ բացասաբար տրամադրված մարդկանց մեծ մասը չի լսել ոչ ընթացքի մեջ գտնվող կենսաթոշակային բարեփոխումների մասին եւ ոչ էլ կուտակային կենսաթոշակային համակարգի մասին: Ստացվում է, որ ոչ փոքր թվով մարդիկ կարծիք են հայտնում մի բանի մասին, որից տեղեկություն չունեն: Ակնհայտ է, որ որոշակի սոցիալական լարվածությունը բացասաբար է ազդում մարդկանց տրամադրությունների վրա՝ ձեւավորելով ապագայի եւ կենսաթոշակային բարեփոխումների նկատմամբ բացասական սպասումներ: Ուշագրավ է նաեւ այն, որ հանրության մի զգալի մասը, հստակ չիմանալով, թե ինչ է իրենից ներկայացնում կուտակային կենսաթոշակային համակարգը, այնուամենայնիվ պատրաստ է միանալու դրան: Սա կարող է նշանակել, որ հանրության այդ մասը, այլեւս հույս չկապելով գործող կենսաթոշակային համակարգի հետ, պատրաստ է օգտվել ցանկացած հնարավորությունից, որը թեկուզ տեսականորեն կարող է հանգեցնել կենսաթոշակների բարձրացման:
10. Հանրության շրջանում կենսաթոշակային բարեփոխումների վերաբերյալ հիմնական մտահոգությունը կապված է պետության նկատմամբ անվստահության եւ կուտակվելիք գումարների ապահովության հետ, ինչպես նաեւ չաշխատող մարդկանց կենսաթոշակի չափի հետ: Ընդ որում՝ պետության նկատմամբ անվստահություն հայտնածների մեջ գերակշռում են բարձր կրթական մակարդակ ունեցողները: Որքան մարդիկ երիտասարդ են (տարիքը փոքր է), այնքան ավելի շատ են կողմ բարեփոխումներին եւ հակառակը: Դրա պատճառը կարող է լինել այն, որ երիտասարդները, որոնց համար դեռ շատ երկար ժամանակ կա կենսաթոշակային տարիքին հասնելու համար, հակված են համակարգային փոփոխությունների, քանի որ այդ փոփոխությունները այնքան էլ չեն դիպչում նրանց այսօրեական շահերին: Չնայած դա ճիշտ դիրքորոշում չէ, քանի որ պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգը առաջին հերթին առնչվելու է հենց երիտասարդներին: Բացի այդ, երիտասարդներն ավելի են հակված տրարարությունների, քան ավագ տարիքի մարդիկ: Վերջիններիս ներկայացուցիչները (այդ թվում կենսաթոշակառուները) ավելի պահպանողական են եւ զգուշավոր բարեփոխումների հարցում, քանի որ ունեն մի շարք մտավախություններ եւ անհանգստություններ:
11. Կամավոր կուտակային համակարգին միանշանակ միանալու պատրաստակամություն հայտնած մարդիկ կազմում են հանրության 19%-ը: Նրանք ակնկալում են, որ այս համակարգը կլինի առավել արդյունավետ, կօգնի սերունդների համար գումար խնայել եւ վերջապես, կապահովի առավել բարձր կենսաթոշակ: Հանրության մոտավորապես նույն չափի մեկ այլ խումբը պատրաստ է միանալու կամավոր կենսաթոշակային համակարգին միայն բավարար եկամուտ կամ աշխատավարձ ունենալու պարագայում: Կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգի զարգացման գլխավոր խոչընդոտը կլինի այն, որ հանրության մեծ մասն ի վիճակի չէ կատարել խնայողություններ:

12. Հանրության շրջանում պետական եւ ֆինանսական կառույցները վստահության առանձնապես բարձր վարկանիշ չունեն: Ուշագրավն այն է, որ մարդիկ ի վիճակի չեն հստակ բացատրել իրենց դիրքորոշման պատճառները: Այդ իմաստով շատ դժվար է ըմբռնել, թե ինչու՞ է հանրությունը վստահության ամենացածր գնահատականի արժանացրել ապահովագրական ընկերություններին, եւ ի՞նչ հիմքով է ամենաբարձր գնահատականը տվել ՀՀ Կենտրոնական Բանկին: Վատ իմաստով առավել ուշագրավ է այն, որ պետական եւ ֆինանսական կառույցների նկատմամբ վստահությունը ամենացածրն է հանրության սոցիալապես եւ տնտեսապես առավել ակտիվ խմբերի՝ 41-62 տարեկան եւ առավել բարձր կրթական մակարդակ ունեցող անձանց շրջանում:
13. Ֆինանսական շուկայի նորություններից ամենալայն տարածումն ունեն հանրության շրջանում տարադրամի փոխարժեքը եւ գնաճի մակարդակի փոփոխությունները: Այս երկու ցուցանիշների նկատմամբ հետաքրքրությունը պայմանավորած է արտերկրից ստացվող տարադրամի մեծ հոսքերով եւ գնաճի բարձր ցուցանիշով, որոնք ուղղակիորեն եւ անմիջապես «դիպչում են» մարդկանց գրպանին: Ֆինանսական շուկայի այլ նորություններին հետեւելու հանրության ձգտումը շատ փոքր է: Ի միջի այլոց, դա կարող է վատ անդրադարձնալ նաեւ կենսաթոշակային բարեփոխումների մասին նորությունների ընկալման վրա:
14. Հասարակության շրջանում քաղաքական, տնտեսական, մշակութային, սոցիալական տեղեկությունների սպառման հիմնական միջոցն է հեռուստատեսությունը: Հաջորդ ամենատարածված տեղեկատվական աղբյուրներն են ծանոթները, բարեկամները, թերթերը եւ ինտերնետը: Վերջինս հիմնականում ծառայում է սոցիալական ցանցերից օգտվելու եւ հետո միայն ինֆորմացիայի սպառման նպատակով: Հետազոտության արդյունքները եւս վկայում են, որ մինչ այժմ կենսաթոշակային ներդրվող համակարգի վերաբերյալ տեղեկության տարածման ամենաազդեցիկ եւ հիշվող միջոցը հեռուստատեսությունն է:
15. Ամենալայն սպառումն ունեցող հեռուստաալիքներն են Հ1-ը, Շանթը, Արմենիան, ռուսական եւ մարզային հեռուստաալիքները: Սակայն հեռուստաալիքների օգտագործումը որեւէ կապ չունի դրանց օգտագործման աստիճանի հետ, օրինակ՝ Հ1-ը, որը ամենամեծ լսարանն ունի, ամենաքիչ վստահությունն է վայելում, իսկ մարզային հեռուստաալիքները՝ ամենաբարձրը: Բարձր վստահություն եւ բարձր սպառում ունեցող միակ հեռուստաընկերությունը Շանթն է: Ըստ փորձագետների, ներկայումս Հայաստանում հեռուստատեսությունը ամբողջությամբ վերահսկվում է իշխանությունների կամ նրանց նկատմամբ լոյալ դիրքորոշում ունեցող քաղաքական ուժերի կամ դրանց հետ կապ ունեցող սուբյեկտների կողմից: Իշխանություններին ընդդիմադիր քաղաքական ուժերի դիրքորոշումները եւ կարծիքները հանրությանը հասնում են հիմնականում թերթերի եւ ինտերնետի միջոցով: Այդ պատճառով հանրության այն մասը, որն ընդդիմադիր կեցվածք ունի իշխանությունների նկատմամբ, իրեն անհրաժեշտ տեղեկատվությունը, որը չի կարողանում գտնել հեռուստաթերթից, փորձում է ստանալ թերթերից: Հենց այս հանգամանքով պետք է բացատրել այն, որ հանրության կողմից ամենից շատ ընթերցվող թերթերի առաջին տասնյակի մեջ կեսից ավելին ներկայացնում են ընդդիմադիր քաղաքական ուժերի կողմից թողարկվող թերթերը:
16. Նույնն է պատկերը նաեւ ռադիոյի ալիքների դեպքում: Իր օգտագործման աստիճանով առաջատարը Ազատություն Ռադիոկայանն է, որը հանրության կողմից ընկալվում է որպես իշխանությունների կողմից չկառավարվող եւ օբյեկտիվ տեղեկատվություն փոխանցող լրատվության միջոց: Այդ իսկ պատճառով Ազատություն Ռադիոկայանը վայելում է իր ունկնդիրների բարձր վստահությունը:
17. Հանրության կողմից կենսաթոշակային բարեփոխումների վերաբերյալ ամենանախընտրելին հեռուստատեսային ձեռագրերն են բանավեճերը եւ հարցազրույցները: Ընդ որում՝

բանավեճերը համարվում են առավել նախընտրելի ձեռաչափ, քանի որ դրանց ընթացքում առկա է մտքերի բախում եւ բացի գուտ տեղեկատվությունից, ներկայացվում են նաեւ հիմնավորումներ: Ըստ հարցման մասնակիցների, հարցազրույցների ժամանակ տեղեկատվությունը կարող է մատուցվել ստանդարտ ձեւով եւ միակողմանի:

## 6.2 ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տեղեկատվական արշավի հիմնական ուղերձները կազմելիս պետք է համեմատություններ անցկացվի գործող եւ ներդրվող համարգի միջեւ. եթե գործող կենսաթոշակային համակարգը նույնականացվում է ցածր կենսաթոշակի, գործատուների կողմից խախտումների հետ, ապա ներդրվող համակարգից եղած սպասումներն են բարձր կենսաթոշակը եւ սերունդների համար գումար կուտակելու հնարավորությունը: Հասարակության շրջանում պետք է վստահության պակասը լրացվի՝ շեշտադրելով նոր կենսաթոշակային համակարգի պայմաններում իրենց սպասելիքների եւ ակնկալիքների իրագործելիությունը:
2. Կենսաթոշակային բարեփոխումների իրականացման անհրաժեշտությունը ներկայացնելիս պետք է հստակ ներկայացնել, որ այն կատարվում է կենսաթոշակների բարձր մակարդակ ապահովելու նպատակով, ընդ որում ոչ միայն բացարձակ մակարդակը, այլ նաև հարաբերական մակարդակը սեփական աշխատավարձի նկատմամբ, քանի որ որպես խնդիր մեծ մասը նշել էին կենսաթոշակների ցածր մակարդակը: Բոլոր տեսակի հիմնավորումները պետք է բերել ներկա վիճակում բարձր կենսաթոշակներ վճարելու անհնարինության լույսի ներքո, նաև հստակ նշելով, որ կենսաթոշակային ծախսերը պետական բյուջեի համար միակ առաջնահերթությունը չի:
3. Կենսաթոշակային բարեփոխումների վերաբերյալ տեղեկատվական արշավի ժամանակ բազմիցս օգտագործվել է այն ուղերձը, որ անձը ինքն է պատասխանատու լինելու իր կենսաթոշակի չափի համար: Հավանաբար, դրանով է պայմանավորված այն, որ կուտակային կենսաթոշակային համակարգի մասին տեղյակ հանրության (ընդհանուրի 40%) կեսից ավելին կարծում է, որ այդ համակարգի դեպքում իր կենսաթոշակի համար վճարում է կատարելու միայն ինքը (տես Նկար 21, էջ 45): Կենսաթոշակային բարեփոխումների տեղեկատվական արշավի ժամանակ ճիշտ կլինի այդ հարցը տարանջատել եւ ներկայացնել երկու մասից.
  - առանձին ներկայացնել կենսաթոշակի չափի վերաբերյալ անձանց պատասխանատվության հարցը,
  - առանձին ներկայացնել կուտակային վճարների ֆինանսավորման սխեմաների մեջ պետության մասնակցության հարցը:
4. Քանի որ պետության դերը կենսաթոշակային ապահովության գործում այնուամենայնիվ դիտարկվում է առաջնային, ապա ուղերձների մեջ պետք է հստակ նշել, որ պետությունը ոչ թե «ձեռքերը լվանում է» այդ գործառույթից, այլ փոխում է իր մասնակցության ձևը այդ համակարգին, մասնավորապես վճարումներ կատարելով անձանց համար, ինչպես նաև կարգավորելով և վերահսկելով այդ միջոցների կառավարումը:
5. Կենսաթոշակային ներդրվող համակարգի վերաբերյալ հանրության ընկալումներում բացասական վերաբերմունքի հիմնական պատճառներն են կուտակվելիք գումարների ապահովության հիմնախնդիրը: Վերջինիս պետության նկատմամբ համատարած անվստահության է եւ հասարակական գիտակցությունում չփոխհատուցված ավանդների եւ կուտակվող գումարների նույնականացման արդյունքն է: Տեղեկատվական արշավը կարիք ունի շեշտադրելու համակարգի անվտանգության երաշխիքները, ընդ որում՝ նպատակահարմար է այն իրականացնել «չեզոք» անձանց ներգրավմամբ, քանի որ մեծ սպառում ունեցող հեռուստատալիքները հատկապես շատ ցածր վստահություն են վայելում

հասարակության կողմից: Այս տեսանկյունից արդյունավետ միջոց է մարզային լրատվամիջոցների օգտագործումը, քանի որ հարցումները փաստում են, որ վերջիններս տեղացիների կողմից բարձր վստահության են արժանանում ու բավական մեծ սպառում ունեն: Անհրաժեշտ է խորհրդային ավանդների և պարտադիր կուտակային ներդրումների համեմատությամբ հանդես գալը, մասնավորապես շեշտելով ռիսկերի զսպման մեխանիզմները, դիվերսիֆիկացիայի կարևորությունը և այլն: Հատկապես կարևոր է բնակչությանը հասանելի լեզվով ներկայացնել այդ տարբերությունները՝ տեղեկատվության բոլոր հասանելի միջոցներով:

6. Հանրության շրջանում կենսաթոշակային բարեփոխումների եւ կուտակային կենսաթոշակային համակարգի նկատմամբ վստահությունը բարձրացնելու համար պետությունը ձեռնարկելու է միջոցառումներ, որոնք կերաշխավորեն մարդկանց անհատական կենսաթոշակային հաշիվներին կուտակված միջոցների ապահովությունը: Դա նման է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի օրինակին, որի գործարկումը մեծ խթան հանդիսացավ բանկերում ֆիզիկական անձանց ավանդների ավելացման գործում, քանի որ մարդկանց մոտ առաջացրեց սեփական գումարների ապահովության զգացում: Այս խնդրի վրա, որպես մարդկանց մոտ ապահովության զգացում առաջացնելու միջոց, պետք է շատ մեծ շեշտադրություն արվի:
7. Հարցումները փաստում են, որ իրազեկման աստիճանի բարձրացման նպատակով նախընտրելի է շեշտադրումը կատարել հեռուստատեսային ձեւաչափի վրա՝ բանավեճերի, թոք-շոունների եւ հարցազրույցների միջոցով: Սակայն տեղեկացվածության բացը լրացնելու համար նպատակահարմար գործիք է նաեւ հատուկ կրթական ծրագրերի իրագործումը, ընդ որում ոչ միայն ՉԼՄ-ների միջոցով, այլ նաեւ բարեփոխումների շահառուների եւ նախաձեռնողների միջեւ «դեմ առ դեմ» երկխոսությունների ծավալման միջոցով՝ սեմինարներ, քննարկումներ, դասընթացներ:

## 7 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

### 7.1 ՀԱՎԵԼՎԱԾ 1

#### Վերլուծություն 1.

Կենսաթոշակային բարեփոխումների նկատմամբ ինչպիսի՞ վերաբերմունք ունեն *կենսաթոշակի հետ կապված հարցերով մտահոգված մարդիկ*

Վերջիններիս քանակը եւ մտահոգության պատճառները ներկայացվել է Բաժին 2.2.2-ում («Հանրության կողմից կենսաթոշակի կարելությունը ընկալումը», էջ 26), Նկար 8-ում (էջ 26) եւ Աղյուսակ 17-ում (էջ 27): Կենսաթոշակի հետ կապված հարցերով մտահոգված մարդիկ կազմում են հանրության 82%-ը: Կենսաթոշակային բարեփոխումների նկատմամբ իրենց վերաբերմունքն են արտահայտել հարցման մասնակիցների 40%-ը: Մարդիկ, որոնք *միաժամանակ իրենց մտահոգությունն են հայտնել կենսաթոշակի հետ կապված հարցերով եւ իրենց վերաբերմունքն են արտահայտել կենսաթոշակային բարեփոխումների նկատմամբ՝* կազմում են հանրության 35%-ը: Կենսաթոշակային բարեփոխումների նկատմամբ հանրության այս խմբի վերաբերմունքի ցուցանիշները ներկայացված են ստորեւ.

**!** Այստեղ ներկայացված է այս հարցին պատասխանած հանրության խմբի (ընդհանուրի 35%) բաշխվածքը, ովքեր միաժամանակ իրենց մտահոգությունն են հայտնել կենսաթոշակի հետ կապված հարցերով եւ իրենց վերաբերմունքն են արտահայտել կենսաթոշակային բարեփոխումների նկատմամբ:

**Աղյուսակ 35 - Կենսաթոշակի հետ կապված հարցերով մտահոգված մարդկանց վերաբերմունքը կենսաթոշակային բարեփոխումների նկատմամբ**

		Ինչպե՞ս եք վերաբերվում կենսաթոշակային համակարգի սպասվող բարեփոխումներին						Ընդամենը
		Միանը- շանակ կողմ են	Ավելի շուտ կողմ են	Միե- նույն է / անտար- բեր են	Ավելի շուտ դեմ են	Միանը- շանակ դեմ են	Դժվարա- ցել են պատաս- խանել	
<b>Որո՞նք են Ձեր մտահոգությունների պատճառները *</b>	Կենսաթոշակը հանդիսանում է (հանդիսանալու է) ընտանիքի եկամտի միակ աղբյուրը	0.4%	2.7%	1.2%	2.4%	1.1%	0.8%	<b>9%</b>
	Կենսաթոշակը հանդիսանում է (հանդիսանալու է) ընտանիքի եկամտի հավելյալ աղբյուրը	0.5%	1.1%	0.8%	0.6%	0.9%	0.3%	<b>4%</b>
	Մտահոգված են կենսաթոշակի փոքր չափերով	1.3%	3.1%	1.1%	1.9%	2.0%	1.0%	<b>10%</b>
	Մտահոգված են կենսաթոշակի փոքր չափերով	1.1%	5.3%	1.7%	3.5%	1.4%	1.5%	<b>15%</b>
	Կենսաթոշակը պետության եւ հասարակության համար շատ կարելու ինչի է	0.3%	1.3%	0.4%	1.1%	0.7%	0.4%	<b>4%</b>
	Դժվարացել են պատասխանել	-	0.5%	0.1%	0.1%	-	0.1%	<b>1%</b>
	<b>Ընդամենը</b>	<b>3%</b>	<b>11%</b>	<b>4%</b>	<b>8%</b>	<b>5%</b>	<b>4%</b>	<b>35%</b>

(\* ) - Հարցվածների 35%-ը կազմող հարցման մասնակիցները նշել են կենսաթոշակի հետ կապված հարցերով իրենց մտահոգվածության մի քանի (միջինը՝ 1.22) պատճառներ: Այդ պատճառով կենսաթոշակային բարեփոխումներին «միանշանակ կողմ» (կամ այլ պատասխաններ) տված հարցման մասնակիցների մասնաբաժինները գումարելիս ստացվում է ոչ թե 35%, այլ 43%: 35%-ից ավել մասը հարցման մասնակիցների այն քանակն է, որոնք նշել են կենսաթոշակի հետ կապված հարցերով իրենց մտահոգվածության մեկից ավելի պատճառներ:



**Վերլուծություն 2.**

Կենսաթոշակային բարեփոխումների նկատմամբ ինչպիսի՞ վերաբերմունք ունեն *կենսաթոշակային տարիքում իրենց նյութական ապահովվածության պատասխանատուի վերաբերյալ տարբեր կարծիք ունեցող մարդիկ*

Կենսաթոշակային տարիքում իրենց նյութական ապահովվածության պատասխանատուի վերաբերյալ հանրության կարծիքները վերլուծվել են Բաժին 2.2.3-ում («Հանրության պատկերացումները կենսաթոշակային տարիքում իրենց նյութական ապահովվածության պատասխանատուի վերաբերյալ», էջ 28), Նկար 9-ում (էջ 28) և Նկար 10-ում (էջ 29): Մարդիկ, որոնք պատասխանել են կենսաթոշակային տարիքում իրենց նյութական ապահովվածության պատասխանատուի վերաբերյալ հարցին և *միաժամանակ իրենց վերաբերմունքն են արտահայտել կենսաթոշակային բարեփոխումների նկատմամբ՝* կազմում են հանրության 40%-ը: Կենսաթոշակային բարեփոխումների նկատմամբ հանրության այս խմբի վերաբերմունքի ցուցանիշները ներկայացված են ստորև.

**!** Այստեղ ներկայացված է այս հարցին պատասխանած հանրության խմբի (ընդհանուրի 40%) բաշխվածքը, ովքեր լսել են կուտակային կենսաթոշակային համակարգի մասին (տես Նկար 15, էջ 36) և իրենց վերաբերմունքն են արտահայտել կենսաթոշակային բարեփոխումների նկատմամբ:

**Աղյուսակ 36 - Կենսաթոշակային տարիքում իրենց նյութական ապահովվածության պատասխանատուի վերաբերյալ տարբեր կարծիք ունեցող մարդկանց վերաբերմունքը կենսաթոշակային բարեփոխումների նկատմամբ**

		Ինչպե՞ս եք վերաբերվում կենսաթոշակային համակարգի սպասվող բարեփոխումներին						
		Միանշանակ կողմ են	Ավելի շուտ կողմ են	Միեւնույն է / անտարբեր են	Ավելի շուտ դեմ են	Միանշանակ դեմ են	Դժվարացել են պատասխանել	Ընդամենը
<b>Ո՞վ է պատասխանատու կենսաթոշակի անցնելուց հետո Ձեր նյութական ապահովվածության համար *</b>	Ես ինքս	0.9%	4.3%	1.7%	2.4%	1.2%	1.1%	<b>12%</b>
	Ընտանիքիս անդամները	0.5%	3.0%	1.9%	2.2%	1.5%	0.9%	<b>10%</b>
	Հարազատներս	0.1%	0.6%	0.3%	0.2%	0.1%	0.1%	<b>1%</b>
	Պետությունը	2.4%	7.8%	1.8%	5.8%	4.0%	2.1%	<b>24%</b>
	Դժվարացել են պատասխանել	0.1%	0.1%	0.1%	0.1%	0.1%	0.3%	<b>1%</b>
	<b>Ընդամենը</b>	<b>3%</b>	<b>13%</b>	<b>5%</b>	<b>9%</b>	<b>6%</b>	<b>4%</b>	<b>40%</b>

(\* ) - Հարցվածների 40%-ը կազմող հարցման մասնակիցները նշել են կենսաթոշակային տարիքում իրենց նյութական ապահովվածության մի քանի (միջինը՝ 1.21) պատասխանատուների: Այդ պատճառով կենսաթոշակային բարեփոխումներին «միանշանակ կողմ» (կամ այլ պատասխաններ) տված հարցման մասնակիցների մասնաբաժինները գումարելիս ստացվում է ոչ թե 40%, այլ 48%: 40%-ից ավել մասը հարցման մասնակիցների այն քանակն է, որոնք նշել են կենսաթոշակային տարիքում իրենց նյութական ապահովվածության մեկից ավելի պատասխանատուների անուններ:

**Վերլուծություն 3.**

Կենսաթոշակային բարեփոխումների նկատմամբ ինչպիսի՞ վերաբերմունք ունեն *կուտակային կենսաթոշակային համակարգի մասին տեղյակ մարդիկ*

Կուտակային կենսաթոշակային համակարգի մասին հանրության տեղեկացվածությունը վերլուծվել է Բաժին 3.1.3-ում («Հանրության տեղեկացվածությունը կուտակային կենսաթոշակային համակարգի մասին», էջ 36), Նկար 17-ում (էջ 37) եւ Աղյուսակ 20-ում (էջ 37): Կուտակային կենսաթոշակային համակարգի մասին տեղյակ հանրությունը կազմում է ընդհանուրի 40%-ը: Մնացածը (60%) կենսաթոշակային բարեփոխումների նկատմամբ վերաբերմունք չեն հայտնել, քանի որ ընդհանրապես չեն լսել այդ գործընթացների մասին:

**!** Այստեղ ներկայացված է այս հարցին պատասխանած հանրության խմբի (ընդհանուրի 40%) բաշխվածքը, ովքեր լսել են կուտակային կենսաթոշակային համակարգի մասին (տես Նկար 15, էջ 36):

**Աղյուսակ 37 - Կուտակային կենսաթոշակային համակարգի մասին տեղյակ մարդկանց վերաբերմունքը կենսաթոշակային բարեփոխումների նկատմամբ**

		Ինչպե՞ս եք վերաբերվում կենսաթոշակային համակարգի սպասվող բարեփոխումներին						
		Միանը- շանակ կողմ են	Ավելի շուտ կողմ են	Միե- նույն է / անտար- բեր են	Ավելի շուտ դեմ են	Միանը- շանակ դեմ են	Դժվարա- ցել են պատաս- խանել	Ընդա- մենը
<b>Ի՞նչ է կուտակային կենսաթոշակային համակարգը *</b>	Կենսաթոշակային ֆոնդը ձեռ- վորվելու է աշխատավարձից տոկոսներ մուծելու եղանակով	2%	6%	3%	5%	3%	2%	<b>21%</b>
	Գումար է կուտակվելու եւ վերադարձվելու կենսաթոշակի տեսքով	-	0%	-	0%	0%	0%	<b>1%</b>
	Կենսաթոշակային ֆոնդը ձեռ- վորվելու է աշխատավարձից տոկոսների եւ պետության ներդրման հաշվին	0%	1%	0%	0%	0%	0%	<b>2%</b>
	Թոշակառուներից գումար է գանձվելու	1%	3%	1%	2%	2%	1%	<b>9%</b>
	Կենսաթոշակային ֆոնդը գումար կուտակելու համակարգ է	0%	0%	0%	0%	0%	0%	<b>1%</b>
	Զգիտեն, թե ինչ է կուտակային կենսաթոշակային համակարգը	0%	2%	1%	1%	0%	1%	<b>5%</b>
	<b>Ընդամենը</b>	<b>3%</b>	<b>13%</b>	<b>5%</b>	<b>9%</b>	<b>6%</b>	<b>4%</b>	<b>40%</b>

## 7.2 ՀԱՎԵԼՎԱԾ 2

### Վերլուծություն 1.

Կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգին միանալու պատրաստակամությունը **տարբեր եկամուտների մակարդակ ունեցող տնտեսությունների ներկայացուցիչների շրջանում**

Հարցման մասնակիցների տնտեսությունների բաշխվածքն ըստ եկամուտների մակարդակի ներկայացված է Բաժին 1.2.2.3-ում («Հարցման մասնակիցների ընտրության եղանակը եւ նրանց բնութագիրը», էջ 10):

**!** Այստեղ ներկայացված է այս հարցին պատասխանած հանրության խմբի (ընդհանուրի 40%) բաշխվածքը, ովքեր լսել են կուտակային կենսաթոշակային համակարգի մասին (տես Նկար 15, էջ 36):

**Աղյուսակ 38 - Կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգին միանալու պատրաստակամությունը տարբեր եկամուտների մակարդակ ունեցող տնտեսությունների ներկայացուցիչների շրջանում**

		Կմիանա՞ք արդյոք կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգին			
		Այո	Ոչ	Զգիտեն	Ընդամենը
<b>Որքա՞ն է կազմում Ձեր տնտեսության (ընտանիքի) ամսական եկամուտը</b>	Մինչեւ 30,000 դրամ	1%	2%	-	<b>3%</b>
	30,001 - 75,000 դրամ	4%	7%	0%	<b>12%</b>
	75,001 - 120,000 դրամ	4%	7%	1%	<b>11%</b>
	120,001 - 240,000 դրամ	4%	4%	0%	<b>8%</b>
	240,001 - 360,000 դրամ	1%	1%	0%	<b>3%</b>
	360,000 դրամից ավել	1%	0%	0%	<b>1%</b>
	Դժվարացել են պատասխանել	0%	1%	0%	<b>2%</b>
	<b>Ընդամենը</b>	<b>15%</b>	<b>23%</b>	<b>1%</b>	<b>40%</b>

**Վերլուծություն 2.**

Կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգին միանալու պատրաստակամությունը այն մարդկանց շրջանում, ովքեր **արտահայտվել են կենսաթոշակի հետ կապված հարցերով իրենց մտահոգությունների մասին**

Վերջիններիս մասով վերլուծությունը ներկայացվել է Բաժին 2.2.2-ում («Հանրության կողմից կենսաթոշակի կարելորության ընկալումը», էջ 26), Նկար 8-ում (էջ 26) եւ Աղյուսակ 17-ում (էջ 27):

**! Այս հարցի վիճակագրությունը ներկայացվում է ամբողջ հանրության (100%) պատասխանների հիման վրա:**

Աղյուսակ 39 - Կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգին միանալու պատրաստակամությունը այն մարդկանց շրջանում, ովքեր արտահայտվել են կենսաթոշակի հետ կապված հարցերով իրենց մտահոգությունների մասին

		Կմիանա՞ք արդյոք կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգին			
		Այո	Ոչ	Զգիտեն	Ընդամենը
<b>Մտահոգված եք արդյոք կենսաթոշակի հետ կապված հարցերով</b>	Շատ են մտահոգված	21%	37%	2%	<b>61%</b>
	Բավականին մտահոգված են	8%	8%	1%	<b>17%</b>
	Քիչ են մտահոգված	2%	2%	0%	<b>4%</b>
	Մտահոգված չեն	8%	9%	1%	<b>18%</b>
	Դժվարացել են պատասխանել	0%	0%	0%	<b>1%</b>
	<b>Ընդամենը</b>	<b>39%</b>	<b>57%</b>	<b>4%</b>	<b>100%</b>

**Վերլուծություն 3.**

Կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգին միանալու պատրաստակամությունը այն մարդկանց շրջանում, ովքեր **մտահոգված են կենսաթոշակի հետ կապված հարցերով**

Վերջիններիս մասով վերլուծությունը ներկայացվել է Բաժին 2.2.2-ում («Հանրության կողմից կենսաթոշակի կարելորության ընկալումը», էջ 26), Նկար 8-ում (էջ 26) եւ Աղյուսակ 17-ում (էջ 27): Կենսաթոշակի հետ կապված հարցերով մտահոգված մարդիկ կազմում են հանրության 82%-ը:

**! Այստեղ ներկայացված է այս հարցին պատասխանած հանրության խմբի (ընդհանուրի 82%) բաշխվածքը, ովքեր իրենց մտահոգությունն են հայտնել կենսաթոշակի հետ կապված հարցերով:**

Աղյուսակ 40 - Կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգին միանալու պատրաստակամությունը այն մարդկանց շրջանում, ովքեր մտահոգված են կենսաթոշակի հետ կապված հարցերով		Կմիանա՞ք արդյոք կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգին			
		Այո	Ոչ	Չգիտեմ	Ընդամենը
<b>Որո՞նք են Ձեր մտահոգությունների պատճառները *</b>	Կենսաթոշակը հանդիսանում է (հանդիսանալու է) ընտանիքի եկամտի միակ աղբյուրը	5%	15%	1%	<b>21%</b>
	Կենսաթոշակը հանդիսանում է (հանդիսանալու է) ընտանիքի եկամտի հավելյալ աղբյուրը	5%	7%	1%	<b>13%</b>
	Անհանգստացած են ծերության տարիներին իրենց կյուբական ապահովվածության համար	14%	14%	1%	<b>29%</b>
	Մտահոգված են կենսաթոշակի փոքր չափերով	8%	15%	1%	<b>23%</b>
	Կենսաթոշակը պետության եւ հասարակության համար շատ կարելոր խնդիր է	5%	5%	0%	<b>11%</b>
	Դժվարացել են պատասխանել	1%	1%	0%	<b>1%</b>
	<b>Ընդամենը</b>	<b>31%</b>	<b>47%</b>	<b>3%</b>	<b>82%</b>

(\* ) - Հարցվածների 82%-ը կազմող հարցման մասնակիցները նշել են կենսաթոշակի հետ կապված հարցերով իրենց մտահոգվածության մի քանի (միջինը՝ 1.21) պատճառներ: Այդ պատճառով կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգին միանալուն «Այո», «Ոչ» կամ «Չգիտեմ» պատասխաններ տված հարցման մասնակիցների մասնաբաժինները գումարելիս ստացվում է ոչ թե 82%, այլ 98%: 82%-ից ավել մասը հարցման մասնակիցների այն քանակն է, որոնք նշել են կենսաթոշակի հետ կապված հարցերով իրենց մտահոգվածության մեկից ավելի պատճառներ:

**Վերլուծություն 4.**

Կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգին միանալու պատրաստակամությունը այն մարդկանց շրջանում, ովքեր արտահայտվել են կենսաթոշակային տարիքում իրենց նյութական ապահովվածության պատասխանատուի վերաբերյալ

Կենսաթոշակային տարիքում իրենց նյութական ապահովվածության պատասխանատուի վերաբերյալ հանրության կարծիքը վերլուծվել է Բաժին 2.2.3-ում («Հանրության պատկերացումները կենսաթոշակային տարիքում իրենց նյութական ապահովվածության պատասխանատուի վերաբերյալ», էջ 28), Նկար 9-ում (էջ 28) եւ Նկար 10-ում (էջ 29):

**! Այս հարցի վիճակագրությունը ներկայացվում է ամբողջ հանրության (100%) պատասխանների հիման վրա:**

Աղյուսակ 41 - Կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգին միանալու պատրաստակամությունը այն մարդկանց շրջանում, ովքեր արտահայտվել են կենսաթոշակային տարիքում իրենց նյութական ապահովվածության պատասխանատուի վերաբերյալ

		Կմիանա՞ք արդյոք կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգին			
		Այո	Ոչ	Չգիտեմ	Ընդամենը
Ո՞վ է պատասխանատու կենսաթոշակի անցնելուց հետո Ձեր նյութական ապահովվածության համար *	Ես ինքս	12%	18%	1%	31%
	Ընտանիքիս անդամները	13%	17%	2%	32%
	Հարազատներս	1%	2%	0%	3%
	Պետությունը	21%	31%	2%	53%
	Դժվարացել են պատասխանել	1%	1%	0%	2%
	<b>Ընդամենը</b>	<b>39%</b>	<b>57%</b>	<b>4%</b>	<b>100%</b>

(\*) - Բոլոր հարցման մասնակիցները (100%) միասին նշել են կենսաթոշակային տարիքում իրենց նյութական ապահովվածության պատասխանատուի մի քանի անուններ (միջինը՝ 1.22) պատճառներ: Այդ պատճառով կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգին միանալուն «Այո», «Ոչ» կամ «Չգիտեմ» պատասխաններ տված հարցման մասնակիցների մասնաբաժինները գումարելիս ստացվում է ոչ թե 100%, այլ 122%: 100%-ից ավել մասը հարցման մասնակիցների այն քանակն է, որոնք նշել են կենսաթոշակային տարիքում իրենց նյութական ապահովվածության պատասխանատուի մի քանի անուններ:

**Վերլուծություն 5.**

Կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգին միանալու պատրաստակամությունը այն մարդկանց շրջանում, ովքեր **կողմ են կամ դեմ են կենսաթոշակային համակարգի բարեփոխումներին**

Վերջիններին քանակը ներկայացվել է Բաժին 3.2.1-ում («Հանրության վերաբերմունքը կենսաթոշակային բարեփոխումների նկատմամբ», էջ 46), Նկար 22-ում (էջ 47) և Աղյուսակ 25-ում (էջ 48): Կենսաթոշակային բարեփոխումներին եւ կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրմանը կողմ կամ դեմ արտահայտված հանրությունը կազմում է ընդհանուրի 40%-ը: Մնացածը (60%) այս հարցի շուրջ չեն արտահայտվել, քանի որ ընդհանրապես չեն լսել կուտակային կենսաթոշակային համակարգի մասին:

**!** Այստեղ ներկայացված է այս հարցին պատասխանած հանրության խմբի (ընդհանուրի 40%) բաշխվածքը, ովքեր լսել են կուտակային կենսաթոշակային համակարգի մասին (տես Նկար 15, էջ 36):

**Աղյուսակ 42 - Կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգին միանալու պատրաստակամությունը այն մարդկանց շրջանում, ովքեր կողմ են կամ դեմ են կենսաթոշակային համակարգի բարեփոխումներին**

		Կմիանա՞ք արդյոք կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգին			
		Այո	Ոչ	Չգիտեն	Ընդամենը
<b>Ինչպե՞ս եք վերաբերվում կենսաթոշակային համակարգի սպասվող բարեփոխումներին</b>	Միանշանակ կողմ են	2%	1%	0%	<b>3%</b>
	Ավելի շուտ կողմ են	8%	5%	1%	<b>13%</b>
	Միեւնույն է / անտարբեր են	1%	3%	0%	<b>5%</b>
	Ավելի շուտ դեմ են	2%	7%	0%	<b>9%</b>
	Միանշանակ դեմ են	1%	5%	0%	<b>6%</b>
	Դժվարացել են պատասխանել	1%	3%	0%	<b>4%</b>
	<b>Ընդամենը</b>	<b>15%</b>	<b>23%</b>	<b>1%</b>	<b>40%</b>